ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(**79**-րդ տարի) **Թիվ-10** (1704) — *Հոկտեմբեր 2025*

Հոկտեմբեր 2025

Բովանդակություն

«Դրոշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1 - Առաջնորդող

Փորձություն (էջ 1-3)

2 - Աշխարհաքաղաքական

Վահե Դավթյան
Տրանսպորտային պատերազմի նոր փուլը. «Թրամփի երթուղին» որպես աշխարհաքաղաքական մրցակցության գործիք (էջ 4-11)

Մելինե Անումյան
Թյուրքական պետությունների կազմակերպության միասնական այբուբենը որպես քաղաքական գործոն (էջ 12-14)

3 - Քաղաքական

Աբրահամ Գասպարյան
Արմեն Սարգսյան
Ի՞նչ հարված ստացավ Հայաստանը Արցախը հանձնելուց հետո: Ի՞նչպես շտկել իրավիճակը (էջ 15-21)

4 - Իրավաքաղաքական

Արմեն Մարուքյան
Նախիջևանը համաթուրանական և գլոբալ ծրագրերի «խաչմերուկում» (էջ 22-28)

5 - Հասարակություն

Անժելա Հարությունյան
Գործարքային գիտելիք, հացով պայմանավորված հայրենիք. վտանգավոր ուղերձ ապագայի սերնդին (էջ 29-31)

6 - Հայ Դատ

Մարիամ Հովսեփյան
Հայոց ցեղասպանությունը վերապրողների պատմություններն ու հուշերը Կ.Պոլսի հայկական թերթերի էջերում (1918-1919 թթ.) (էջ 32-38)

7 - Պատմության լուսարձակ

Անի Մելքոնյան
Եկեղեցական կառույցի կազմալուծումը. բռնաճնշումները հոգևորականության նկատմամբ (էջ 39-42)

8 - Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Չհամաձայնելու անխախտելի իրաւունքը (էջ 43-44)

Փորձություն

Հայաստանը, ըստ էության, դանդաղ մտնում է նախընտրական պայքարի հորձանուտի մեջ: Եթե գործընթացները զարգանան նախանշված ժամանակացույցով, ապա այդ ընտրությունները տեղի կունենան 2026-ի հունիսի սկզբին: Չպետք է բացառել, սակայն, որ ընտրության արդյունքների հարցում խոր մտահոգություններ ունեցող Փաշինյանը ցանկացած պահի կարող է գործի դնել, պայմանականորեն ասած, պլան Բ-ն, անակնկալ հայտարարելով արտահերթ ընտրությունների մասին: Նշենք նաև, որ նախընտրական այս գործընթացի մեկնարկը վաղուց տվել է ինքը՝ Փաշինյանը, իր «Կրթությունը նորաձև է» հանդիպումների շարքով և այլ միջոցառումներով: Հենց այս իրողություններն էլ համապատասխան ազդակ հանդիսացան քաղաքական տարբեր ուժերի ու միավորումների համար: Մյուս կողմից հանրային դաշտում հասունացած է ազգային-պետական կյանքը գահավիժման ընթացքից դուրս բերելու, անվտանգության և զարգացման կայուն հուն տեղափոխելու ընդհանրական պահանջը:

2025 թ. հոկտեմբերի 12-ին Երևանում տեղի ունեցավ «Մեր ձևով» շարժման հաշվետու ժողովը: Շարժումը, գործարար Սամվել Կարապետյանին, Հայոց եկեղեցու հոգևոր հայրերին և մյուս քաղբանտարկյալներին ազատ արձակելու պահանջին զուգահեռ, կարևորում է իշխանափոխության անհրաժեշտությունը՝ ներկայացնելով համընդհանուր ճգնաժամի հաղթահարման և «վերականգնման» իր ծրագրերը:

Որպես հաջորդող քայլ, շարժումը նույն օրակարգով հանրահավաք և երթ իրականացրեց հոկտեմբերի 18-ին: Ի՞նչ սկզբնական եզրակացությունների կարելի է հանգել այս շարժման, ինչպես նաև Հայաստանում սկիզբ առած համանման գործընթացների առիթով:

Նախ արձանագրենք, որ 2018 թվականին Փաշինյանի գլխավորած շարժումից հետո «Մեր ձևովը» երիտասարդության առաջնորդությամբ հրապարակ իջած հաջորդ շարժումն է: Իր մի շարք առավելությունների հետ միասին այն նաև կարող է ընկալվել որպես շահեկան այլընտրանք նախորդի նկատմամբ:

Նոր շարժման գլխավոր առավելությունը նրա ազգային բնույթն է, հավատարմությունը ազգային արժեքներին, ինչը վերջինիս ընդգծված տարբերությունն է ազգայինը ոտնակոխ անող փաշինյանական ապազգային, հախուռն ու հակաժողովրդավարական ուժի նկատմամբ:

«Մեր ձևովը» հրապարակ է իջել ծրագրով, որի առանցքում տնտեսության վերականգնումն է և սոցիալական խնդիրների լուծումը: Սրա կողքին երիտասարդները խոսում են նաև ազգային հարցերի՝ այդ թվում Արցախի թեմայով: Ընդ որում շարժման մասնակիցները խուսափում են կոշտ ու հայհոյախառն բառապաշարից, առհասարակ երկրորդական տեղ են հատկացնում Փաշինյանի գլխավորած «փոքր խմբակին»: Հոկտեմբերի 18-ի հանրահավաքի ժամանակ շարժման ղեկավար Նարեկ Կարապետյանն ասաց. «Մեր պայքարը ոչ թե մեղավորների, այլ աղքատության դեմ է»:

Երիտասարդ ուժի հանգիստ, հավասարակշռված ու ինքնավստահ պահվածքը դրականորեն է ազդում հանրության վրա, որը հոգնել ու զզվել է նիկոլական ամենօրյա հիստերիկայից, ազգին սև ու սպիտակի բաժանելու պառակտիչ գործելաձևից:

Այս շարժման բարոյական կայուն հիմքն է ապահովում այն հանգամանքը, որ նրա միլիարդատեր առաջ-

նորդը ոչ միայն Հայաստանում թալանչիական բիզնես ծավալած օլիգարխ չէ, այլև օտարության մեջ վաստակած գումարներից հսկայական ներդրումներ է կատարել Հայաստանի և Արցախի տնտեսությունների մեջ՝ կրթական, առողջապահական և այլ ոլորտներում: Ի դեպ, Նիկոլ Փաշինյանը լրջորեն մտածելու պատճառ ունի, թե որքանով շահեց ու որքանով կորցրեց անհեթեթ պատճառաբանությամբ հարգված գործարարին ձերբակալելով: Արդյո՞ք իր չհաշվարկված քայլը պատճառ չդարձավ, որ Սամվել Կարապետյանի անունով առաջնորդվող շարժումը կարճ ժամանակում մեծ տարածում գտներ երկրով մեկ, ձևավորելով համակիրների աճող մեծ բանակ:

Մենք տեսնում ենք, որ ներքաղաքական կյանքում տեղի են ունենում այլ համախմբումներ ևս, որոնք վկայում են ազգային հիմքի վրա քաղաքական դաշտի բարեփոխման մասին: Կարծես թե դանդաղորեն տիրապետող է դառնում այն բանի գիտակցումը, որ հայրենիքի համար ճակատագրական պահին անհրաժեշտ է մի կողմ թողնել ներքին տարակարծությունները և հանուն երկրի ու պետականության փրկության գործել միասնաբար: Մեր նշած «միասնաբար»-ը գերիշխող նպատակի առանցքի շուրջ միավորվելը և համադրված գործելն է, ինչը, բնավ, չի նշանակում մեխանիկական միավորում: Նման միավորումը կլիներ արհեստական և նվազ արդյունավետ, սակայն եթե ազգային ճակատի ուժերը որոշեն գաղափարաքաղաքական իրենց ծրագրերի ուղեցույցին համապատասխան գնալ սեփական ճանապարհով, միաժամանակ միասին պայքարել գալիք ընտրությունների արդար անցկացման համար, բացառել միմյանց դեմ գործելը և պայմանավորվել իրենցից որևէ մեկի հաղթանակի հետ հաշվի նստելու մասին, սա կարող է հանգեցնել նաև հանրային դաշտի համերաշխությանը և կրավորական զանգվածներին կմղի մասնակից դառնալու երկրի վերածնության գործին:

Իշխանության վերջին շրջանի անհավասարակշիռ քայլերը, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու դեմ ձեռնարկված չեկիստական բնույթի սրբապիղծ ոտնձգությունները վկայում են, որ կառավարողները շատ լավ տեսնում են հանրային դաշտի ակտիվացումները և քաղաքական կյանքի խմորումները ու հասկանում են, որ անկասելիորեն նվազում է իրենց սոցիալական հենարանը: Այս ամենի դեմ Նիկոլ Փաշինյանի գլխավորած իշխանության պատկերացրած հակամիջոցներն են պառակտիչ և վարկաբեկիչ քայլերը, ինչպես և իրավական խայտառակ հետապնդումները: Ասվածի ամենաակնառու փաստն այս օրերին եկեղեցու ներսում պառակտիչներից յուրայինների թիմ ձևավորելու ջանքն է, քրեական անհեթեթ ամբաստանությունները և դրանց հիման վրա իրականացվող ձերբակալությունները: Պետք է լավ ըմբռնել, որ նույն քանդիչ ու թունավոր ուղեղն է փորձում խառնշտորել ընդդիմադիր ազգային դաշտը, մեծացնել «հների» ու «նորերի» միջև կանգնեցված արհեստական անջրպետները: Պետք է լավ հասկանալ, որ Հայաստանը անսահմանափակ կադրային ներուժ չունի և զարգացման նախորդ շրջաններում կայացած, իրենց երկրին ու պետականությանը ծառայած աչքի ընկնող ուժերի և գործիչների մեկուսացումը, վարկաբեկումները և ձերբակալություններն ուղղակիորեն ծառայում են Նիկոլ Փաշինյանի առջև քաղաքական դաշտի ամայացմանը և նրա վերարտադրության հնարավորությունների մեծացմանը: Յոթ տարի Նիկոլ Փաշինյանը փորձեց այդ դաշտից դուրս մղել իր հակազգային քաղաքականության դեմ ընդդիմացող գործիչներին և ուժերին՝ դատապարտել ու մեկուսացնել, և եթե չկարողացավ, նշանակում է հիմքեր

չուներ: Բայց չունենալով նոր ասելիք և պայքարի նոր գործիքներ նա կրկին ու կրկին փորձելու է վարկաբեկել հանուն հայրենիքի և պետականության գործող ուժերին, դիմելու է ամենախայտառակ և ամենաանօրինական քայլերի: Նիկոլ Փաշինյանը սարսափում է իշխանությունը կորցնելու հեռանկարից և պատրաստ է ամեն ինչի՝ հուսալով, որ Արևմուտքը կպաշտպանի իր դրածոյին կամ, առնվազն, աչք կփակի նրա բոլոր ապօրինությունների և բռնությունների վրա: Փաշինյանն իրեն ծախում է արևմուտքին, որպես թե ռուսամետ ուժերի իշխանության գալը արգելակող պատվար և այդ «հերոսական առաքելության» դիմաց Արևմուտքից ու թուրքադրբեջանական տանդեմից աջակցություն է մուրում է իր վերարտադրության համար:

Ազգային վերածնության գաղափարի շուրջ համազգային բռունցքի ձևավորումն այն ուժը կդառնա, որը հոգեկան անհավասարակշիռ ղեկավարին կստիպի տասն անգամ մտածել ամեն մի հակաօրինական քայլից առաջ: Մեծ փորձության վերածվող համապետական ընտրությունների նախօրյակին ընդդիմադիր ուժերի հերթական քննությունը կդառնան նոյեմբերի 16-ին տեղի ունենալիք Վաղարշապատի ավագանու ընտրությունները: Գյումրու հաջող օրինակից հետո քաղաքական ուժերը կրկին պետք է փաստեն ընդհանուրի շահը մասնավոր հավակնություններից գերադասելու իրենց հասունությունը, անկեղծությունը և իրապես անկախ ուժ լինելը: Եթե նրանք արժանապատվորեն հաղթահարեն այս փորձությունը, դա կամրապնդի մեր հույսերը երկրի ընդհանուր վերափոխման հավանականության հարցում:

Հ.Գ

«Առաջնորդողը» պատրաստ էր հրապարակման, երբ ոստիկանական խունտայի միջոցով, հերթական շոուի բեմադրմամբ տեղի ունեցավ Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանի ձերբակալությունը: Մենք, ինչպես և ուրիշները, բազմիցս գրել էինք, որ Փաշինյանը չի հանդուրժի ընտրությունների շրջանում երկրի երկրորդ քաղաքի կառավարման ղեկի գտնվելն ընդդիմադիր գործչի ձեռքում: Սրա ամենաակնառու փաստարկը նույն ճակատագրին արժանացած այլ ընտրված ղեկավարների օրինակն է: Մյուս կողմից, Վաղարշապատի ավագանու ընտրությունների շեմին, սա յուրատեսակ նախազգուշացում է բոլոր նրանց, ովքեր հավակնում են մրցակցել Փաշինյանի թիմակից թեկնածուի հետ: Երկրի ղեկավարի անմիջական թելադրանքով կրկնվող ոստիկանական խունտայի բռնությունները, ձերբակալություններն ու կեսգիշերային դատավարությունները նպատակ ունեն նաև վերականգնելու հասարակության մեջ այն վախը, որը գոյություն ուներ Փաշինյանական բանդայի իշխանության գալուց հետո: Ամբողջովին ձախողված, երկիրը պարտությունների և կորուստների տարած ղեկավարը հասկանում է, որ ուռճացող հասարակական դժգոհության պայմաններում կանխատեսելի է գալիք ընտրություններում ժողովրդի բացարձակ մեծամասնության մասնակցությունը, ինչն իշխող ուժի համար կնշանակի միանշանակ պարտություն: Եթե վախ տարածելու ճանապարհով հնարավոր դառնա ընտրողների մեծ հատվածների մղել կրավորականության, Փաշինյանին կհաջողվի փոքր ընտրազանգվածի և ընտրակեղծարարության ճանապարհով ապահովել իր վերարտադրությունը: Փրփուրներից կառչողի հոգեբանությամբ նա այսօր կարծես ճիգեր է գործադրում, որպեսզի 22ից դուրս եկած Ձինը կրկին մտնի 22ի մեջ: Անշուշտ, սա փորձություն է ոչ միայն քաղաքական ուժերի և հանրության, այլև պետության և նրա ապագայի համար: Ինչպես ասվեց, այս փորձությունը կարելի է հաղթահարել բոլոր ազգային մտահոգություն ունեցողների միասնական կամքով, դեպի նպատակ տանող շիտակ ու հավասարակշռված ընթացքով: ■

Տրանսպորտային պատերազմի նոր փուլը. «Թրամփի երթուղին» որպես աշխարհաքաղաքական մրցակցության գործիք

Վահե Դավթյան
Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հարավային Կովկասում տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակման խնդիրը դարձել է տարածաշրջանի նոր աշխարհաքաղաքական ճարտարապետության ձևավորման առանցքային մարտահրավերներից մեկը՝ 2020 թ. 44-օրյա պատերազմի ավարտից հետո:

Գտնվելով միջազգային տրանսպորտային և լոգիստիկ խոշոր միջանցքների՝ **Հյուսիս–Հարավ** և **Արևելք–Արևմուտք** առանցքների խաչմերուկում՝ Հարավային Կովկասը ներկայացնում է ռազմավարական նշանակության աշխարհաքաղաքական տարածք, որն ակտիվորեն օգտագործվում է ինչպես տարածաշրջանային, այնպես էլ արտատարածաշրջանային դերակատարների կողմից՝ սեփական երկարաժամկետ ծրագրերն առաջ մղելու համար: Այս գործընթացները տարածվում են ոչ միայն տարածաշրջանի ներսում, այլև նրա սահմաններից դուրս՝ մասնավորապես Մերձավոր Արևելքում և Կենտրոնական Ասիայում:

Երկրորդ Արցախյան պատերազմի հետևանքով ստեղծվել են բարենպաստ պայմաններ այն տրանսպորտային և լոգիստիկ սցենարների իրագործման համար, որոնք տարբեր աշխարհաքաղաքական կենտրոնների կողմից մշակվում էին դեռևս ԽՍՀՄ փլուզումից ի վեր: Դրանցից հատկապես առանձնանում են նախաձեռնությունները, որոնք նպատակ ունեն ապահովել ցամաքային կապ Ադրբեջանի արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև: Ընդ որում, այս նախաձեռնությունը պետք է դիտարկել ոչ թե զուտ լոկալ կամ ներտարածաշրջանային զարգացման տեսանկյունից, այլև ավելի լայն՝ մեգառեգիոնալ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործընթացների համատեքստում:

Միևնույն ժամանակ, երկու հիմնարար տրանսպորտային ռազմավարությունների՝ **Հյուսիս–Հարավ** և **Արևելք–Արևմուտք** ուղղությունների շահառուների միջև աճող մրցակցությունը ձևավորում է էական խոչընդոտներ՝ Հայաստանի տարածքով անցնող միջանցքի ստեղծման ծրագրերի իրականացման համար: Այս երկու լոգիստիկ հարացույցերի բախումը, ըստ էության, արտահայտում է դրանց գլխավոր նախաձեռնողների ռազմավարական շահերի հակադրությունը՝ մի կողմից Թուրքիայի, Ադրբեջանի և մի շարք արևմտյան դերակատարների, մյուս կողմից՝ Ռուսաստանի, Իրանի և Հնդկաստանի միջև:

2020 թ. նոյեմբերի 10-ին Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների կողմից ստորագրված եռակողմ հայտարարությունը՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում ռազմական գործողությունների դադարեցմանը, դեռևս չի հանգեցրել շոշափելի առաջընթացի հաղորդակցությունների ապաշրջափակման գործում: Այս իներտությունը պայմանավորված է, առաջին հերթին, տարածաշրջանում աճող աշխարհաքաղաքական մրցակցությամբ: Այսպիսով, «Տրանսպորտային պատերազմ» ձևակերպումը, ըստ էության, ամենահստակ կերպով արտահայտում է Հարավային Կովկասում ընթացող գործընթացների բնույթը:

Միջանցքային անտագոնիզմ

Հարավային Կովկասում տրանսպորտային գործընթացների ամբողջական ըմբռնման համար անհրաժեշտ է դիտարկել երկու հակադիր տրանսպորտային ռազմավարությունները՝ **Հյուսիս–Հարավ** և **Արևելք–Արևմուտք** միջանցքները, որոնց մրցակցությունն ուղղակիորեն ձևավորում է տարածաշրջանային հաղորդակցությունների և ինտեգրացիայի հեռանկարները:

Հյուսիս–Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքը (ՄՏՄ) նախաձեռնվել է Մոսկվայի կողմից

2000-ականների սկզբին՝ նպատակ ունենալով ձևավորել բազմամոդալ տրանսպորտային ուղի, որը կկապի Հյուսիսային Եվրոպան և Ասիան հետևյալ երթուղով՝ Բալթյան տարածաշրջան – Կովկաս – Պարսից ծոց – Հնդկական օվկիանոս – Մումբայի նավահանգիստ: Միջանցքի ստեղծման միջկառավարական համաձայնագիրը ստորագրվել է Ռուսաստանի, Իրանի և Հնդկաստանի կողմից 2000 թ. սեպտեմբերի 12-ին՝ Սանկտ Պետերբուրգում կայացած Եվրասիական տրանսպորտային համաժողովի ընթացքում:

2002 թ. համաձայնագրի վավերացումից հետո կողմերի կառավարությունները ստորագրեցին արձանագրություն, որով միջանցքը պաշտոնապես հայտարարվեց գործող: Հետագայում նախաձեռնությանը միացան Բելառուսը, Ղազախստանը, Հայաստանը, Ադրբեջանը, Սիրիան և Օմանը:

Արևելք–Արևմուտք ռազմավարությունը ձևավորվեց որպես հակակշիռ Հյուսիս–Հարավ նախաձեռնությանը: Այն հաստատվեց Եվրոպական Միության հովանավորությամբ և հայտնի է **TRACECA** (Transport Corridor Europe–Caucasus–Asia) անվամբ: Ծրագրի նպատակն էր ապահովել բեռնափոխադրումներ Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանից դեպի Կենտրոնական Ասիա, Պարսից ծոց և Արևմտյան Եվրոպա՝ շրջանցելով Ռուսաստանի տրանսպորտային ենթակառուցվածքները, մասնավորապես՝ Անդրսիբիրյան երկաթուղին:

Արևելք–Արևմուտք ռազմավարության առաջին քայլերը ձեռնարկվեցին երկու հարավկովկասյան հանրապետությունների՝ Ադրբեջանի և Վրաստանի անմիջական մասնակցությամբ: 1996 թ. Ադրբեջանի, Վրաստանի, Ուզբեկստանի և Թուրքմենստանի ղեկավարները ստորագրեցին երկաթուղային փոխադրումները համակարգող և համատեղ բեռնափոխադրումները կարգավորող համաձայնագրեր: Հետագայում նախաձեռնությանը միացան Ղազախստանը, Ղրղզստանը, Ուկրաինան, Բելառուսը և Հայաստանը (վերջինս՝ հիմնականում հյուսիսից և հարավից տրանսպորտային շրջափակումների պայմաններում՝ կախված լինելով վրացական ենթակառուցվածքներից):

1998 թ. Բաքվում՝ ԵՄ-ի հովանավորությամբ, կայացավ «**Պատմական Մետաքսի ճանապարհի վերականգնում. Եվրոպա–Կովկաս–Ասիա**» միջազգային համաժողովը, որին մասնակցեցին 32 պետությունների և 13 միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Համաժողովի հիմնական արդյունքը եղավ Եվրոպա–Կովկաս–Ասիա միջանցքի զարգացման վերաբերյալ միջազգային տրանսպորտային հիմնական բազմակողմ համաձայնագրի ստորագրումը:

Արևելք–Արևմուտք միջանցքը սկսվում է Արևելյան Եվրոպայից (Բուլղարիա, Ռումինիա, Ուկրաինա), անցնում Սև ծովով՝ հասնելով վրացական նավահանգիստներին (Փոթի, Բաթում) և թուրքական Սամսունին ու Էնզելիին, ապա միանում Հարավային Կովկասի տրանսպորտային ցանցին: Այնտեղից միջանցքը շարունակվում է Կասպից ծովով՝ Բաքու–Ակտաու և Բաքու–Թուրքմենբաշի ուղղություններով՝ դեպի Կենտրոնական Ասիա:



Հյուսիս-Հարավ միջազգային միջանցք

Ժամանակի ընթացքում Արևելք–Արևմուտք միջանցքը ենթարկվեց կառուցվածքային դիվերսիֆիկացիայի՝ ձևավորելով ինքնուրույն նախաձեռնություններ, որոնցից ամենահայտնին «**Միջին միջանցքն**» է: 2022 թ. օգոստոսին Ուզբեկստանի, Ադրբեջանի և Թուրքիայի կողմից ստորագրված **Տաշքենդի հռչակագիրը** խթանում է Անդրկասպյան Արևելք–Արևմուտք–Միջին միջանցք հաղորդակցությունը, որը միացնում է Չինաստանը և Եվրոպան՝ անցնելով Կենտրոնական Ասիայով և Հարավային Կովկասով (հատկապես Բաքու–Թբիլիսի–Կարս երկաթուղային գծով)՝ TRACECA-ի շրջանակներում: Հռչակագրի 11-րդ հոդվածում ընդգծվում է այսպես կոչված «**Զանգեզուրյան միջանցքի**» բացման կարևորությունը՝ որպես միջազգային տրանսպորտային կապերի ամրապնդման միջոց:

Այսպիսով, տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակման հարցը Հարավային Կովկասում պետք է դիտարկել ավելի լայն՝ Եվրասիական միջանցքային զարգացման և մեգառեգիոնալ լոգիստիկ ինտեգրման համատեքստում:

Չնայած բարձր տարանցիկ ներուժին՝ Հարավային Կովկասը շարունակում է գտնվել ենթակառուցվածքային անհավասար զարգացման պայմաններում՝ պայմանավորված բարդ աշխարհաքաղաքական մարտահրավերներով և չլուծված հակամարտություններով, որոնք խոչընդոտում են ինչպես տարածաշրջանային տրանսպորտային ինտեգրմանը, այնպես էլ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հավասարակշռված մասնակցությանը միջազգային հաղորդակցություններում:

Տարածաշրջանային տրանսպորտային կապերի խաթարման հիմնական պատճառներն են.

- Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը՝ Երևան–Ջուլֆա–Մեղրի–Մինջիվան–Բաքու երկաթուղային կապի դադարեցում,
- Վրաց-աբխազական հակամարտությունը՝ Սոչի–Սուխում–Թբիլիսի–Երևան երկաթուղային կապի դադարեցում,

Azov
Black Sea
KRASNODAR
NOVOROSSIYSK
GROZNY
MAKHACHKALA
AKTAU
GEORGIA
TBILISI
POTI
BATUMI
AZERBAIJAN
BAKU
TURKMENBASHI
Kara Bogaz Gol
Caspian Sea
SAMSUN
TRABZON
YEREVAN
ARMENIA
Sinop
Ordu
Giresun
Rize
Hopa
Kars
Erzurum
Sivas
Van
Tatvan
Malatya
Kayseri
Nakhichevan
Lenkoran
Sumgait
Yalama
Gandja
Kazan
Oktemberyan
Kafan
Sabiy
Ali-bayramly
Akstafa
Gardabani
Rustavi
Zestaponi
Kutaisi
Sukhumi
Gudauta
Tuapse
Sochi
Krasnodar
Stavropol
Georgievsk
Pyatigorsk
Kizlyar
Budennovsk
Zerkalnaya
Gelendzhik
Anapa
Yalta
Sevastopol
Feodosiya
Saki
Jankoy
Novorossiysk
Tabriz
Rasht
Bandar Anzali
Mosul
Erbil
Kirkuk
Baghdad
Basra
Kuwait
Dhahran
Doha
Abu Dhabi
Muscat
Dubai
Sharjah
Bandar Abbas
Bushehr
Abadan
Kharg Island
Bandar Lengeh
Jask
Chabahar
Gwadar
Karachi
Hormuz
Qeshm
Bandar Abbas
Muscat
Salalah
Aden
Mukalla
Socotra
Hadiyah
Jeddah
Rabigh
Yanbu
Al Wajh
Tabuk
Al Ula
Medina
Riyadh
Dammam
Ras Tanura
Jubail
Al Khafji
Kuwait
Umm Qasr
Basra
Al Faw
Khorramshahr
Bandar Mahshahr
Bandar Abbas
Chabahar
Gwadar
Karachi
Hormuz
Qeshm

Միջին միջանցք

ամրապնդումը Նախիջևանում, ինչպես նաև Թուրքիայի ելքի ապահովումը դեպի Կասպից ծով և Կենտրոնական Ասիա: Նման զարգացումն ակնհայտորեն հակասում է Ռուսաստանի և Իրանի ռազմավարական շահերին և որոշակի ռիսկեր է ստեղծում նաև Կենտրոնական Ասիայում Չինաստանի կողմից իրագործվող ռազմավարության համար:

Այսպիսով, «Զանգեզուրի միջանցք» հասկացությունը պետք է դիտարկվի ոչ թե որպես մեկ տարածաշրջանային ենթակառուցվածքային նախագիծ, այլ որպես բազմաշերտ աշխարհաքաղաքական կոնցեպտ, որն ունի ռազմավարական հետևանքներ ամբողջ Եվրասիական տրանսպորտային համակարգի համար:

«Թրամփի երթուղի». ռազմավարական նպատակներ և տնտեսական միֆեր

2025 թ. օգոստոսի 8-ին Միացյալ Նահանգները, Հայաստանն ու Ադրբեջանը ստորագրեցին համաձայնագիր, որով հիմք դրվեց **«Trump Route for Peace»** նախաձեռնությանը: Համաձայն փաստաթղթի՝ այն հատվածը, որն ադրբեջանական կողմը երկար ժամանակ առաջ էր մղում որպես այսպես կոչված **«Զանգեզուրյան միջանցք»**, վարձակալության է հանձնվում ԱՄՆ-ին՝ 99 տարով, և վերանվանվում է **«Trump Route for International Peace and Prosperity»**՝ «Թրամփի ուղի միջազգային խաղաղության և բարգավաճման համար»:

Թեև նախաձեռնությունը ներկայացվում է որպես Եվրոպա–Կովկաս–Ասիա առանցքով տրանսպորտային և լոգիստիկ կապերի ընդլայնման տնտեսական ծրագիր, դրա տնտեսական բաղադրիչը ակնհայտորեն երկրորդային բնույթ ունի: Իր բուն էությամբ այս նախագիծը պետք է դիտարկել որպես գործիք՝ ԱՄՆ-ի ռազմավարական ներկայությունն ամրապնդելու համար տարածաշրջանի լոգիստիկ և էներգետիկ ենթակառուցվածքներում:

«Թրամփի ուղու» տնտեսական իրագործելիությունը մնում է խիստ պայմանական՝ կախված մի շարք փոփոխական գործոններից: Ադրբեջանը ներկայումս չունի լիարժեք զարգացած տարանցիկ ենթակառուցվածք. առկա ուղիների ցանցը մասնատված է և դեռևս չի ապահովում զգալի տարանցիկ թողունակություն: Վերոնշյալ **«Միջին միջանցքը»** (Ղազախստան – Կասպից ծով – Բաքու) առանձնանում է բարդ լոգիստիկ շղթայով, որը ներառում է բազմաթիվ վերբեռնումներ և գծաչափի փոփոխություններ: Այս պայմաններում նախագիծը քիչ հավանական է, որ կկարողանա կարճաժամկետ հեռանկարում Հայաստանը վերածել կայուն լոգիստիկ հանգույցի, ինչպես դա փորձում են ներկայացնել Հայաստանի իշխանությունները:

Վաշինգտոնի համար «Թրամփի ուղին» ծառայում է մի քանի ռազմավարական նպատակների իրականացմանը՝

1. Չինաստանի զսպում և «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության ազդեցության սահմանափակում,
2. Ռուսաստան–Իրան ավանդական կապերի թուլացում և տարածաշրջանի առանցքային ենթակառուցվածքներում այլընտրանքային նախագծերի խթանում:

Այսպիսով, ծրագիրը դիտվում է ոչ թե որպես առևտրատնտեսական նախաձեռնություն, այլ որպես աշխարհաքաղաքական պլատֆորմ՝ Հարավային Կով-

«Զանգեզուրյան միջանցք» նախագիծ

կասում և առհասարակ Արևելյան Միջերկրածովյան–Կենտրոնական Ասիա առանցքում ուժային հավասարակշռությունը վերաձևելու նպատակով:

Նախագծի իրական արժեքը նրա ռազմավարական նշանակության մեջ է՝ որպես գործիք՝ ամրապնդելու ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական ազդեցությունը և վերաձևելու ուժերի հարաբերակցությունը Հարավային Կովկասում:

Հստակեցնենք այդ ռազմավարական նպատակները:

Նոր երթուղու ձևավորումը թույլ է տալիս ԱՄՆ-ին դիրքավորվելու Եվրոպա-Կովկաս-Ասիա լոգիստիկայում՝ վերահսկելով դրա ներքո իրականացվող հաղորդակցությունները, ներառյալ՝ ածխաջրածինների հոսքերը դեպի Եվրոպա: Եվրոպական էներգետիկ շուկայում ԱՄՆ-ի ուղիղ շահերին կանդրադառնանք մի փոքր ուշ:

Իր հերթին, Եվրոպա-Կովկաս-Ասիա առանցքում ԱՄՆ-ի ներկայությունն անհրաժեշտ է դիտարկել ամերիկյան ստրատեգների կողմից առաջ մղվող G2 աշխարհակարգային մոդելի ներքո: Վերջինս ենթադրում է միջազգային հարաբերությունների այնպիսի համակարգ, որը, ինչպես «Սառը պատերազմի» տարիներին, կունենա երկու բևեռ, սակայն այս անգամ ԽՍՀՄ-ի փոխարեն ԱՄՆ-ին հակակշռելու է Չինաստանը:

Եվ, քանի որ Չինաստանի աշխարհաքաղաքական առաջխաղացման հիմնական «կրող կոնստրուկցիան» «Գոտի և ճանապարհն» է, հասկանալի է, թե ինչու է Վաշինգտոնն այսքան շահագրգռված չինական նախաձեռնությանը մաս կազմող «Միջին միջանցքում» ներկայություն ապահովելու մեջ:

Ուստի, «Թրամփի երթուղու» տնտեսական նպատակադրումը խիստ կասկածելի է ու մերկապարանոց: Այն որևէ առումով չի կարող տարածաշրջանի առևտրային կապերի զարգացմանը նեցուկ ծառայել մի պարզ պատճառով. Պեկինը հնարավորինս խուսափելու է իր գեոռազմավարական հակառակորդի՝ Վաշինգտոնի կողմից վերահսկվող հաղորդակցական ուղով բեռնափոխադրումներ իրականացնել:

Հեռանկարում, ռուս-ուկրաինական հակամարտության լուծման պարագայում, կարող է նոր լիցք ստանալ Չինաստան-Ռուսաստան-Եվրոպա լոգիստիկան, որն այսօր էլ բավականին դրական դինամիկա է դրսևորում: Այսպես, 2024 թ. Չինաստան-Ղազախստան-Բելառուս-Եվրոպա երկաթուղային կապով բեռնափոխադրումները նախորդ տարվա համեմատ աճել են երկու անգամ՝ հասնելով 412 հազ. TEU (20-ֆուտանոց էկվիվալենտ):

«Թրամփի երթուղու» էներգետիկ չափումը

«Թրամփի երթուղին» ունի նաև շատ հստակ էներգետիկ արտահայտություն, ինչն անխուսափելիորեն հանգեցնելու է հայ-ռուսական ու հայ-իրանական էներգատրանսպորտային կապերի վերանայմանը:

Երկու դիտարկում՝

1. «Զանգեզուրյան/Թրամփի միջանցքը» ծառայելու է որպես գազի արտահանման երթուղի՝ «Անդրկասպյան գազամուղ» նախագծի ռեանիմացման հեռանկարով: «Միջանցքով» կարող է իրականացվել գազի մատակարարում Հայաստան՝ սցենար, որին արդեն մոտ 2 տարի է Հայաստանի իշխանությունները պատրաստում են հանրությանը՝ հայտարարելով Ադրբեջանից բնական գազի ներկրման պատրաստակամության մասին:

Ադրբեջանի գազային էքսպանսիայի սպասարկման համար վաղ թե ուշ կարող է բարձրացվել ռուսական «Գազպրոմին» պատկանող Հայաստանի գազատրանսպորտային համակարգի «պետականացման» հարցը: Միաժամանակ, մշուշոտ է դառնում նաև Իրան-Հայաստան գազամուղի ապագան: Վերջինիս շահագործումն ուղիղ հակասելու է Բաքվի գազային էքսպանսիայի ռազմավարությանը:

2. Հարվածի տակ է հայտնվում Հայաստանի էլեկտրաէներգետիկ համակարգը: Այստեղ առկա է մի քանի բաղադրիչ: Նախ՝ Բաքուն ու Անկարան բազմիցս են հայտարարել, որ «միջանցքը» ծառայելու է որպես էլեկտրաէներգիայի արտահանման երթուղի, որը կարող է ինտեգրվել նաև Հայաստանի էլեկտրաէներգետիկ համակարգին:

Փաստացի խոսքը Ադրբեջանից Հայաստան էլեկտրաէներգիայի մատակարարման մասին է, ինչը ռազմավարական առումով բացարձակ անհեթեթություն է՝ հաշվի առնելով Հայաստանում առկա էլեկտրաէներգետիկ հզորություններն ու արտադրական ներուժը:

Հենց այստեղ է, որ պետք է անդրադառնանք հարցի երկրորդ բաղադրիչին՝ ԱԷԿ-ին: Վերջինս, ավանդաբար գտնվելով թուրք-ադրբեջանական դիվանագիտական ու տեղեկատվական հարվածների ներքո, այսօր վերածվել է հայտարարված հայ-ամերիկյան էներգետիկ մերձեցման խոչընդոտի: Փաստացի Հայաստանում վերջին տարիներին առաջ մղվող ամերիկյան փորձարարական մոդուլային ռեակտորի նախագիծը կարող է առաջիկայում տրամաբանական հանգուցալուծում ստանալ՝ դուրս մղելով «Ռոսատոմը» Հայաստանի «խաղաղ ատոմի» ոլորտից: Դա, իր հերթին, կնշանակի Հայաստանի էներգետիկ ու, հետևաբար, արդյունաբերական պոտենցիալի վերջնական մսխում: «Հայաստանի էլեկտրական ցանցերի» շուրջ ծավալվող գործընթացները առավել քան տեղավորվում են այս ռազմավարության մեջ:

Էլեկտրաէներգետիկ այսպիսի ճարտարապետությունը թույլ կտա Բաքվին ու Անկարային վերջնականապես դուրս մղել Հայաստանը «Հյուսիս-Հարավ» էլեկտրաէներգետիկ միջանցքից (Իրան-Հայաստան-Վրաստան-Ռուսաստան)՝ վերածելով մեզ էլեկտրաէներգիայի սովորական նետտո-ներկրողի:

Ընդ որում, Ալիևը շարունակում է համոզել եվրոպացիներին, թե, այսպես կոչված «Զանգեզուրյան միջանցքը» կարող է օգտագործվել նաև էլեկտրաէներգիայի արտահանման համար: Վերջերս ադրբեջանական Գոբու քաղաքում նոր էլեկտրակայանի բացման արարողության ժամանակ Ալիևը հայտարարել է, որ Ադրբեջանը նախատեսում է, այսպես կոչված, «Զանգեզուրյան միջանցքով» նոր էլեկտրահաղորդման գիծ կառուցել դեպի Նախիջևան, ապա Թուրքիա, Իրան և Եվրոպա: Ըստ Ալիևի՝ միջանցքը դառնալու է էներգիայի արտահանման ուղի, որն ավելացնելու է Բաքվի աշխարհաքաղաքական կշիռը:

Էներգետիկ անվտանգության աճող ռիսկերի պայմաններում գտնվող ԵՄ-ի համար սա կարող է որոշակի հեռանկար ունենալ: Սա է պատճառը, որ Բրյուսելն ամեն կերպ փորձում է Հայաստանը ներգրավել Global Getaway նախաձեռնության մեջ[1]: Վերջինիս շրջանակներում Երևանին արդեն առաջարկվել են 2,5 մլրդ եվրո վարկային միջոցներ՝ երկրի տրանսպորտային ցանցն արդիականացնելու, իսկ իրականում՝ «Միջին միջանցքին» ինտեգրվելու հեռանկարով: Իսկ Հայաստանի ինտեգրումը «Միջին միջանցքին» ստեղծված իրավիճակում հնարավոր է բացառապես, այսպես կոչված, «Զանգեզուրյան միջանցքի» բացման պարագայում՝ որպես Արևելք-Արևմուտք միջազգային լոգիստիկ ռազմավարության մաս:

Նշենք նաև, որ Բաքվի համար էլեկտրաէներգիայի արտահանման ուղիների դիվերսիֆիկացումը նաև էներգետիկ անվտանգության ու կայունության խնդիր է: Բավական է նշել, որ 2025 թ. առաջին կիսամյակում Ադրբեջանն արտահանել է 36,8 մլն ԱՄՆ դոլարի էլեկտրաէներգիա, մինչդեռ 2024 թ. նույն ժամանակահատվածում արտահանված էլեկտրաէներգիայից ստացված եկամուտը կազմել է 51,1 մլն ԱՄՆ դոլար: Անկումը կազմել է 24,5%: Բաքվի համար սրանք խիստ մտահոգիչ ցուցանիշներ են, որոնք ամենևին չեն տեղավորվում ադրբեջանական արտաքին էներգետիկ նկրտումների մեջ:

Սյունիքով անցնող միջանցքի «արտապատվիրակումը» Վաշինգտոնին ունենալու է չափազանց ցածր տնտեսական ՕԳԳ: Գործարքի իմաստը ոչ թե լոգիստիկ զարգացումն է որպես այդպիսին, այլ Հայաստանի ինտեգրումը բարդ ու անարդյունավետ տրանսպորտային մի կոնստրուկցիայի, որը խարսխված է եվրասիական տարանցման մեջ Ադրբեջանի բացառիկ դերակատարման մասին միֆի վրա:

Ռուսաստան-Հնդկաստան և Չինաստան-Եվրոպա ուղղություններով Ադրբեջանի «հանգուցային» կարևորության մասին ստեղծված միֆն այսօր վերարտադրվում է նախանձելի հետևողականությամբ: Փաստացի լոգիստիկան ադապտացնում են առանձին աշխարհաքաղաքական նկրտումներին: Սակայն, իրական տվյալներն ուսումնասիրելիս, ակնհայտ է դառնում՝ այդ լոգիստիկ երթուղիները պարզեցնելու փոխարեն Բաքուն դրանք ավելի է բարդացնում:

Ադրբեջանը ոչ թե ռազմավարական կամուրջ է, այլ ֆրագմենտացիայի, մասնատման կետ: 2024 թ. Ադրբեջանի երկաթուղային ցանցով տարանցվել է ընդամենը 7,3 մլն տոննա բեռ, ինչը չի հասնում փոխադրումների ընդհանուր ծավալի 35%-ին: Հատկապես կարևոր է անդրադառնալ Հյուսիս-Հարավ միջանցքին, որի ադրբեջանական երթուղով 2024 թ. փոխադրվել է ընդամենը 814,000 տոննա բեռ: Սա Ադրբեջանի ընդհանուր տարանցիկ հոսքի ընդամենը 11%-ն է, ինչը վկայում է դրա աննշան դերի մասին նշյալ լոգիստիկայում:

Միևնույն ժամանակ, կան աշխարհագրորեն և առևտրային առումով կենսունակ այլընտրանքներ: Դրանցից մեկը Աստրախան/Կասպիյսկ-Անզալի երթուղին է, որը հասնում է մինչև Բանդար Աբբաս և/կամ Չաբահար նավահանգիստներ: Այն ապահովում

Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղի

է ուղիղ կապ առանց վերաբեռնումների՝ մոտ 25-30%-ով կրճատելով տրանսպորտային ծախսերը:

Ինչ վերաբերում է Եվրոպա-Կովկաս-Ասիա միջանցքին՝ Չինաստանից Եվրոպա՝ Ղազախստանի, Կասպից ծովի և Ադրբեջանի տարածքով, ապա դա խիստ մասնատված լոգիստիկ շղթա է՝ պայմանավորված մի քանի հանգամանքով. չին-ղազախական սահմանին երկաթուղագծերի փոփոխություն (Չինաստանում՝ 1455 մմ, Ղազախստանում ու, առհասարակ, հետխորհրդային տարածքում՝ 1520 մմ՝ «царская колея»), Ակտաուի նավահանգստի գերբեռնվածություն, ծովային առաքում Բաքու, նոր վերաբեռնում, ապա՝ Թուրքիայի հետ սահմանին կրկին երկաթուղու փոփոխություն: Հնարավոր է, Սյունիքով նախագծվող միջանցքով նույնպես կառուցվի նեղ երկաթուղի, ինչը մասամբ կնվազեցնի տրանսպորտային ծախսերը: Սակայն, ընդհանուր առմամբ, նման երթուղին ի վիճակի չէ մրցակցել նշված ավելի ճկուն այլընտրանքների հետ, հատկապես տրանսպորտային ծախսերի աճի և ենթակառուցվածքային անհամապատասխանությունների պայմաններում:

Միաժամանակ, «Միջին միջանցքի» բեռնափոխադրումների ծավալների թմբկահարվող աճը ևս չպետք է մոլորեցնի: Իրականում սա քանակական աճ է նախորդ աննշան բազայի ֆոնին, այլ ոչ թե որակական առաջընթաց:

Լոգիստիկ տեսանկյունից Ադրբեջանը չի պարզեցնում հաղորդակցությունները, այլ, հակառակը, մեծացնում է դրանց խոցելիությունը: Բոլոր օբյեկտիվ չափանիշներով Ադրբեջանը զիջում է՝ և՛ որպես Ռուսաստանի և Հնդկաստանի միջև տարանցիկ հանգույց, և՛ որպես Չինաստանից Եվրոպա տանող ճանապարհի կապող օղակ:

Ռուսաստանը և Իրանը շրջանցող այս անարդյունավետ տրանսպորտային սխեմաներին Հայաստանի ինտեգրումն ուղղված է ոչ թե տարածաշրջանային լոգիստիկայի զարգացմանը, այլ Երևանի աշխարհաքաղաքական վերադասավորմանը:

Եվ այս պայմաններում Սյունիքը վերածվում է ոչ միայն միջանցքի, այլև ռազմաքաղաքական լծակի՝ Հայաստանի համար դրանից բխող բոլոր գոյաբանական սպառնալիքներով:

Այսպիսով, ի՞նչ կարող է տալ «Զանգեզուրյան միջանցքի» վերահսկողությունը Վաշինգտոնին

- **Իրանի շրջափակում՝ վերջինիս գեոտնտեսական դիրքերի էական խարխլմամբ:**

Այսպես կոչված «Զանգեզուրյան միջանցքի» ձևավորումը լիովին տեղավորվում է Մեհենի հայտնի «անակոնդայի մեթոդի» մեջ:

Մասնավորապես՝ «Դավթի միջանցքի» ու «Բեն Գուրիոնի ջրանցքի» հետ մեկտեղ «Զանգեզուրյան»-ը պարալիզացնում է Իրանի տրանսպորտային համակարգը. «Դավթի միջանցքը» հարվածում է Իրանին արևմուտքից՝ ապահովելով Իսրայելի ելքը իրաքյան Քուրդիստան, «Բեն Գուրիոնի ջրանցքը» էապես նվազեցնում է Ծոցի երկրների, հատկապես Սաուդյան Արաբիայի կախվածությունն Իրանի կողմից փաստացի վերահսկվող Հորմուզի նեղուցից, «Զանգեզուրյան միջանցքը» խոչընդոտում է Ռուսաստան-Իրան-Հնդկաստան՝ Հյուսիս-Հարավ հաղորդակցությանը:

- **Չինաստանի հակակշռում՝ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության մաս հանդիսացող «Միջին միջանցքում» Վաշինգտոնի դիրքերի ապահովմամբ:**

Դրանով իսկ ամերիկյան deep state-ը երկու խնդիր է լուծում. ա) զսպում է չինական ազդեցության աճը Կենտրոնական ու Առաջավոր Ասիայում և բ) սեփական ներկայությունն ապահովում Եվրոպա-Կովկաս-Ասիա հաղորդակցության մեջ՝ սահմանափակելով ԵՄ գեոտնտեսական ինքնուրույնությունը, ինչը հատկապես կարևոր է ԵՄ էներգատրանսպորտային դիվերսիֆիկացման քաղաքականության համատեքստում: Այդ դիվերսիֆիկացման հետևանքով հեռանկարում կարող է տուժել հենց Վաշինգտոնը, որը փորձում է դիրքավորվել եվրոպական շուկայում որպես ածխաջրածինների առանցքային մատակարար:

- **Ռուսաստանի դուրսմղում՝ Հարավային Կովկասում հակառուսական առանցքի ձևավորման, Ռուսաստան-Իրան ռազմավարական կապի խզման, տարածաշրջանի կրիտիկական ենթակառուցվածքներից ռուսական գործոնի բացառման ճանապարհով:**

Հենց այս ռազմավարության ներքո էլ այսօր թիրախավորվում են Հայաստանում ռուսական կապիտալով աշխատող ձեռնարկությունները, օրակարգ բերվում էքսպերիմենտալ բնույթ կրող ամերիկյան մոդուլային միջուկային ռեակտորի նախագիծը, խմբագրվում հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը և այլն:

Այսպիսով, տնտեսական առումով «Թրամփի» «Զանգեզուրյան միջանցք» նախագծի հիմնավորումն առավել քան մերկապարանոց է: Փորձենք գնահատել այն որոշակի զուգահեռների միջոցով:

Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթուղու ցուցանիշները հարցականի տակ են դնում այսպես կոչված «Զանգեզուրյան միջանցքի» վերաբերյալ Ալիևի պնդումները: ԲԹԿ երկաթուղով 2025 թ. առաջին յոթ ամիսներին տեղափոխվել է 250 հազար տոննա բեռ: Տարվա վերջում այդ թիվը, ըստ կանխատեսումների, կարող է հասնել առավելագույնը 500 հազարի: Եվ դա 6.5 մլն տոննա թողունակության պարագայում:

Այս ֆոնին խիստ վիճարկելի են Իլհամ Ալիևի՝ այսպես կոչված, «Զանգեզուրյան միջանցքի» վերաբերյալ գնահատականները: Վերջերս կայացած աղմկահարույց մեդիաֆորումին նա հայտարարել էր, որ հնարավոր է միջանցքով տարեկան մինչև 15 մլն տոննա բեռափոխադրում իրականացնել:

Էքստրապոլյացիայի մեթոդի կիրառումը ցույց է տալիս՝ ԲԹԿ օրինակը կարևոր է հենց այն պատճառով, որ շահագործվում է համեմատաբար կայուն ու կանխատեսելի միջավայրում: Այդուհանդերձ, թուրք-ադրբեջանական փոխադրումների ծավալն այս ուղղությամբ, մեղմ ասած, չի արդարացնում տարիներ շարունակ հնչեցվող սպասելիքները:

Հանգում ենք հետևյալ եզրակացությանը՝ Հայաստանով նախագծվող միջանցքի նպատակը տնտեսական կապերի դիվերսիֆիկացումը չէ: Եթե հարցը դիտարկվեր առևտրային կապերի ու կոմերցիոն բեռնափոխադրումների շրջանակում, ապա Անկարան և Բաքուն կհամաձայնեին Թեհրանի առաջարկած «Արաքսի միջանցքի» շուրջ համագործակցությանը: Թեհրանը ներկայում բաց է նման ձևաչափի քննարկման համար՝ նաև տարանցման որոշակի արտոնյալ պայմանների տրամադրման մասով:

Եզրակացություն

Հարավային Կովկասում ընթացող տրանսպորտային վերաձևումները վերածվել են գլոբալ ազդեցության մրցակցության նոր դաշտի, որտեղ փոխկապակցվում են տնտեսական նախաձեռնությունները և ռազմավարական վերահսկողության մեխանիզմները: Այս համատեքստում «Թրամփի երթուղի» նախագիծը ոչ միայն ենթակառուցվածքային ծրագիր է, այլև աշխարհաքաղաքական խորհրդանիշ՝ արտացոլելով ԱՄՆ-ի փորձը՝ ամրապնդելու իր ներկայությունը տարածաշրջանի հաղորդակցային և էներգետիկ քարտեզում: Չնայած նախագծի տնտեսական իրագործելիությունը մնում է վիճարկելի, դրա ռազմավարական նշանակությունը ակնհայտ է. այն նպատակ ունի սահմանափակել Ռուսաստանի և Իրանի ավանդական ազդեցությունը, ինչպես նաև չեզոքացնել Չինաստանի նախաձեռնած «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի լոգիստիկ գերակայությունը: Որպես հետևանք Հարավային Կովկասը վերածվում է տրանսպորտային պատերազմների հանգույցի, որտեղ յուրաքանչյուր երթուղի վեր է ածվում ազդեցության գործիքի:

Հայաստանի համար այս գործընթացը միաժամանակ պարունակում է և՛ ռիսկեր, և՛ հնարավորություններ: Տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակումը կարող է նպաստել երկրի տնտեսական ինտեգրմանը և տարածաշրջանային կապերի վերականգնմանը, սակայն առանց ռազմավարական հաշվարկների և արտաքին ճնշումներից զերծ քաղաքականության այն կարող է հանգեցնել ինքնիշխանության սահմանափակման: Այդ իսկ պատճառով Հայաստանի առաջնահերթ խնդիրն է մշակել բազմավեկտոր, հավասարակշռված լոգիստիկ և էներգետիկ ռազմավարություն, որը կապահովի ոչ թե պարզապես հաղորդակցություն, այլ՝ ինքնուրույն ռազմավարական կապակցվածություն՝ սեփական շահերի հիման վրա:

Հղում

1. 2021 թ. Եվրոպական հանձնաժողովը նախաձեռնեց **«Global Gateway»** ծրագիրը՝ որպես նոր եվրոպական ռազմավարություն, որի նպատակն է խթանել խելացի, մաքուր և անվտանգ կապերը թվային, էներգետիկ և տրանսպորտային ոլորտներում՝ միաժամանակ ամրապնդելով առողջապահական, կրթական և գիտահետազոտական համակարգերը ողջ աշխարհում: Ծրագրի իրականացման համար մոբիլիզացվել է 306 մլրդ եվրո:

Թյուրքական պետությունների կազմակերպության միասնական այբուբենը որպես քաղաքական գործոն

Մելինե Անումյան
Թուրքագետ, պատմական գիտությունների թեկնածու

ԽՍՀՄ-ի փլուզմամբ ոգևորված՝ Թուրքիայի կառավարությունը նախկին խորհրդային թյուրքախոս պետությունները միավորելու նպատակով դեռևս 1992 թ. ստեղծել էր Թյուրքական համագործակցության և զարգացման գործակալությունը:

Թյուրքական լեզվախմբին պատկանող լեզուներով հաղորդակցվող պետությունների միջև համագործակցություն ենթադրող սույն կառույցը հիմք հանդիսացավ հետագայում՝ 2009 թ., ստեղծված Թյուրքական խորհրդի կամ Թյուրքական լեզուներով խոսող երկրների համագործակցության խորհրդի համար:

2021 թ. նոյեմբերին Ստամբուլում տեղի ունեցած գագաթնաժողովի շրջանակում այս կառույցը Թուրքիայի ներկայիս նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ջանքերով վերանվանվեց Թյուրքական պետությունների կազմակերպության:

Ուշագրավ է, որ թյուրքախոս ժողովուրդների համար միասնական այբուբեն կիրառելու գաղափարը ծնվել էր շատ ավելի վաղ և առաջին անգամ առաջարկվել դեռևս 1920-ական թվականներին: Այսպես, 1926 թ. Բաքվում գումարված Առաջին թյուրքագիտական կոնգրեսում առաջարկ էր եղել, լատինական այբուբենը հիմք ընդունելով, մի համընդհանուր լեզու զարգացնել թյուրքական ժողովուրդների համար:

2012 թ. Աստանայում հիմնադրված Թյուրքական ակադեմիայի հանձնաժողովը 2024 թ. սեպտեմբերի 9-11-ը Բաքվում կայացած հանդիպմանը հաստատել է թյուրքական միասնական այբուբենի մասին հայտարարության տեքստը, ըստ որի՝ Թյուրքական ակադեմիայի գլխավորած հանձնաժողովն ընդունել է 34 տառից բաղկացած լատինական այբուբենի առաջարկը: Ի դեպ՝ նշենք, որ թեև ժամանակակից թուրքերենի համար 1928 թ. ի վեր կիրառվում է լատինական այբուբենը, սակայն ոչ բոլոր թյուրքական ժողովուրդներն էին անցել լատինական այբուբենին: Նրանց մի մասը դեռ շարունակում էր օգտագործել կյուրեղագիրը կամ արաբական այբուբենը:

Անցյալ տարվա սեպտեմբերին Բաքվում ընդունված համընդհանուր այբուբենը ստեղծվել է՝ հիմք ընդունելով թյուրքախոս պետությունների բոլոր լեզուների հնչյունային համակարգը: Ինչպես վերը նշեցինք, միասնական այբուբենը բաղկացած է 34 տառից: Ժամանակակից թուրքերենի այբուբենն ունի 29 տառը, այսինքն՝ համընդհանուր այբուբենում տեղ են գտել թուրքերենում չկիրառվող ևս 5 տառեր:

Թուրք մասնագետների դիտարկմամբ, միասնական այբուբենի ընդունումը կարևոր քայլ է թե՛ մշակութային, թե՛ տնտեսական և թե՛ աշխարհաքաղաքական առումներով: Նրանք նաև չեն թաքցնում, որ համընդհանուր այբուբենի կիրառումը նպաստելու է բոլոր թյուրքալեզու ժողովուրդների քաղաքական միասնականության ամրապնդմանը՝ վկայակոչելով պանթյուրքիզմի հիմնադիրներից Իսմայիլ Գասպրինսկիի հետևյալ խոսքը. «Միասնություն լեզվով, գաղափարով ու գործով»:

Թյուրքական աշխարհում ակնկալվում է, որ միասնական այբուբենի ընդունմանը հաջորդելիք քայլերից պետք է լինեն այդ տառերով դասագրքերի պատրաստումը և դրանց՝ ներառումը կրթական ծրագրերում:

Ի դեպ, թյուրքական միասնական այբուբենի և ընդհանուր լեզվի ստեղծման և տարածման գործում մեծ դեր է վերապահվում հատկապես կրթական

Թյուրքական համագործակցության և զարգացման գործակալության ներկայացուցիչները

ծրագրերին: Թյուրքական պետությունների կազմակերպության պաշտոնական կայքէջում հրապարակված տեղեկությունների համաձայն՝ 2013 թ. Էսքիշեհիրում հիմնված Թյուրքական համալսարանների միությունն իրականացնում է ուսանողների փոխանակման տարբեր ծրագրեր, որոնց շարքում ուշագրավ է հատկապես «Օրխոնյան փոխանակման ծրագիրը»: Այս ծրագիրն իր անվանումը ստացել է Մոնղոլիայի Օրխոն շրջանից, որը հայտնի է իր վիմագիր արձանագրություններով՝ որպես թյուրքերենի՝ մինչ օրս հայտնաբերված ամենավաղ գրավոր նմուշներ. դրանք թվագրվում են 8-րդ դարով:

Ինչպես իր հոդվածում նշում է Մարմարայի համալսարանի պրոֆեսոր Օքան Յեշիլոթը, «Կրթական քաղաքականության հիմքում ընկած է ընդհանուր մշակութային ժառանգության շեշտադրումը»: Հենց այդ նպատակով Թյուրքական ակադեմիայի հանձնաժողովի ջանքերով հրատարակվել են «Ընդհանուր թյուրքական պատմություն», «Ընդհանուր թյուրք գրականություն» և «Ընդհանուր թյուրքական աշխարհագրություն» դասագրքերը:

Սակայն, ինչպես դա հաստատում են նաև թուրք քաղաքական գործիչները, միասնական լեզվի և այբուբենի ստեղծման և տարածման իրական նպատակները քաղաքական են: Բնականաբար՝ Թուրքիայի պանթուրանական նկրտումների համար ոգևորիչ ազդակ էր դարձել Արցախյան երկրորդ պատերազմում Ադրբեջանի հաղթանակը, որին մեծապես նպաստել էր ինքը՝ Թուրքիան: Այդ պատերազմից հետո, վերջին տարիներին նկատելի է, որ Թուրքիան ավելի մեծ ջանքեր է գործադրում պանթյուրքիզմը Կենտրոնական Ասիայի երկրներում տարածելու և ամրապնդելու ուղղությամբ:

Այսպես, օրինակ, թուրք քաղաքական գործիչներից Օմեր Քոջամանն իր հոդվածում նշում է, որ թյուրքական ժողովուրդների միջև հաստատված մշակութային կապերն ու ընդհանուր արժեքները միավորել են իրենց և, ըստ էության, դրել միասնականության հիմքը, սակայն այլևս պետք է մտածել մշակութային ձեռքբերումները պրագմատիկ քաղաքական և տնտեսական նվաճումների վերածելու մասին»:

Օմեր Քոջամանը, որպես նման քաղաքական «հաջողության» օրինակ, մատնանշում է արցախյան պատերազմում թուրք-ադրբեջանական տանդեմի հաղթանակը. «Այսպես, օրինակ, Ղարաբաղում ձեռք բերված հաղթանակն այդ պատմական քաղաքական մերձեցման ամենաբացահայտ արդյունքն է: Ադրբեջանի և Թուրքիայի միջև ամուր կապերի՝ ռազմի դաշտում արտացոլման շնորհիվ 30 տարվա գրավմանը վերջ տված հանրապետության նախագահ Իլհամ Ալիևի առաջնորդությամբ ադրբեջանական բանակը մի այնպիսի հաջողություն ունեցավ, որը կարող է օրինակ ծառայել ամբողջ թյուրքական աշխարհին: Իհարկե, 44-օրյա պատերազմի ժամանակ Թյուրքական պետությունների կազմակերպությանը հաջողվել էր դիվանագիտորեն արտահայտել բոլոր թյուրքական պետությունների զգայնությունն այդ հարցի վերաբերյալ: Այլևս հարկ է, որ «Մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսն արագ կերպով փոխակերպենք «Մեկ ազգ, 7 պետություն» նշանաբանի»:

Թյուրքական խորհուրդը

Նույն շեշտադրումներն էին արվել նաև 44-օրյա պատերազմից մեկ տարի անց՝ 2021 թ. հոկտեմբերին Թուրքիայի Հանրապետության նախագահականի կողմից Անկարայում կազմակերպված Թյուրքական խորհրդի մեդիա ֆորումի ընթացքում: «Որպես թյուրքական աշխարհ՝ պատկերացնել ապագան» խորագրով նիստը համակարգող NTV հեռուստաընկերության արտաքին հարաբերությունների և միջազգային լուրերի պատասխանատու Ահմեդ Յեշիլթեփեն շեշտել էր, որ այլևս պետք է ավելի կոնկրետ և ավելի հաստատուն քայլեր ձեռնարկվեն՝ նշելով. «Մեկ տարի առաջ Ղարաբաղի գրավմանը վերջ դրած Ադրբեջանի արդար դատից բխող պահանջների մասին համաշխարհային հասարակայնությանը համատեղ հրապարակումներ ներկայացնելու հարցում մեր փոխըմբռնումը ցույց տվեց, թե իրականում ինչեր կարող է հաջողել թյուրքական աշխարհը՝ միասնական լինելու դեպքում: Մենք հաղթեցինք ոչ միայն մարտի, այլ նաև հաղորդակցման դաշտում: Տեսանք, որ եթե հաղորդակցման ոլորտում ևս միասնականություն լինի, ապա ավելի լավ կկարողանանք աշխարհին ներկայացնել մեր արդար դատը, օրինական իրավունքներն ու պահանջները»:

Ադրբեջանի պետական լրատվական գործակալության՝ AZERTAC-ի նախագահ Ասլան Ասլանովն իր հերթին նշելով, թե իրենց համար, որպես «ընդհանուր պատմություն, քաղաքակրթություն, կրոն և լեզու ունեցող պետություններ և ազգեր», ապագա տանող ուղիները հենց այստեղ են հատվում, հավելել է. «Այսօր աշխարհում ականատես ենք թյուրքերի հանդեպ թշնամությանը և իսլամոֆոբիայի: Եթե այդ ամենին միասին պատասխան տանք, ապա ոչ մի ուժ այլևս չի կարողանա մեր առջև կանգնել: Ղարաբաղյան հաղթանակը ևս դրա վառ օրինակն է: Ադրբեջանի և Թուրքիայի միջև եղբայրությունը թյուրքական աշխարհի միավորման ամենակարևոր օրինակներից մեկն է: Մեր պետության նախագահը, երբ մասնակցել է մի ժողովի, որտեղ Թուրքիայի ներկայացուցիչը ներկա չի գտնվել, ասել է. «Թեև Թուրքիան ներկա չէ, բայց ե՛ս եմ այստեղ»: Որտեղ Թուրքիան բացակա է, Ադրբեջանն է ներկա և հակառակը»:

Ենթադրվում է, որ միասնական թյուրքական այբուբենը կիրառելու են Թուրքիան, Ադրբեջանը, այսպես կոչված՝ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ուզբեկստանը, Թուրքմենստանը և Հունգարիան:

Համընդհանուր թյուրքական այբուբենի ստեղծումն ու միասնական թյուրքերեն լեզվի զարգացումը կարևոր դերակատարում ունեն թյուրքական պետությունների, գլխավորապես Թուրքիայի պանթուրանական նկրտումներում: Վերջին տարիներին՝ հատկապես 44-օրյա պատերազմից և Արցախի կորստից հետո այս գործոնները պարտադրում են ՀՀ-ի և համայն հայության զգոնությունը համաթուրանական գործընթացների նկատմամբ:

Ինչ հարված ստացավ Հայաստանը Արցախը հանձնելուց հետո: Ինչպես շտկել իրավիճակը

Աբրահամ Գասպարյան
Քաղաքական գիտությունների թեկնածու,
«Զենեսիս Արմենիա» ուղեղային կենտրոն/
հիմնադրամի տնօրեն

Արմեն Սարգսյան
Պատմաբան

Ներածություն

Արցախը հայության ազգային ինքնության բաղկացուցիչն է՝ որպես հայրենական պայքարի խորհրդանիշ: Արցախի կորուստը բորբոքեց հայկական ինքնության ճգնաժամ՝ ձևավորելով արմատական անվստահություն պետության անվտանգային ու գաղափարաբանական դերակատարման, միջազգային իրավունքի կառուցակարգերի գործառնության նկատմամբ և հող նախապատրաստեց ներհայկական օրակարգային ու քաղաքական համախմբման քայքայման համար: Ազգային աշխարհաքաղաքական ինքնագիտակցության վերականգնումը ենթադրում է գաղափարախոսական էական վերանայում՝ կարճաժամկետ հատվածում «Արցախը որպես արժեք» պահելով պատմական հիշողության, կրթական և մշակութային դաշտերում, իսկ միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում՝ Արցախ հավաքական վերադարձի իրավունքն իրացնելու և ինքնիշխանության վերականգնման նպատակով: Արցախի կորստով Հարավային Կովկասում խարխլվեց ուժերի հավասարակշռությունն ու անվտանգային փխրուն համակարգը: ՀՀ-ն կորցրեց ռազմավարական բուֆերային գոտին, ինչի հետևանքով Սյունիք-Գեղարքունիք գիծը դարձավ առաջնագիծ, հայկական բանակը զրկվեց ռազմավարական խորքից, պաշտպանական բնագծերից և տարածաշրջանային կշռից, ռուս խաղաղապահների ձախողումն ապացուցեց անվտանգության համակարգի կախվածության վտանգը մեկ կենտրոնից, ՀՀ-ն ներքաշվեց ներպետական անկայունության ու քաղաքական համակարգի ճգնաժամի մեջ, հասարակությունը բաժանվեց ոչ թե գաղափարական, այլ հոգեբանական ճամբարների՝ «հաշտվողների» ու «պայքարողների», աճեց ազգային օրակարգի նկատմամբ անտարբերությունը, ինչը թույլ տվեց իշխանությանը մանիպուլացնելու ազգային օրակարգը: Պետությունը դարձավ Թուրքիա-Ադրբեջան տանդեմի գեոպոլիտիկ առաջնահերթությունները սպասարկող, արձագանքող և ոչ նախաձեռնող, թուլացան ՀՀ տրանսպորտային ու լոգիստիկ դիրքերը, որովհետև կորսվեց Արցախով անցնող վերահսկողությունը, իսկ Սյունիքի նկատմամբ ճնշումը դարձավ աշխարհաքաղաքական շանտաժի գործիք, տնտեսական ներդրումային միջավայրը վատթարացավ անորոշության և անվտանգային ռիսկերի պատճառով: Սույն հոդվածում քննարկում ենք ազգային վերակազմավորման ծրագրերում Արցախի դերն ու նշանակությունը, հավաքական վերադարձի՝ տունդարձի, հնարավորություններն ու միջազգային բարենպաստ պայմաններից օգտվելու պատեհությունը, ինչը կարելի է դիտարկել Հայաստանը տարածաշրջանում չնահանջող, ուժային ռեսուրս կուտակող և տարածող գործոն դառնալու համատեքստում:

1. Տարածաշրջանային իրադրությունը հետպատերազմյան Արցախի իրադարձությունների լույսի ներքո

Արցախը դարեր շարունակ եղել է և՛ հայկական պետականության ազգային ինքնութենական քաղաքականության մշակման ու առաջմղման առանցքային կենտրոններից մեկը, և՛ ռազմավարական նշանակության տարածք, հատկապես՝ 18-րդ դարավերջից, Կովկասում ռազմավարական հավասարակշռումների համակարգում:

Ստեփանակերտ. 1988

Միջազգային հարաբերությունների համակարգի և կառուցվածքի, գործընթացների շարժառիթների, դերակատարների շահերի ճշգրիտ և անկողմնակալ գնահատումը իրական քաղաքականության՝ ռեալպոլիտիկի համատեքստն օբյեկտիվորեն ընկալելու նախապայմաններից է:

ՀՀ անկախության հռչակմանը հաջորդած 3 տասնամյակի ընթացքում Արցախի միջազգային սուբյեկտայնության մակարդակի բարձրացմանն ուղղված համազգային քաղաքական ու լոբբիստական ջանքերի անհաջողությունը, Անկախության հռչակագրում ամրագրված դրույթների անշեղ իրականացման անկարողությունը, ազգային գաղափարախոսության դավանաբանական հիմնադրույթները որպես պետական քաղաքականության գործիքակազմ չորդեգրելը, պետության և սփյուռքի ուժային ռեսուրսի հետևողական կուտակման, դիվերսիֆիկացման և կիրառման հարցում անսկզբունքայնությունը, ցավոք, հանգեցրին ոչ միայն Արցախի միջազգային կարգավիճակի ամրագրման խնդրի հետաձգմանը, այլև տարածաշրջանի անվտանգային ճարտարապետության՝ ստատուս քվոյի փոփոխմանն ուղղված՝ Ադրբեջանի պատերազմական քաղաքականության վերակենդանացման, ժողովուրդների իրավահավասարության և ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման արգելափակման: Այսուհանդերձ, պատերազմով Արցախը, Ադրբեջանին բռնակցելուց հետո էլ, շարունակում է հայ քաղաքական մտքի ու ռազմավարության համար ունենալ աշխարհաքաղաքական, ռազմաքաղաքական, քաղաքակրթական և տարածաշրջանային նշանակություն՝ ռեգիոնալ երկարատև կայունության, արդար և համապարփակ խաղաղության հաստատման, հարավկովկասյան անվտանգային և աշխարհատնտեսական նոր ճարտարապետության հավասարակշռումներն ապահովելու գործում:

Հարավկովկասյան տարածաշրջանում երկարատև կայունության, միջազգայնորեն երաշխավորված, կանխատեսելի, վերահսկելի և հուսադրող խաղաղության տեսլականը, ռեգիոնալ տրանսպորտային ուղիների և հաղորդակցությունների ապաշրջափակումից, ինչպես նաև տնտեսական, էներգետիկ մեգածրագրերի իրականացման խոստումնալից հեռանկարից բացի, չի կարող շրջանցել՝ Ադրբեջանի պատերազմական հանցագործության և ՀՀ իշխանության անպատասխանատու քաղաքականության պատճառով հայրենազրկված արցախցիների հավաքական վերադարձի՝ միջազգայնորեն ամրագրված իրավունքը: Այս իրավունքի իրացումը մի շարք ոլորտներում ենթադրում է հայկական պետական և ոչ պետական համակարգերի քաղաքական օրակարգերի գաղափարախոսական, ռազմավարական և մարտավարական էական վերանայումներ, մասնավորապես՝ հայկական պետության կենսական՝ ռազմավարական շահերի պաշտպանության համապարփակ համակարգի ներդրման տեսանկյունից:

Արդ, օկուպանտ պետության՝ Ադրբեջանի, նրա ռազմավարական հովանավոր՝ Թուրքիայի, ՀՀ, ռեգիոնալ և միջազգային ազդեցիկ և շահառու դերակատարների համար Արցախը շարունակում է ունենալ ռազմավարական նշանակություն, որովհետև՝

1. Արցախը Կովկասի էներգետիկ և տրանսպորտային ուղիների կարևոր խաչմերուկ է և լուրջ դերակատարություն ունի միջազգային տնտեսական գործակցության և հաղորդակցության ուղիների, Սյունիքի և Իրանի սահմանների հավասարակշռության վրա: Կարևոր է ընդգծել, որ անկախ գեոպոլիտիկ հետաքրքրությունների և միջնաժամկետ շահերի համադրման իրողությունից, ռազմավարական երկարաժամկետ շահերի համատեքստում, տարածաշրջանային ուժային կենտրոնների՝ Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի շահերը, հիմնականում բախվում են հենց Արցախի տարածքի ռեսուրսային նշանակության շուրջ,
2. Արցախը ՀՀ-ի՝ որպես միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտի, կայացման գլխավոր ազդակն էր և 1990 թ. Անկախության հռչակագրի գաղափարաբանական լոկոմոտիվը: Արցախը հայ ժողովրդի ազգային դիմադրության, ինքնության կարևորագույն խորհրդանիշներից է, իսկ նրա բացակայությունը սպառնալիք ՀՀ ինքնիշխանության, տարածքային ամբողջության և համապարփակ անվտանգության համար,
3. Արցախի հակամարտության ռազմական փուլի առերևույթ ավարտը դեռևս չի բացառում հակամարտության բանակցային փուլի վերաբեռնավորման օբյեկտիվ հնարավորությունը, ինչը կարող է պայմանավորված լինել՝ համաշխարհային անվտանգային նոր ձևավորվող ճարտարապետության համատեքստում դրական բազմաբևեռության հրամայականով, ռազմաանվտանգային համագործակցության նոր ձևաչափերի և կոալիցիաների ձևավորմամբ պայմանավորված ռազմավարական և աշխարհաքաղաքական օրակարգերով, ՀՀ իրարահաջորդ իշխանությունների արտաքին քաղաքականության դոկտրինալ փոփոխություններով և միջազգային ու տարածաշրջանային շահագրգիռ կողմերի դիվանագիտական ու ռազմատնտեսա-

կան օրակարգերի փոխակերպումներով: Հարավային Կովկասում երկարատև և կայուն խաղաղության տեսլականը չի կարող հուսալի համարվել, եթե հենվում է բացառապես հաղորդակցությունների ապաշրջափակման քաղաքականության և պետությունների սահմանների անձեռնմխելիության սկզբունքի վրա՝ անտեսելով ազգերի իրավահավասարության և ինքնորոշման բնական իրավունքը:

2020 թ. 44-օրյա պատերազմին հաջորդած ժամանակահատվածում, Արցախում ռուսական խաղաղապահ մանդատի գործառնության վիճարկելի անարդյունավետությունը հիմնականում պայմանավորված էր՝ Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում Թուրքիայի և հավաքական Արևմուտքի դերակատարման զգալի մեծացմամբ, Իրանի նկատմամբ համակարգային ճնշումների ավելացմամբ, քաղաքական Շիիզմի ռազմավարական ազդեցության թուլացման քաղաքականությամբ: Արցախի աշխարհաքաղաքական դերի ստվերումն էլ ավելի ընդգծվեց, Ռուսաստան-Ուկրաինա ռազմագործողությունների համատեքստում, Հարավային Կովկասում հակառուսաստանյան ճակատ չբացելու՝ Մոսկվայի և ՀՀ իշխանությունների ոչ միարժեք ռազմադիվանագիտական մոտեցումների սինքրոնացմամբ: Ադրբեջանի միակողմանի քայլով 2022 թ. դեկտեմբեր–2023 թ. սեպտեմբերին արգելափակվեց Բերձորի միջանցքը, հակառակ միջազգային տարբեր կազմակերպությունների և ուժերի դատապարտող կոչերին՝ դադարեցնելու խաղաղ բնակչության դեմ բռնաճնշումները, ինչն իր հերթին չհանգեցրեց կոնկրետ լուծումների և տարածաշրջանային կայունությունը շարունակեց խարխլվել:

Ադրբեջանը, տեսնելով միջազգային հանրության ոչ գործուն պահվածքը, 2023 թ. սեպտեմբերի 19-20-ը լայնածավալ պատերազմ վերսկսեց Արցախի դեմ՝ թիկունքին ունենալով Թուրքիայի, Պակիստանի, Իսրայելի և վարձկանների աջակցությունը, ՀՀ իշխանության՝ Արցախի անվտանգային երաշխավորի դերից հրաժարվելու խոստումն ու գործնական դրսևորումները:

Այսուհանդերձ, չհասնելով ռազմական լուրջ հաջողությունների՝ Ադրբեջանը որոշեց հայրենազրկել 120 հազար արցախցու՝ հետպատերազմյան տարածքային վերահսկողությունը տարածելով արդեն Արցախի ամբողջ տարածքի վրա:

2. Արցախի տնտեսությունը և նրա ազդեցությունը ՀՀ տնտեսական անվտանգության վրա:

Մինչև 2020 թ. Արցախի տնտեսությունը հետևյալ հիմնական ճյուղերի վրա էր հենված՝ գյուղատնտեսություն, փոքր և միջին արդյունաբերություն, սննդի վերամշակում, տարբեր ծառայություններ, հանքարդյունաբերություն, էներգետիկ զարգացած համակարգ և շուկայական կապեր Հայաստանի հետ:

Փաստ է, որ տնտեսական անվտանգությունը համալիր միջոցառումների ամբողջական իրականացում

է, որն Արցախում ավելի լուրջ քաղաքականության պետք է վերածվեր զարգացման ավելի արագ տեմպեր ապահովելու համար, քանզի այն տնտեսության զարգացման կարևորագույն բաղադրիչն է:

Ցավոք, անկախության տարիներին ՀՀ և ԱՀ միջև տնտեսական միասնական կուռ համակարգ չստեղծվեց, այլ պարզապես գոյություն ունեին առևտուր և տնտեսական կապեր Արցախի և ՀՀ միջև, որոնք էլ գերազանցապես սահմանափակվում էին Երևանով: Չկային նաև ՀՀ տնտեսական օղակների մասնաճյուղեր Արցախում, որոշ բանկային համակարգերից բացի: Սակայն, այս ամենով հանդերձ, Արցախի նշանակությունը ՀՀ-ի համար տնտեսական անվտանգության առումով շատ մեծ էր և շարունակում էր աստիճանաբար մեծանալ: Հետևաբար Արցախի կորուստը լուրջ ազդեցություն ունի նաև ՀՀ տնտեսական կառուցվածքի և տնտեսական անվտանգության վրա:

Այսպես, մինչև 2020 թ. Արցախի տնտեսությունն ուներ որոշակի ինքնաբավություն: Ինչպես նշեցինք, Արցախն ուներ զարգացող գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն, էներգետիկ մեծ ներուժ: Ցավոք, այսօր այդ ամենը կորսված է:

Չնայած Արցախի տնտեսությունը շատ մեծ չի եղել, բայց 2019 թ. 337 միլիարդ դրամի համախառն ներքին արդյունք է ունեցել: Ուներ պետությանը հարիր իր ինքնաբավությունը. մոտ 150.000 բնակչությամբ Արցախի տնտեսության կառուցվածքը՝ արդյունաբերությունը, առանձնապես հանքարդյունաբերությունը, տնտեսության համամասնության մեջ 29-30 տոկոս էին կազմում, իսկ գյուղատնտեսությունը՝ 10-13 տոկոս: Արցախը պարենային անվտանգության առումով շատ մեծ նշանակություն ուներ ՀՀ-ի համար: ՀՀ և Արցախի Հանրապետության հացահատիկի տարեկան սպառումը եղել է մոտ 1 մլն տոննա, իսկ Արցախն արտադրել է շուրջ 100-120 հազար տոննա, ՀՀ-ն՝ 200-220 հազար տոննա, մնացածը ներմուծել ենք: Արցախի կորստով՝ միայն հացահատիկի արտադրության բնագավառում, ունենք արդեն 100-120 հազար տոննա պակասորդ: Էներգետիկայի ոլորտում Արցախն ինքնաբավություն է ունեցել էլեկտրաէներգիայի առումով, և ՀՀ-ն 2016-20 թթ. հոսանք է ներկրել Արցախից, որը կազմում էր

220 միլիոն կիլովատ/ժամ էլեկտրաէներգիա: Արցախն ունեցել է 37 հիդրէլեկտրակայան:

Արցախն ուներ ջրային մեծ պաշարներ, որոնք գերակշռում էին Քարվաճառի և Մարտակերտի շրջաններում: Քարվաճառի շրջանի ջրային պաշարները մեծ նշանակություն ունեին նաև Սևանա լճի ավազանի համար: Ադրբեջանցիները նպատակ են դրել ջրային ռեսուրսներից զրկելը դարձնել Հայաստանի վախճանի սկիզբը՝ փոխելով նաև Քարվաճառի մի շարք գետերի հունը: Հետաքրքիր է, որ վերջերս Էրդողանը հայտարարել է, որ ապագան պայքարն է ջրային ռեսուրսների համար: Այո, Քարվաճառը առանձնահատուկ ռազմավարական նշանակություն ուներ ՀՀ-ի համար:

Շատ կարևոր էր նաև Արաքս գետի ջրային պաշարների օգտագործումը հարավային շրջանի վերաբնակեցման և գյուղատնտեսության զարգացման համար, մասնավորապես հացահատիկի արտադրության, նռան և խաղողի այգիների հիմնման համար, որի գործընթացն արդեն սկսվել էր:

Առանձնացնենք հատկապես Իրանի հետ համատեղ պայմանավորվածությամբ Քաշաթաղի հարավային շրջանում ջրամբարի կառուցումը, որն առանձնապես Սյունիքի մարզի համար գյուղատնտեսական մթերքների և ձկնեղենի արտահանման նոր աղբյուր կծառայեր:

Ի դեպ, Արցախի Հանրապետությունը մոտ երեք անգամ ավելի երկար սահման ուներ Իրանի հետ, քան ՀՀ-ն:

Չմոռանանք նաև նշել, որ Արցախն ուներ դեռևս չշահագործված հսկա քարածխային պաշարներ:

Արցախում ստեղծված էին նաև ավելի բարենպաստ պայմաններ ներդրումների համար: Օրինակ, եթե զուգահեռներ անցկացնենք ՀՀ-ի հետ, Արցախում հարկային քաղաքականությունն ավելի նպաստավոր էր արտաքին ներդրումների համար:

Արցախի կորուստը, տնտեսականից բացի, լուրջ հարված էր համահայկական միասնականությանը, ազդեցիկ գործոն ՀՀ-ի առանց այդ էլ պառակտված հասարակության ավելի մեծ պառակտման հարցում, ինչպես նաև սփյուռք-Հայաստան հարաբերությունների խոր անդունդի ստեղծման համար, առանձնապես եթե հաշվի առնենք այն, որ ՀՀ իշխանության կողմից փորձ կատարվեց ժխտել Հայոց ցեղասպանությունը, այդ թվում նաև՝ Արցախում կատարված ցեղասպանությունը: Արցախի հարցը հանվեց ՀՀ իշխանության օրակարգից: Հետևաբար, այս ամենը նորից ունենալու համար առաջնահերթ է Արցախի վերադարձի հարցը:

3. Արցախ վերադարձի ռազմավարություն

Արցախ վերադարձը շատ բարդ խնդիր է, և դրա իրականացման համար պետք է ճիշտ ռազմավարություն և մարտավարություն մշակել՝ ստեղծելով համապատասխան մեխանիզմներ: Արցախի հարցով երեք մակարդակում ունենք լուրջ աշխատանքներ՝

ա. ներհայկական,

բ. ներհայաստանյան, որի վերաբերյալ իշխանության մոտեցումները ոչ միայն չեն համընկնում ներհայկականի հետ, այլև հակադիր են,

գ. արտաքին ճակատում, որտեղ իր առաքելությունն է իրականացնում Հայ դատի համակարգը:

Գտնում ենք, որ Արցախ վերադարձի ռազմավարության ամենահիմնական պայմաններն են.

- պետք է առաջնորդվել արցախցիների հավաքական վերադարձի գաղափարով: Շեշտենք, որ ովքեր այս գաղափարին դեմ են՝ նրանք դեմ են և՛ հավաքական մտքին, և՛ համահայկական միասնությանը, և՛ հավաքական, համահայկական միասնական գործողություններին: Հավաքական վերադարձի մասին

խոսելիս իշխանությունը և նրա արբանյակները փորձում են մեղադրել մեզ զգացմունքային և ոչ պրագմատիկ լինելու մեջ, բայց իրականում հենց իրենք են, որ ոչ մի կապ չունեն պրագմատիզմի հետ:

- Ներհայկական տիրույթում պետք է լինի կոնսենսուս, ասինքն, հավաքական վերադարձի նախապայմաններից մեկը պետք է լինեն ոչ միայն արտաքին ճակատում կատարվելիք համահայկական աշխատանքները, այլև արցախցիների հավաքական վերադարձի հարցը: ՀՀ-ում անհրաժեշտ է, որ լինի քաղաքական ուժերի և ներհասարակական կոնսենսուս, իսկ դրա համար պետք է նախ հայտարարել, որ Արցախի հարցը չի փակվել, այնուհետև տարբեր ձևաչափերով քննարկումներ սկսել հավաքական վերադարձի թեմայով՝ խորհրդարանական, ներհասարակական, ակադեմիական, ուղեղային կենտրոնների հետ և այլն: Այդ նպատակով, որպես առաջին քայլ, համահայկական ուժերով՝ ի հեճուկս իշխանության, պետք է նպաստավոր պայմաններ ստեղծել արցախցիների համար ՀՀ-ից չարտագաղթելու համար:
- Պետք է հստակ գիտակցել, որ արցախցիների հավաքական վերադարձով կկանխվի նաև Երրորդ հանրապետության կործանման հավանականությունը, որի շեմին ենք: Արցախյան շարժումը եղել է այն շարժիչ ուժը, որի շնորհիվ Հայաստանն անկախացավ և ստեղծվեց Երրորդ հանրապետությունը, այլապես դեպքերը կարող էին այլ ընթացքով զարգանալ:
- Հույսը չկապել այլ ուժերի հետ՝ դիտելով նրանց որպես հիմնական գործոն, այլ հարաբերվել այդ ուժերի հետ՝ հաշվի առնելով մեր նպատակի ռազմավարությունը:
- Պետք է պայքարել ունենալու համար վերադարձի անվտանգության բարձր մակարդակ:
- Դաշնակիցների հետ հարաբերությունները պետք է վերականգնել, և ընդհանրապես ուղեցույց դարձնել այն, որ հնարավոր է որևէ ուժի հետ հարաբերություններն ուժեղացնել կամ թուլացնել, բայց նրան թշնամի չպիտի դարձնել:
- Միաժամանակ պետք է լրջորեն հաշվի նստել աշխարհաքաղաքական դերակատար ուժերի և նրանց քաղաքականության ամենօրյա փոփոխությունների հետ:
- Վերադարձի հիմնական պայմաններից է նաև այն, որ ՀՀ-ն պետք է ունենա այնպիսի իշխանություն, որը լինի դե յուրե և դե ֆակտո ՀՀ-ն լիիրավ տնօրինողը և ոչ թե ամբողջովին ղեկավարվի «դրսից»՝ այս կամ այն ուժերի կամ պետությունների կողմից:
- ՀՀ-ն պետք է ունենա այնպիսի բանակ, որն ի վիճակի է ետ մղելու սահմանների վրա տեղի ունեցող ցանկացած ագրեսիա մինչև սահմանագծում և սահմանազատում կատարելը, իսկ այն պետք է իրականացնել ազգային շահի ամրապնդման համար և ոչ թե կապիտուլյացիոն ձևով:
- Առավել կարևոր է Արցախի կարգավիճակի հարցը,

Արցախը պետք է ունենա առնվազն ժամանակավոր կարգավիճակ՝ առանց Ադրբեջանի ենթակայության:
- Արցախ վերադարձի հիմնական պայմաններից են Հայաստանի, Արցախի և ընդհանրապես հայ ժողովրդի ազգային շահերի ամբողջական գիտակցումը և իրացումը: Արցախցիների հավաքական վերադարձի հարցը պետք է դիտարկել որպես համահայկական թիվ մեկ խնդիր, որովհետև, եթե համահայկական կոնսենսուս չլինի, իսկ լինել նշանակում է ռեսուրսների, կամքի համադրում, ապա անիմաստ է խոսել մնացած բաների մասին, իսկ եթե ՀՀ-ն, որպես համայն հայության պետություն չլինի նախանձախնդիր, ապա այդ հարցը բարձրաձայնելով շատ ավելի նվազ կլինի ակնկալվող արդյունքը:
- Տակտիկական քայլերից առավել հրատապ է այն, որ Արցախ վերադառնալու հարցի շուրջ պետք է ստեղծել համահայկական մարմին, որը խթան կհանդիսանա նաև համահայկական վերածննդի ապահովման համար:
- Այսօրվա իշխանության քաղաքականության դեմ հանդես եկող բոլոր կուսակցությունները նախընտրական իրենց ծրագրերում պետք է ունենան Արցախի հարցի լուծման հատուկ բաժին:

Հետևաբար, վերադարձ կլինի, եթե առնվազն վերոհիշյալ պայմաններն ապահովվեն: Վերադարձի համար ներկա իրավիճակում մարտավարությունն առաջնային է, որովհետև ռազմավարությունն ավելի երկար ժամանակի համար է, և մենք իրավունք չունենք պահը կորցնելու: Միաժամանակ պետք է այդ իրավունքը վաստակել: Ուրեմն, անհրաժեշտ է ներքին վերադասավորումներ կատարել, առաջին պլան մղել արժեքային համակարգը և կասեցնել ազգայինի արժեզրկումը:

Արժեքային համակարգը միշտ ընդգծված է եղել արցախցիների մոտ, որովհետև արցախյան շարժումը սկսվել է հանուն արժեքների, հանուն ինքնության պայքարի: Արցախցին, իր ինքնությունը պահպանելու համար կռվել է ոչ միայն զենքով, այլև տնտեսությամբ, քաղաքականությամբ, մշակույթով: Սա նշանակում է, որ արցախցին համոզմունք և հավատ ունի, որ վերադառնալու է Արցախ, ապրելու է Արցախում և նո-

րից պաշտպանելու է հայոց հողը: Բայց Արցախյան շարժումը միշտ ուղեկցվել է համահայկական համախմբվածությամբ, և այսօր արցախցին հուսալքված է այդ համախմբման բացակայությունից:

Աքսիոմ է, որ Արցախը պարտվեց աշխարհաքաղաքական իրողությունների և ՀՀ ղեկավարության դիրքորոշման հետևանքով, ասել է թե ռազմաքաղաքական խարդավանքների պատճառով: Արժեքային համակարգը, մեղմ ասած, երկրորդ պլան մղող ՀՀ իշխանությունները, բնական է, չկարողացան կամ չուզեցին պաշտպանել Արցախը և՛ պատերազմում, և՛ դիվանագիտության ասպարեզում:

Հետևաբար կարելի է հանգել հետևյալ եզրակացության

Արցախի էջը փակված չէ, ավելին, 1918 թ. սկսած արցախյան շարժման 7-րդ հանգրվանի էջը նոր է բացվում՝ աշխարհաքաղաքական նոր իրավիճակում և ավելի խորը շերտերով:

Արցախի էջը կփակվի այն ժամանակ, երբ ինքներս այն փակենք:

Հետևաբար, ի՞նչ խնդիրներ են դրված, Հայաստանն ի՞նչ պատասխանատվություն պետք է ունենա և ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկի Արցախի հարցի կարգավորման ու երկարատև խաղաղության հաստատման համար: Առաջնահերթ խնդիրները հետևյալն են.

- Հայաստանը պետք է վերականգնի իր անվտանգության համակարգերը, որոնք հիմնականում զինված ուժերն են և արտաքին բաղադրիչը:
- Այսօր ՀՀ ղեկավարության համար առաջնահերթ խնդիր պետք է լիներ ԱՀ ռազմաքաղաքական ղեկավարության դատավարությունը, որովհետև վերոհիշյալ գործընթացով Ադրբեջանը նպատակ է դարձրել մեղադրելու ավելի շատ ՀՀ-ին: Հիշենք նաև, որ գերիների մեջ կան մարդիկ, ովքեր բանակցել են ԵԱՀԿ խմբի ներկայացուցիչների հետ, իսկ դա նշանակում է, որ դատավարությունը քաղաքական է և պետք է լուծվի քաղաքական ձևով: Ադրբեջանը, սակայն, փորձում է նրանց մեղադրել որպես ահաբեկիչների կամ քրեական հանցագործների: Այսինքն՝ ստացվում է, որ ԵԱՀԿ խմբի անդամները հանդիպել են քրեական տարրերի հետ: Որեմն, ՀՀ-ն պետք է քաղաքական գործընթացի կարգավորման նախաձեռնությունը վերցնի իր վրա:
- ՀՀ-ն պետք է միջազգային ասպարեզում առաջ քաշի արցախցիների իրավունքների պաշտպանության խնդիրը՝ արժանապատիվ, անվտանգ, հավաքական վերադարձի համար: Սա իրական ռեալության ճանապարհն է: Հատկանշական է, որ վերադարձի մասին խոսում են երեք համանախագահ երկրներն էլ, նույնիսկ Ադրբեջանը: Վերադարձի մասին միայն երկու պետություն չի խոսում՝ Հայաստանը և Թուրքիան, որոնք նաև Մինսկի խմբի ձևաչափի անդամ երկրներ են: Հետևաբար, ՀՀ իշխանությունները հավաքական վերադարձի հարցը պետք է ներառեն արտաքին քաղաքականության օրակարգ, բայց ոչ թե միայն որպես մարդու իրավունքների հարց, այլ Հայաստանը պետք է որպես սկզբունք հռչակի, որ Արցախի հարցը հայկական պետության լինելիության հարց է և ըստ այդմ էլ սկսում է նախ՝ երկխոսություն, իսկ հետո վերջինիս կհաջորդեն բանակցությունները: Պրագայից շատ առաջ Նիկոլ Փաշինյանն ասաց, թե նշաձողը պետք է իջեցնենք Արցախի հարցում, և այդ կետից սկսեց ձևավորվել ներկա վիճակը: Այո, արցախցիների խնդիրը մարդու իրավունքների խնդիր է թե՛ անհատական, թե՛ հավաքական իմաստով, և այն զուտ տարածքային խնդիր չէ: Ուրեմն մենք պետք է Արցախի հարցն օրակարգ բերենք այս ձևաչափով: Երկրորդ խնդիրը՝ արցախյան կարգավորման խնդրի նպատակն է, որի արդարացի կարգավորումը կստեղծի տարածաշրջանային կայուն և երկարատև խաղաղություն: Դիվանագիտության մեջ աքսիոմ է, որ «եթե արդարության խնդիրը խախտված է՝ իրավիճակը չի հանգեցնում երկարատև խաղաղության»: Մի շարք միջազգային կառույցների և տարբեր երկրների խորհրդարանների որոշումներն ապացուցում են, որ ՀՀ իշխանությունները պարզապես ստում են, ասելով թե աշխարհը մեզ չի ընդունում:

Փաստորեն, Նիկոլ Փաշինյանի քաղաքականության հետևանքով ատելությունն ավելի խորացավ հայ և ադրբեջանցի ժողովուրդների միջև և ոչ թե հակառակը: Պետք է հաշվի առնել նաև այն, որ արցախցիները փոխհատուցում չեն պահանջում, այլ պահանջում են վերադարձ: Բռնի տեղահանմամբ, էթնիկ զտմամբ, ցեղասպան գործոններով չի կարելի արցախյան հարցը փակել:

Այսօր հայ ժողովրդի պատմության մեջ շատ պատասխանատու հանգրվան է: ՀՀ իշխանություններն օրակարգային հարց դարձրին Արցախի էջը փակելը: 17 կետից բաղկացած խաղաղության փաստաթղթի նախագծում Արցախի անունը իսպառ բացակայում է, և խոսք անգամ չկա արցախցիների իրավունքների մասին: Արցախյան խնդիրը միայն քաղաքական չէ, այլ նաև արժեքային, բարոյական, տնտեսական, անվտանգային, գոյաբանական, ինքնության համար պայքարի խնդիր է: Այն տարածաշրջանային կայուն զարգացման կամ քաոս ստեղծելու գործոն է, որը կարող են հրահրել արտաքին մի շարք ուժեր: Հետևաբար, մենք չպիտի սևեռվենք միայն իշխանության դիրքորոշման վրա, որովհետև ցանկացած իշխանություն ժամանակավոր է և կարող է իր սխալ դիրքորոշման պատճառով անդառնալի կորուստներ պատճառել հայրենիքին: Օրինակ, խաղաղության պայմանագիր փորձել կնքել առանց միջնորդների, ընդ որում՝ պարտված վիճակում և հաշվի չառնել հակամարտող գերտերությունների, առավել ևս սեփական երկրի ազգային-արժեքային շահերն անմտություն է, ընդ որում՝ թշնամի-հարևանը բարի կամք չունի իրական խաղաղության հասնելու և նույնիսկ քննարկելու Արցախի հարցի լուծման տարբերակները: Այս դեպքում Արցախի էջը փակելը հավասարազոր է մի

այլ էջի բացմանը՝ օրինակ, Սյունիքի կամ էլ Ադրբեջանի կողմից թմբկահարվող, այսպես ասած՝ «Արևմտյան Ադրբեջանի»: Այսինքն, ՀՀ իշխանությունները փակում են մեր էջը և բացում թշնամու թելադրած բոլոր էջերը, որոնք էլ Ադրբեջանի արտաքին ակնկալիքներն են: Իսկ որո՞նք են Ադրբեջանի ներքին ակնկալիքները: Ադրբեջանն իր քաղաքականության հաջողության համար ցանկանալու է հասնել արտաքին լեգիտիմության՝ Արցախի հարցը պետք է պատշաճ կերպով մատուցել աշխարհին: Դրա համար շատ վտանգավոր է ՀՀ իշխանությունների կողմից ժողովրդին հրամցվող այն գաղափարը, թե մենք մենակ ենք և թույլ: Հիշենք Լևոն Տեր-Պետրոսյանի ժամանակ թևածող՝ «Մեր պաշտպանվածությունը մեր անպաշտպանության մեջ է» կարգախոսը: Այդ գաղափարը մատուցվում է նաև հիմա: Փաստորեն 44-օրյա պատերազմում պարտության պատճառներից է նաև այն, որ կուլ տվեցինք վերոհիշյալ քարոզչական խայծը, քանի որ Արցախին հնարավոր չէր զենքով հաղթել: ՀՀ իշխանություններից դե ֆակտո լքված ու պատերազմելով ավելի քան երեք պետությունների դեմ Արցախը կորցրեց իր տարածքի մոտ 30 տոկոսը, իսկ 70 տոկոսը հանձնվեց թշնամուն գրչի հարվածով: Վերոհիշյալ քարոզչության հիմնական թեզերը հետևյալն էին. մենք անպաշտպան ենք և մեզ դավաճանել են: Իսկ 2023 թ. սեպտեմբերի 19-ի պատերազմին նախորդեց 10-ամյա շրջափակումը, ՀՀ զինվորների դուրս բերումը և Արցախին անպաշտպան թողնելը, ընդ որում, այդ պատերազմում միայնակ մնացած Արցախից թշնամուն հաջողվեց, ինչպես նշեցինք, գրավել ընդամենը 7 գյուղ: Տեսնելով, որ պատերազմով հնարավոր չէ անկոտրում Արցախին ծնկի բերել, գործի դրվեցին քաղաքական խարդավանքները՝ ՀՀ իշխանությունների մասնակցությամբ: Արցախը չդիմացավ թիկունքից դավաճանական հարվածին, և 2023 թ. սեպտեմբերի 20-ին ավարտված պատերազմից յոթ օր հետո՝ սեպտեմբերի 27-ին սկսվեց արցախցիների բռնագաղթը. ունեցանք այն, ինչ որ ունենք:

Փաստ է, որ ռուսական խաղաղապահ ուժերն իրենց խնդիրը չեն կատարել, և դա տապալված առաքելություն էր, բայց նաև պետք է նշել, որ վերջին օրերին բռնագաղթը կարող էր լինել ցեղասպանության ցայտուն դրսևորումով, ինչպես հաճախ նշում էր Նիկոլ Փաշինյանը, և այս կարճ ժամանակաընթացում խաղաղապահ ուժերն ունեցան ուրույն դրական դերակատարություն:

Ինչպե՞ս վերացնենք այս վիճակը, և ով պետք է այն շտկի: Լուծումը հետևյալն է.

- ՀՀ նոր կառավարությունն իր համապատասխան արտասահմանյան պատվիրակությունների կազմում պարտադիր պետք է ընդգրկի արցախցի դիվանագետների:
- Իշխանության համար պայքարող բոլոր կուսակցությունների ծրագրերում պետք է ներառվի Արցախի հարցի լուծման տեսլականը:
- Արցախի համար պայքարը պետք է դառնա յուրօրինակ մանիֆեստ բոլորի համար: Վերոհիշյալ պարագայում հայ ժողովրդի համար աքսիոմա կդառնա այն գաղափարը, որ Ադրբեջանի նկրտումները չեն ավարտվում Արցախով, հետո կշարունակվի անկլավներով, Սյունիքով, Սև լճով, Ջովքով, Գեղարքունիքի սահմաններին մոտենալով, Վայքով, ռուսական և իրանական գազի կասեցումով ու ադրբեջանական գազի ներմուծումով, և այս գործընթացն անվերջ շարունակվելու է, իսկ այսօրվա քաղաքականությամբ ՀՀ իշխանությունները յուրովի «հրավիրում» են թշնամուն իր նպատակներն իրականացնելու, որովհետև այդ քայլերը չկասեցնելու դեպքում կդրվի Հայաստանի վախճանի սկիզբը: Բոլորիս պարզ է, որ փոքր պետությունները, երբ սկսում են հակադրվել մեծերին, կործանվում են: Պատկերացնենք օրինակ, ռուսական մատակարարման փոխարեն գազի մատակարարում Ադրբեջանից: Ուկրաինայի նման մեծ պետությունը փորձեց նման ճանապարհով գնալ, և դրա հետևանքները ակնհայտ են:

Հետևաբար, ոչ միայն Արցախի ազատագրման, այլև կործանման ճանապարհի վրա գտնվող Հայաստանի փրկության ու հզորացման միակ պայմանը համահայկական կոնսենսուսն է, ազգային վերածնունդը և իշխանափոխությունն ու ազգային-ժողովրդավարական կառավարության կազմումը: ■

Նախիջևանը համաթուրանական և գլոբալ ծրագրերի «խաչմերուկում»

Արմեն Մարուքյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ինչպես հայտնի է, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Հայաստանից ապօրինաբար օտարվեցին հայ ժողովրդի համար ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներ. Կարսի մարզը և Սուրմալուի գավառը փոխանցվեցին Թուրքիային, իսկ Նախիջևանը հանձնվեց Ադրբեջանի խնամատարությանը:

Հետխորհրդային շրջանում բավական անդրադարձ է կատարվել հիշյալ փաստաթղթերի բովանդակությանը, քննարկվել են դրանց միջազգային պայմանագրային իրավունքի կոպիտ խախտումներով կնքված լինելու և Թուրքիայի կողմից այդ պայմանագրերի դրույթները խախտելու հարցերը: Սակայն 2020 թ. Արցախյան պատերազմի, ինչպես նաև 2023 թ. Ադրբեջանի հերթական ագրեսիայի և Արցախի հայաթափման հետևանքով ի հայտ են եկել նոր հանգամանքներ, որոնք անհրաժեշտ են դարձնում վերստին անդրադառնալը այդ հարցերին:

Թուրքիայի անմիջական աջակցությամբ 44-օրյա պատերազմի ընթացքում Արցախի Հանրապետության որոշ տարածքներ բռնազավթելուց, ինչպես նաև 2020 թ. նոյեմբերի 9/10-ի եռակողմ հայտարարությամբ ու դրանից հետո զիջված տարածքների հետևանքով Հայաստանի Սյունիքի մարզը սահմանակից դարձավ Ադրբեջանին: Դրանից հետո Բաքուն Մեղրիի շրջանով Արցախի օկուպացված տարածքների և Նախիջևանի միջև ցամաքային հաղորդակցություն ստանալու պահանջ ներկայացրեց Հայաստանին,[1] որը հետագայում վերաձևակերպեց որպես «Զանգեզուրի միջանցք»՝ նպատակ հետապնդելով Հայաստանից արտատարածքային չվերահսկվող ցամաքային կապ ստանալ Նախիջևանի հետ:

Այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքով» Նախիջևանի հետ հաղորդակցության միջազգային տարանցիկ կապ ապահովելու Թուրքիայի և Ադրբեջանի պահանջը տեղավորվում է ինչպես Չինաստանի «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» գլոբալ կոմունիկացիոն նախաձեռնության, այնպես էլ թուրքական «Թուրան» նախագծի «Միջին միջանցքի» շրջանակներում և բարձրացնում է Նախիջևանի տարածքի նշանակությունը ոչ միայն տարածաշրջանային, այլև աշխարհաքաղաքական մակարդակով: Ուստի, պատահական չէ, որ Ադրբեջանի իշխանությունները սկսեցին հետևողական քայլեր կատարել Նախիջևանի Ինքնավար Հանրապետության կարգավիճակի և կառավարման համակարգի փոփոխության ուղղությամբ:

Նախիջևանը Թուրքիայի համաթուրանական ծրագրերում

Ինչպես հայտնի է, Կարսի մարզը և Սուրմալուի գավառը Թուրքիային զիջելուց բացի, 1921 թ. Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածով Նախիջևանը հանձնվեց Ադրբեջանի խնամակալությանը, պայմանով, որ վերջինս այն չի զիջի երրորդ պետությանը[2] (այսինքն՝ Հայաստանին): Այս դրույթները միջազգային իրավունքի jus cogens (իմպերատիվ), այսինքն՝ պարտադիր ու անբեկանելի նորմի խախտում են:[3]

Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածը հետագայում վերահաստատվեց 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրված փաստաթղթի 5-րդ հոդվածով, որում մասնավորապես նշվում էր, որ «Թուրքիայի կառավարությունը և Խորհրդային Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունները համաձայն են, որ Նախիջևանի մարզը, տվյալ պայմանագրի 3-րդ հավելվածում նշված սահմաններում, Ադրբեջանի խնամակալության ներքո վերածվի ինքնավար տարածքի»:[4] Այս ձևակերպմամբ արձանագրվում էր, որ Նախիջևանը Ադրբեջանին փոխանցվող սովորական տարածք չէ, այլ կողմերը համաձայնվում են այն Ադրբեջանի խնամակալության տակ փոխանցել միայն հատուկ՝ ինքնավարության կարգավիճակով: Հոդվածի ձևակերպումներից անմիջականորեն բխում

է, որ Նախիջևանի կարգավիճակի միակողմանի որևէ փոփոխություն բացառվում է, և որ դա կարող է կատարվել միայն հոդվածում նշված շահագրգիռ պետությունների՝ Թուրքիայի, Հայաստանի և Ադրբեջանի համաձայնությամբ:

Եթե Նախիջևանը Ադրբեջանին փոխանցելու մասին պայմանագրի 3-րդ հոդվածը համադրենք Սուրմալուի գավառը Թուրքիային հանձնելու փաստի հետ, ապա ակնհայտ է, որ թուրքական կողմը գիտակցաբար համաձայնեց Բաթումի շրջանը փոխանակել Նախիջևանին գրեթե սահմանակից Սուրմալուի գավառի հետ՝ ձգտելով իր ցամաքային սահմանը հնարավորինս մոտեցնել Ադրբեջանի ենթակայության տակ անցնող Նախիջևանի տարածքին: Թերևս, հաշվի առնելով Բաթումի շրջանն իր վերահսկողության տակ վերցնելու Խորհրդային Ռուսաստանի ցանկությունը, թուրքական կողմը հենց ինքն է առաջարկել տարածքների նման փոխանակում, քանի որ դա ուղղակիորեն բխում էր նրա համաթուրանական ծրագրերից:[5]

Թուրքիան չբավարարվեց Նախիջևանը Ադրբեջանի խնամակալության տակ փոխանցելով և սկսեց ջանքեր գործադրել այդ տարածքի հետ իր ցամաքային կապն ապահովելու ուղղությամբ: Անգամ Սուրմալուի գավառն իր տիրապետության տակ վերցնելը չէր կարգավորում այդ խնդիրը, քանի որ Սուրմալուի և Նախիջևանի արանքում սեպի պես խրված էր Խորհրդային Հայաստանի Երևանի գավառի հարավ-արևմտյան փոքր հատվածը, որը Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածում ստացել էր «եռանկյուն գոտի» անվանումը:[6] Մոսկովյան կոնֆերանսի ընթացքում թուրքական կողմի համառության հետևանքով այդ «եռանկյուն գոտին» վերածվեց «վիճելի» տարածքի, որի վերջնական պատկանելության հարցը լուծվելու էր արդեն Կարսի կոնֆերանսի ընթացքում:[7] Կարսում ընթացած բանակցությունների ժամանակ թուրքական կողմի անզիջում պահվածքի, ինչպես նաև Խորհրդային Ռուսաստանի կողմից իրականացվող ճնշման պայմաններում Խորհրդային Հայաստանի պատվիրակությունը հարկադրված համաձայնվեց պահել միայն «եռանկյունի գոտու» Արարատ կայարանից մինչև Երասխ (Արազդայան) ընկած հյուսիսային մասը՝ դրանից հարավ մինչև Գայլի Դրունք վայրն ընկած հատվածը զիջելով Նախիջևանին, այսինքն՝ Ադրբեջանին: Այդպիսով, Արաքսի ձախ ափին գտնվող Ուրմիա գյուղից մինչև Ստորին Կարասու գետի՝ Արաքսին միախառնվելու հատվածում Թուրքիան Նախիջևանի հետ նեղ ցամաքային կապ ստացավ:[8]

Կարսի պայմանագրով Նախիջևանի հետ ստացած 9-10 կմ երկարությամբ սահմանային նեղ շերտը, բնականաբար, չէր կարող գոհացնել Թուրքիային, որն սկսեց ակտիվ քայլեր ձեռնարկել այն ընդլայնելու ուղղությամբ: 1920-30-ական թթ. Իրանի հետ ստորագրված սահմանային պայմանագրերի և տարածքների փոխանակման միջոցով Թուրքիային հաջողվեց վերահսկողություն ստանալ Փոքր Մասիսի շրջանում:[9] Անկախ այն հանգամանքից, որ այդ գործարքներից

իրանական կողմն այլ հատվածներում ավելի մեծ տարածքային ձեռքբերումներ ունեցավ, այդուհանդերձ, թուրքական կողմին զիջվեցին ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներ, որոնցով էապես ընդլայնվեց վերջինիս ցամաքային կապը Նախիջևանի հետ: Փաստացի, իրանական իշխանությունները երկրի երկարաժամկետ, ռազմավարական շահերը զոհաբերեցին կարճաժամկետ հաշվենկատությանը՝ հեռանկարներ բացելով Թուրքիայի համաթուրանական նկրտումների համար:[10]

Նախիջևանը Ադրբեջանի կազմում. խտրական քաղաքականությունը և դրա հետևանքները

Մոսկվայի և Կարսի փաստաթղթերով Նախիջևանին ինքնավար կարգավիճակի շնորհումը, անշուշտ, պայմանավորված չէր տվյալ երկրամասի միայն աշխարհագրական դիրքով, այսինքն՝ Ադրբեջանի հիմնական տարածքից անջատված (էքսկլավ) լինելու հանգամանքով: Ինչպես Նախիջևանին, այնպես էլ Ղարաբաղին ինքնավար կարգավիճակի տրամադրումը ոչ թե Ադրբեջանի բարի կամքի դրսևորում էր, այլ 1921 թ. քաղաքական որոշումների արդյունք, որոնց հիմքում պատմական հայկական այդ տարածքներում հայ բնակչության հազարամյա բնակության իրողությունն էր:

Մոսկվայի և Կարսի պայմանագրով Հայաստանից Նախիջևանը Ադրբեջանին փոխանցելուց հետո ադրբեջանական իշխանությունները սկսեցին իրականացնել հայերի էթնիկ զտման՝ բռնի տեղահանության, ինչպես նաև հայկական մշակութային հուշարձանների ոչնչացման քաղաքականություն:[11]

1960-ական և 1980-ական թվականներին Ադրբեջանի իշխանությունները և տեղի մահմեդական բնակիչները խոչընդոտում էին հայերին այցելել իրենց կրոնական և մշակութային հուշարձաններ՝ այդ կերպ կանխելով նրանց իրավունքները երկրամասի հայկական մշակութային ժառանգության նկատմամբ: Տասնամյակների ընթացքում Ադրբեջանի իշխանությունների կողմից հետևողականորեն իրականացվող խտրական քաղաքականության հետևանքով

Նախիջևանի հայ բնակչությունը գաղթում էր ՀԽՍՀ կամ ԽՍՀՄ այլ հանրապետություններ: Եթե Ադրբեջանի վերահսկողության տակ անցնելու պահին Նախիջևանի հայերը կազմում էին բնակչության 34.4%-ը, ապա ԽՍՀՄ փլուզման նախօրյակին՝ 1989 թ., նրանց թիվն արդեն նվազել էր մինչև 0.6%:[12] Այս ցուցանիշները վկայում են Նախիջևանի հայ բնակչության նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների կողմից հետևողականորեն իրականացվող խտրական քաղաքականության և դրա հետևանքների մասին: Նախիջևանի հայ բնակչության բռնագաղթեցումն ու հայկական ժառանգության ոչնչացումը մասնագիտական գրականության մեջ ստացել է «էթնիկ զտում», «սպիտակ ցեղասպանություն» կամ «Նախիջևանացում» ձևակերպումները:[13]

Ադրբեջանի հիմնական հատվածից Նախիջևանի աշխարհագրական առումով կտրված լինելը և նրա ինքնավար կարգավիճակը տասնամյակների ընթացքում տեղի իշխանությունների մոտ ձևավորել էին երբեմն կենտրոնից առանձին, ինքնուրույն գործելու քաղաքական ավանդույթներ: Առաջին Արցախյան պատերազմի ժամանակ Ադրբեջանը շրջափակել էր Հայաստանը՝ այդպիսով ինքն իրեն զրկելով Նախիջևանի հետ հաղորդակցությունից: Նախիջևանը հայտնվել էր շրջափակման մեջ, դադարեցվել էին գազի և էլեկտրաէներգիայի մատակարարումը և գնացքների երթևեկությունը:[14] Ա. Էլչիբեյի նախագահության շրջանում (1992-1993 թթ.) Նախիջևանի մեջլիսի ղեկավար Հ. Ալիևը երկրամասում վարում էր կենտրոնից բացարձակապես անկախ քաղաքականություն: Նրան հաջողվեց Նախիջևանը հեռու պահել հայ-ադրբեջանական ռազմական գործողությունների մեջ ներքաշվելուց: Հ. Ալիևի ղեկավարության օրոք Նախիջևանն ավելի սերտ սոցիալ-տնտեսական կապեր ուներ ոչ թե կենտրոնի՝ Բաքվի, այլ հարևան Իրանի և Թուրքիայի հետ, որոնք մատակարարում էին էլեկտրաէներգիա և սնունդ, ինչի հետևանքով երկրամասում մեծանում էր նրանց ազդեցությունը:[15]

Օգտագործելով շիայական գործոնը և նախիջևանցիների տնտեսական կախվածությունը Իրանից, Թեհրանն աստիճանաբար փորձում էր մեծացնել ազդեցությունը Նախիջևանի տեղական ինքնակառավարման մարմինների վրա, ինչը տագնապ առաջացրեց Բաքվում:[16] Ղարաբաղյան առաջին պատերազմի ավարտից հետո էլ Ադրբեջանի հետ ցամաքային հաղորդակցությունն իրականացվում էր Իրանի տարածքով, ինչը վերջինիս հնարավորություն էր տալիս վերահսկել Նախիջևանից Ադրբեջանի հիմնական մաս և հակառակ ուղղությամբ մարդկանց և բեռների փոխադրումները:

1992 թ. մայիսի 28-ին Արաքս գետի վրայով բացվեց «Ումուդ» կամուրջը, որի երկայնքով անցնող մայրուղին Նախիջևանը կապեց Թուրքիայի հետ, ինչի արդյունքում աստիճանաբար սկսեց մեծանալ նաև վերջինիս ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև ռազմաքաղաքական ազդեցությունը երկրամասի վրա:[17]

Նախիջևանի ինքնավար կարգավիճակի փոփոխությունը և կառավարման նոր կարգը

Ի պատասխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման, Ադրբեջանը 1992 թ. որոշում կայացրեց Ղարաբաղի ինքնավար կարգավիճակը վերացնելու մասին: 2020 թ. սկսված Արցախի Հանրապետության տարածքների աստիճանական գրավմանը զուգահեռ Ադրբեջանը ցեղասպանական գործողությունների (շրջափակում և հումանիտար ճգնաժամի ստեղծում) և էթնիկ զտումների (ագրեսիվ հարձակումներով բռնագաղթի պարտադրում) միջոցով Արցախը հայաթափելուց հետո կատարեց վարչական փոփոխություններ՝ իր վերահսկողության տակ անցած հայկական տարածքներն անվանակոչելով «Արևելյան Զանգեզուրի շրջան», իսկ դրա շրջանակներում՝ «Ղարաբաղի տնտեսական շրջան»: «Արևելյան Զանգեզուր» եզրույթի շրջանառումով պաշտոնական Բաքուն, ըստ էության, իր հավակնություններն էր առաջ քաշում Հայաստանի Սյունիքի մարզի նկատմամբ, որն այդ տրամաբանության համաձայն Արևմտյան Զանգեզուրն է:

Այնուհետև Բաքվի ռեժիմն անցավ Նախիջևանի ինքնավար կարգավիճակի վերացմանը: 2025 թ. հուլիսին Ադրբեջանի նախագահը փաստացի փոխեց Նախիջևանի Ինքնավար Հանրապետության կարգավիճակը՝ այն վերածելով Ադրբեջանի սովորական վարչատարածքային միավորի, գործնականում վերացնելով նրա քաղաքական ինքնավարության մնացորդները: Այդ փոփոխությունները նշանավորեցին խորհրդային շրջանում Ադրբեջանում ստեղծված և նույնիսկ անկախությունից հետո պահպանված ինքնավար մոդելի վերացման գործընթացի ավարտը:

Հարկ է նշել, որ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության սուբյեկտայնությունը վերացնելու ուղղությամբ Ադրբեջանի նախագահը նախապատրաստական որոշ քայլեր էր կատարել դեռ Արցախյան 44-օրյա պատերազմից հետո: 2022 թ. նոյեմբերին Նախիջևանի Պետական անվտանգության ծառայությունը և Պետական մաքսային ծառայությունը ուղիղ ենթարկվեցին Բաքվի կենտրոնական իշխանություններին, միաժամանակ ձերբակալվեցին Ինքնավար Հանրապետության մի շարք ներկա և նախկին նախարարներ, նախագահի ճնշման տակ հրաժարական տվեց Նա-

խիջևանի Մեջլիսի ղեկավար Վ. Թալիբովը, ով Իլհամի հոր՝ Հ. Ալիևի հավատարիմ մարդկանցից էր:

Դրանից հետո 2022 թ. դեկտեմբերի 22-ին Նախիջևանում նշանակվեց Ադրբեջանի նախագահի լիազոր ներկայացուցիչ, որին փոխանցվեցին ինքնավար հանրապետության պետական մարմինների նկատմամբ վերահսկողության լայն լիազորություններ:

Հաջորդ քայլերն ուղղված էին նրան, որ օրինական-սահմանադրական տեսք հաղորդվեր Նախիջևանը Բաքվի ռեժիմին ուղիղ և անվերապահ ենթարկեցնելու գործընթացին: Այդ նպատակով համապատասխան փոփոխություններ կատարվեցին Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Սահմանադրության մեջ, որտեղ նշված էր, որ «Նախիջևանի ինքնավարության հիմքերը դրված են 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի գործող միջազգային պայմանագրերով»:[18] Փոփոխությունների հետևանքով նախաբանից վերացվեց Մոսկվայի և Կարսի պայմանագրերի մասին հիշատակումը:[19]

Նախիջևանի սահմանադրությունից միջազգային պայմանագրերի հիշատակումը վերացնելու Ադրբեջանի որոշումը խախտում է նաև տարածաշրջանային հավասարակշռությունը, քանի որ այդ երկրամասի կարգավիճակը հիմնված էր ոչ թե մեկ երկրի ներպետական իրավական ակտերի, այլ մի քանի պետությունների միջև փոխզիջման վրա: Ներկայումս գործող միջազգային այդ փաստաթղթերով էր ապահովվել Ադրբեջանի խնամակալության ներքո Նախիջևանի ինքնավար տարածք լինելու կարգավիճակը:

Նախիջևանի փոփոխված սահմանադրության նախաբանում այժմ ընդգծվում է, որ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը «Ադրբեջանի անբաժանելի մասն է», և նրա կարգավիճակը բխում է 1995 թ. ընդունված Ադրբեջանի Սահմանադրությունից և 1991 թ. անկախության վերականգնման մասին օրենքներից:[20]

Նախիջևանի սահմանադրության մեջ կատարված փոփոխություններով զգալիորեն սահմանափակվում են ինքնավարության բարձրագույն պաշտոնյայի՝ Գերագույն մեջլիսի (խորհրդարանի) նախագահի լիազորությունները: 1998 թ. Նախիջևանի Ինքնավար Հանրապետության սահմանադրության 25-րդ հոդվածի համաձայն, ինքնավար հանրապետության նախարարների կաբինետի ղեկավարն ու անդամները նշանակվում էին Գերագույն մեջլիսի կողմից: Գերագույն մեջլիսի ղեկավարն օժտված էր բավական լայն լիազորություններով, նա ներկայացնում էր ինքնավար հանրապետությունը այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում, նրա ներկայացմամբ էին նշանակվում տեղական իշխանությունների ներկայացուցիչները, դատավորներն ու դատախազները, մարդու իրավունքների պաշտպանը:[21]

Ադրբեջանի Միլլի Մեջլիսի ընդունած «Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հաստատման մասին» նոր օրինագծի համաձայն, Նախիջևանի գործադիր իշխանությունն անմիջականորեն ենթարկվում է Ադրբեջանի նախագահին, որի կողմից նշանակված լիազոր ներկայացուցիչն, ըստ էության, դառնում է գործադիր իշխանության ղեկավար:[22] Նախիջևանի ինքնավար կարգավիճակն այժմ կրում է ձևական բնույթ և դրա վերջին խորհրդանիշների (սահմանադրություն, մեջլիս) վերացումը Բաքվի իշխանությունների կողմից նույնպես ժամանակի հարց է: Այսպիսով, Նախիջևանը վերածվում է Բաքվի ռեժիմի անմիջական վերահսկողության տակ գտնվող սովորական շրջանի՝ առանց արտաքին իրավական հենարանների և ուղիղ ենթարկվում կենտրոնին:

Նախիջևանի միջազգայնորեն հաստատված կարգավիճակը

Հարկ է նշել, որ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերից բացի, Նախիջանի Ինքնավար Հանրապետության կարգավիճակն արձանագրված է նաև Ադրբեջանի նախագահի կողմից ստորագրված միջազգային նոր փաստաթղթերում:

Այսպես, Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների միջև ստորագրված 2020 թ. նոյեմբերի 9-ի Եռակողմ հայտարարության 9-րդ հոդվածում հստակ շեշտված է Նախիջանի Ինքնավար Հանրապետությունը՝ «Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և **Նախիջևանի Ինքնավար Հանրապետության** (ընդգծումը մերն է – Ա.Մ.) միջև տրանսպորտային կապերի անվտանգությունը՝ քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների անարգել տեղաշարժը երկու ուղղություններով կազմակերպելու համար»:[23] Նույնը արձանագրված է անգամ 2021 թ. հունիսի 15-ին թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից ստորագրված տխրահռչակ «Շուշիի հռչակագրում», որի նախաբանում նախ հղում է կատարվում Կարսի պայմանագրին, նշելով, որ վերահաստատվում է հավատարմությունը երկու բարեկամական և եղբայրական երկրների միջև ստորագրված բոլոր միջազգային փաստաթղթերին, մասնավորապես, 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրին:[24]

Դրանից հետո նշվում է, որ «կողմերը հայտնում են, որ Թուրքիան և Ադրբեջանը միավորող Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Ադրբեջանի Հանրապետության **Նախիջևանի Ինքնավար Հանրապետության** (ընդգծումը մերն է – Ա.Մ.) միջև միջանցքի (Զանգեզուրի միջանցք)» բացումը և որպես վերոնշյալ միջանցքի շարունակություն Նախիջևան-Կարս երկաթգծի կառուցումը ներդրում կունենան երկու երկրների միջև տրանսպորտային-հաղորդակցային հարաբերությունների խորացման համար»:[25] Այս քայլերը տեղավորվում են թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից առաջ քաշվող «Զանգեզուրի միջանցքի» շրջանակներում՝

փորձելով ապահովել համաթուրանական ճանապարհի անխափան գործարկումը:

Նույնիսկ 2025 թ. օգոստոսի 8-ին Վաշինգտոնում ԱՄՆ-ի նախագահի ներկայությամբ Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների միջև ստորագրված համատեղ հռչակագրի 3-րդ հոդվածում կողմերը պատրաստակամություն հայտնեցին ջանքեր գործադրել Ադրբեջանի հիմնական մասի և **Նախիջևանի Ինքնավար Հանրապետության** (ընդգծումը մերն է – Ա.Մ.) միջև անխոչընդոտ հաղորդակցությունը Հայաստանի տարածքով՝ ապահովելով վերջինիս փոխադարձ օգուտները միջազգային և ներքին հաղորդակցությունից:[26]

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Նախիջևանի ինքնավար կարգավիճակը վերանայելու որոշումով Ադրբեջանի նախագահը ոչ միայն խախտել է Մոսկվայի ու Կարսի պայմանագրերը, այլև հենց իր կողմից ստորագրած միջազգային իրավական փաստաթղթերը:

Մոսկվայի և Կարսի պայմանագրերի խախտման հնարավոր իրավաքաղաքական հետևանքները

Ադրբեջանի ղեկավարի կողմից Նախիջևանի ինքնավարության կարգավիճակի միակողմանի վերանայումը Մոսկվայի և Կարսի պայմանագրերի համապատասխան դրույթների ակնհայտ խախտում է, ինչը կարող է հանգեցնել այդ պայմանագրի կողմ հանդիսացող պետությունների պատասխան իրավաքաղաքական գործողությունների:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 60-րդ հոդվածում հստակ նշված է, որ պայմանագրի էական խախտումը մասնակիցներից մեկի կողմից մյուսին իրավունք է տալիս այդ խախտումը վկայակոչել պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի դադարեցնելու կամ այն կասեցնելու համար:[27]

Ըստ միջազգային պայմանագրային իրավունքի ընթացակարգերի, Նախիջևանի կարգավիճակը փոխելուց առաջ, ինչը նշանակում է նաև Մոսկվայի և դրանից բխող Կարսի գործող միջազգային պայմանագրերի փոփոխություն, Ադրբեջանը պարտավոր էր այդ մասին պաշտոնապես գրավոր տեղեկացնել պայմանագրի մյուս մասնակիցներին՝ Թուրքիային, Վրաստանին, Հայաստանին և Ռուսաստանին: Ընդ որում, գրավոր փաստաթղթում պետք է նշված լինեն ոչ միայն նման քայլի հիմքերը, այլև ներկայացվեն առաջարկներ պայմանագրի ապագայի վերաբերյալ: Պայմանագրի մասնակից պետությունները պետք է եռամսյա ժամկետում պատասխանեին Ադրբեջանի գրավոր ուղերձին, իսկ եթե կողմերից մեկի ներկայացրած առարկության պահից 12 ամսվա ընթացքում պետությունների միջև ծագած վեճերը բանակցությունների միջոցով չեն լուծվում, ապա կիրառվում են դատական վարույթի ընթացակարգեր ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանում, միջազգային արբիտրաժում կամ այլ ատյաններում:[28]

Այս տեսակետից պետք է նշել, որ Թուրքիան հրապարակայնորեն երբեք չի արձագանքել, ինչից կարելի է եզրակացնել, որ կուլիսային դիվանագիտության շրջանակներում դա նախապես համաձայնեցվել է Անկարայի հետ: Եթե Կարսի պայմանագրի տակ ստորագրած Վրաստանի համար այս հարցն առանձնապես հետաքրքրություն չի ներկայացնում, ապա այն կենսական և զգայուն է ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի համար: Մոսկվայի համար այս հարցն առավել կարևորություն կարող է ստանալ ռուս-ադրբեջանական հարաբերությունների լարվածության համատեքստում, որը գնալով խորանում է և նոր դրսևորումներ է ստանում:

Մոսկվայի և Կարսի պայմանագրերի խախտման ուղղությամբ իրավաքաղաքական գործընթացի նախաձեռնությունն այդ փաստաթղթերի անմիջական մասնակից Ռուսաստանից բացի հետաքրքրություն կարող է ներկայացնել նաև Հայաստանի բնական դաշնակից Իրանի համար, քանզի այսպես կոչված «Զանգեզուրի միջանցք» համաթուրանական ծրագիրը և դրան զուգահեռ Նախիջևանի շուրջ թուրք-ադրբեջանական տանդեմի համաձայնեցված գործողություններն ակնհայտորեն ուղղված են նաև Թեհրանի շահերի դեմ: Ի դեպ, Նախիջևանում թուրքական զինված ուժերի ներկայությունը նույնպես Մոսկվայի և Կարսի պայմանագրերի խախտում է և հավասարապես մտահոգիչ է ոչ միայն Հայաստանի, այլև Ռուսաստանի ու Իրանի համար՝ առավել ևս Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից ներկայումս հետևողականորեն առաջ քաշվող, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» պահանջի առաջադրման համատեքստում: Այս հանգամանքներից ելնելով, կարելի է ակնկալել, որ Թեհրանը միջազգային կառույցներում պետք է, որ աջակցի Հայաստանի կամ Ռուսաստանի հնարավոր նախաձեռնություններին:

Ինչպես հայտնի է, 2025 թ. օգոստոսի 8-ին Վաշինգտոնում ԱՄՆ-ի նախագահի ներկայությամբ «Հայաստանի և Ադրբեջանի միջև նախաստորագրված խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագրի 15-րդ հոդվածի համաձայն, տվյալ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում

Ադրբեջանացված Նախիջևանը

կողմերը պարտավորվել են հետ կանչել միջպետական հայցերը, գանգատները և կասեցնել առկա վեճերը, պարտավորվելով միմյանց դեմ չներկայացնել նոր հայցեր և չներգրավվել համաձայնագրի կողմի դեմ որևէ երրորդ երկրի կողմից ներկայացվող միջազգային իրավական գործընթացներում[29]: Ադրբեջանի կողմից համաձայնագրի տեքստում ներմուծված այս կետը բացառապես բխում է նրա շահերից, քանզի Հայաստանի կողմից ներկայացված հայցերի հիման վրա միջազգային դատական ատյանների կողմից արդեն իսկ Բաքվի ռեժիմի դեմ ընդունվել են ժամանակավոր միջոցների վերաբերյալ որոշումներ, իսկ նրա կողմից ներկայացված հայցերը ոչ բավարար հիմնավորվածության պատճառով Հայաստանի համար լուրջ հետևանքներ չեն ունեցել:

Ինչպես հայտնի է, հայկական կողմը տևական ժամանակ հրաժարվում էր ընդունել համաձայնագրի վերջին կետերը, որոնց թվում նաև՝ հայցերը հետ կանչելու մասին դրույթը:[30] Երկու երկրների միջև խաղաղություն հաստատելու ձգտումով պայմանավորված հայկական կողմը երկար քննարկումներից հետո ստիպված գնաց նաև Ադրբեջանի այդ պահանջի բավարարմանը: Հարկ է նշել, սակայն, որ հայկական կողմի էական զիջումներից հետո էլ Ադրբեջանը համաձայնագրի վերջնական ստորագրումը պայմանավորել է Հայաստանին առաջադրվող նոր պահանջների կատարումով,[31] շարունակվում է ագրեսիվ հռետորաբանությունը, պարբերաբար սպառնալիքներ են հնչում Հայաստանի հասցեին: Այս ամենը ողջամիտ կասկածներ է առաջացնում, որ Բաքվի ռեժիմն Հայաստանի հետ իրական խաղաղություն և իրավահավասար հարաբերություններ հաստատելու անկեղծ մտադրություն չունի, այլ ընդամենը փորձում է օգտվել առիթից և առավելագույն զիջումներ կորզել:

Հաշվի առնելով այս իրողությունները, հայկական կողմը պետք է ոչ թե անիրատեսական խաղաղության պատրանքով փորձի բավարարել Ադրբեջանի շարունակական պահանջները՝ հետ կանչելով միջազգային դատական ատյաններ ներկայացված հայցերը, որոնց հիման վրա վերջինիս նկատմամբ արդեն իսկ կայացվել են ժամանակավոր միջոցներ կիրառելու որոշումներ, այլ նոր հայցեր ներկայացնելով փորձի զսպել նրա չդադարող պահանջներն ու ագրեսիվ գործելաոճը: Փորձը ցույց է տալիս, որ Բաքվի ռեժիմին որոշակիորեն զսպում և Հայաստանի նկատմամբ հերթական արկածախնդրություններից ու ագրեսիվ գործողություններից հետ են պահում հենց գերտերությունների, միջազգային կառույցների դիրքորոշումներն ու միջազգային դատական ատյանների որոշումները:

Պետք է գիտակցել, որ Հայաստանի կողմից միջազգային դատական ատյաններից հայցերի հետ կանչելը մի կողմից կչեղարկի Ադրբեջանի դեմ կայացված ժամանակավոր միջոցների արդարացի որոշումները և կկասեցնի այդ գործերով դատավարությունների շարունակումը, ինչին այդքան հետևողականորեն ձգտում է հասնել Բաքվի ռեժիմը: Մյուս կողմից, նման քայլերն էապես կասկածի տակ կդնեն Հայաստանի միջազգային հեղինակությունն ու վարկանիշը և կարող են անվստահություն առաջացնել, եթե վերջինս հետագայում փորձի կրկին դիմել այդ նույն միջազգային դատական ատյաններին:

Այս ամենով հանդերձ, Նախիջևանի հարցում Ադրբեջանի նախագահի հակաիրավական գործողու-

թյունները Հայաստանի կողմից կարող են օգտագործվել Բաքվի ռեժիմի դեմ միջազգային դատական ատյաններում հերթական դատական հայցը ներկայացնելու և դրանից բխող որոշման կայացմանը հասնելու համար:

Եզրակացություն

Այսպիսով, Ադրբեջանի կողմից միակողմանիորեն Նախիջևանի ինքնավար կարգավիճակի վերանայումով խախտվել են ինչպես Մոսկվայի, այնպես էլ Կարսի միջազգային գործող պայմանագրերի դրույթները, ինչն այդ փաստաթղթերի կողմ հանդիսացող Հայաստանին և Ռուսաստանին, ինչպես նաև այդ նախաձեռնության շահառու հանդիսացող Իրանին իրավունք է տալիս ինչպես միջազգային դատական ատյաններում, այնպես էլ միջազգային կազմակերպություններում քննարկման առարկա դարձնել այս հարցը՝ միջազգային հանրության առջև ի ցույց դնելով թուրք-ադրբեջանական տանդեմի համաթուրանական ծրագրի սպառնալիքներն ու հետևանքները:

Ամփոփելով նշենք, որ Հայաստանի կողմից այս ուղղությամբ որևէ քայլ կատարելուն պետք է նախորդի քաղաքական լուրջ նախապատրաստական աշխատանք՝ խորհրդակցություններ անցկացվեն աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային կենտրոնների ու դերակատարների հետ: Գաղտնիք չէ, որ միջազգային իրավական նորմերն ու սկզբունքներն ազդեցիկ տերությունները ծառայեցնում են իրենց շահերն իրացնելու և նպատակներին հասնելու համար՝ երբեմն նաև խախտելով, կամ իրենց ձեռնտու ձևով մեկնաբանելով դրանք: ■

Հղումներ

1 Տես Заявление президента Азербайджана, премьер-министра Армении и президента России 10 ноября 2020 года, http://kremlin.ru/events/president/news/64384

2 Տես Документы внешней политики СССР, т. 3, 1 июля 1920 г. - 18 марта 1921 г., М., 1959, с. 598–599.

3 «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայի 34-րդ հոդվածի համաձայն, պայմանագիրը կարող է պարտադիր լինել միայն այն ստորագրող կողմերի համար, իսկ նույն կոնվենցիայի 35-րդ հոդվածով այլ կողմերի միջև ստորագրված պայմանագիրը երրորդ կողմի համար կարող է պարտավորություն առաջացնել միայն այն դեպքում, երբ վերջինս որոշակիորեն գրավոր ձևով ստանձնել է այդ պարտավորությունը: Տես Международное право в документах, сост. сборника Н. Т. Блатова, М., изд. Юрид. лит., 1982, с. 81.

4 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1917), խմբ. Ջ. Կիրակոսյան, Եր., «Հայաստան» հրատ.,1972, էջ 520:

5 Տես Марукян А., Историко-правовой анализ советско-турецкого Московского договора 1921 года «О дружбе и братстве», Պատմաբանասիրական հանդես, N 1, 2021, с. 3-19.

6 Տես Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 501:

7 Տես Մելքոնյան Ռ., Գեղամյան Վ., Թուրանի ճանապարհի հայկական սեպը. «Զանգեզուրի միջանցքի» հիմնահարցը (20-21-րդ դարեր), Եր., 2025, էջ 46:

8 Տես Զոհրաբյան Է., Նախիջևանի հիմնահարցը (1920 թ. մայիս – 1921 թ. հոկտեմբեր), Եր., 2010, էջ 402-403:

9 Տես Bournoutian G., The Iran-Turkey-Armenia borders as Depicted in various maps, Iran and Caucasus, 2015, Vol. 19 (1), pp. 97-107.

10 Տես Մկրտչեան Ս., Պանթիւրքական հոսանքները ժամանակակից Իրանում, երկրորդ հրատ., Եր., 2019:

11 Տես Armenia and the Karabagh: The Struggle for Unity, ed. by Ch. Walker, Minority Rights publications, 1991, pp. 113-116.

12 Kellogg E.,Cultural Erasure in the Modern Day: The Destruction of Armenian Heritage Sites in Azerbaijan, The Cornell Diplomat - No. 09, Culture and Heritage (Spring 2023), p. 5.

13 Տես Broers L., Armenia and Azerbaijan: Anatomy of a Rivalry, Edinburgh University Press, 2019, pp. 80–82.

14 Տես Джабраилов И., Региональная экономическая политика Азербайджана и Нахчыван, «Журнал европейской экономики», т. 10 (№ 4), Тернополь, 2011, с. 421.

15 Տես О целях фактического упразднения Нахичеванской Автономной Республики, Комментарий Армянского аналитического центра «АРВАК», 25.06.2025, с. 1-5. arvak.am

16 Տես Сваранц А., Конституционные изменения в Нахичеванской автономии, https://journal-neo.su/ru/2025/07/25/konstituczionnye-izmeneniya-v-nahichevanskoj-avtonomii/

17 Տես Джабраилов И., Региональная экономическая политика Азербайджана и Нахчыван, с. 423.

18 Конституция Нахчыванской Автономной Республики (с изменениями и дополнениями по состоянию на 24.04.2018 г.), https://continent-online.com/Document/?doc_id=30600476#pos=331;-46

19 Տես Из Конституции Нахиджевана убрали упоминание о Московском и Карсском договорах, https://news.am/rus/news/889621.html

20 Տես Аракелян Э., Автономии не имеют будущего в Азербайджане: Конституция Нахичевана избавляется от «Карса» и «Москвы», https://www.civilnet.am/ru/news/962384/

21 Տես Конституция Нахчыванской Автономной Республики (с изменениями и дополнениями по состоянию на 24.04.2018 г.), https://continent-online.com/Document/?doc_id=30600476#pos=331;-46

22 Տես Из Конституции Нахиджевана убрали упоминание о Московском и Карсском договорах, https://news.am/rus/news/889621.html

23 Заявление президента Азербайджана, премьер-министра Армении и президента России 10 ноября 2020 года, http://kremlin.ru/events/president/news/64384

24 Опубликован полный текст Шушинской декларации, подписанной между Азербайджаном и Турцией https://ru.trend.az/azerbaijan/politics/3440708.html

25 Նույն տեղում:

26 Text of Declaration Signed by Pashinyan and Aliyev, Asbarez, 8 August 2025, https://asbarez.com/text-of-declaration-signed-by-pashinyan-and-aliyev/

27 Տես Международное право в документах, с. 89.

28 Տես նույն տեղում, էջ 91:

29 Տես «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագիր, https://www.mfa.am/hy/press-releases/2025/08/11/Initialed%20Arm-Az%20Peace%20Agreement%20text/13394

30 Տես Алиев сообщил, по каким вопросам Армения и Азербайджан не достигли соглашения в проекте мирного договора, 18 декабря 2024, https://armenpress.am/ru/article/1207738

31 Տես President Ilham Aliyev gave interview to Azerbaijani media representatives in Washington, 09.08.2025, https://azertag.az/en/xeber/president_ilham_aliyev_gave_interview_to_azerbaijani_media_representatives_in_washington_video-3693079

Գործարքային գիտելիք, հացով պայմանավորված հայրենիք. վտանգավոր ուղերձ ապագայի սերնդին

Անժելա Հարությունյան
Բանասեր, մանկավարժ

Այսօր հայ իրականության մեջ ամեն պահի բախվում ես նույն խնդրին, երբ կրթությունը կորցրել և կորցնում է իր հոգևոր, բարոյական ու հասարակական արժեքը, խորությունը՝ ստեղծելով վտանգավոր աշխարհայացք և ընկալում նոր սերնդի համար:

«Լա՛վ սովորիր, որ լա՛վ ապրես»: Ահա այսպիսի ուղերձ է փակցված Երևանի Տ. Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոցում: Առաջին հայացքից թվում է պարզ, անգամ ճիշտ ու մոտիվացնող, ուղերձ աշակերտների համար, բայց...

Ի՞նչ է նշանակում՝ լավ ապրել, ի՞նչ պիտի հասկանա երեխան այս կարգախոսից՝ նյութական բարեկեցությո՞ւն, ապահովությո՞ւն: Իսկ եթե երեխայի մոտ սովորելը դժվար է ստացվում, երեխան կարող է մտածել՝ ուրեմն ես լավ չեմ ապրելու, ինչը կծնի վտանգի զգացողություն, տագնապ, անհարկի համեմատություններ:

Իսկ ամենավտանգավորն այն է, որ գիտելիքը դառնում է գործարք, այլ ոչ թե արժեք. *սովորում ես՝ փոխարենը ստանում ես լավ կյանք*: Երեխան սկսում է սովորել ոչ թե հետաքրքրությունից, աշխարհը ճանաչելու, բացահայտելու, գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ցանկությունից, ընդհանուրի կյանքում իր նպաստն ունենալու, իր լուման ներդնելու, կյանքում որևէ բան դեպի ավելի լավը, գեղեցիկն ու արժեքավորը փոխելու մղումից դրդված, այլ պարզապես իր ես-ի բարգավաճման՝ բարեկեցության համար: Այդ կարգախոսը հուշում է, թե սովորելը կարևոր է միայն անձնական «լավ կյանքի» համար, բայց ոչ անձի զարգացման, ընդհանուրի բարիքի, հայրենիքի կամ հասարակության զարգացման համար:

Իսկ որոնք են բացասական հետևանքները՝

- կորչում է **կրթության իրական նպատակը**՝ ազատ մտածող, ստեղծագործ, պատասխանատու անձ-քաղաքացի ձևավորելու նպատակը,
- զարգանում է խեղված **աշխարհայացք**, երբ գիտելիքը հավասարվում է միայն անձնական հարմարավետությանը,
- ձևավորվում է **անհանդուրժողականություն ու մրցակցային ագրեսիա**՝ «ես սովորեմ, որ ես լավ ապրեմ, իսկ մյուսի մասին մտածելը բնավ կարևոր չէ»,
- այս միտքը հանգեցնում է **օտարման հասարակությունից** և խորացնում է նյութականացված **մտածողությունը**՝ կյանքի իմաստը իջեցնելով միայն նյութականի մակարդակին:

Լավ ապրելու նպատակի եսապաշտականացման ստվերում է մնում արժանապատիվ ապրելու գաղափարը, որն է՝ դիմացինին օգնելը, աջակցելը, հոգատարությունը՝ հասարակության մեջ արժանապատիվ դիրք ու մասնակցություն ունենալը, բարոյական դիմագծով պիտանի և իրավագիտակից քաղաքացի լինելը, պարտականության ու պատասխանատվության գիտակցությունը նախ՝ քո երկրի, հետո՝ աշխարհի հանդեպ: Արժանապատիվ ապրելը նաև քո ներդրումն ու մասնակցությունն է ընդհանուրի բարգավաճման ու զարգացման գործում:

Ոչ ոք չի քննարկում ուսման կարևորության հարցը, ճիշտ հակառակը՝ սովորելը, լավ սովորելը կենսական է և միշտ պարտադիր, այլ ոչ երբեք նորաձև, ինչը քարոզվում է երկրի ներկայացուցիչ հանդիսացող տիկնոջ կողմից: Ում համար կրթությունն ու նորաձև կոշիկը գտնվում են նույն հարթության վրա, ով թերևս չի ըմբռնել, որ նորաձևությունն ու կրթությունը աղերս չունեն իրար հետ, որ չի կարելի պարզունականացնել կրթության խորքային արժեքը, քանի որ կրթվելը չպետք է լինի միայն ժամանակավոր միտում, այլ մարդու ներքին անհրաժեշտություն ու երկարաժամկետ ներդրում: Այն, ինչը նորաձև է այսօր, վաղը կարող է հնանալ, իսկ կրթությունը անցողիկ երևույթ չէ, այն կոշիկ ու հագուստ չէ, այլ հիմնարար արժեք: Ուստի կրթությունը ոչ թե նորաձև է, այլ անհրաժեշտություն, ու ոչ թե լավ պիտի սովորես, որ լավ

ապրես, այլ լավ պիտի սովորես, որ ձևավորես ազատությունն ու կերտես ապագան, քանի որ սովորելով, գիտելիք ու հմտություններ ձեռք բերելով է, որ մարդը ոչ միայն ճանաչում է իրեն շրջապատող աշխարհը, հասկանում երևույթները, այլև ձևավորվում ու կայանում է որպես մտածող անձ, իրավագիտակից ու կարողունակ անհատ՝ բարոյական բարձր արժեհամակարգով, գիտակցումով ու պատասխանատվության զգացումով: Այլապես խոսքը սովորելը լավ ապրելուն զուգահեռ ներկայացնելու մասին է, ինչը ստվերում է բազմաթիվ կարևոր որակներ, նեղացնում կրթության իմաստը:

Մյուս կողմից, մեր իրականությունը վառ ապացույցն է այն երևույթի, երբ վատ սովորած ու անգամ չկրթված անձն այսօր շատ լավ ու բարեկեցիկ է ապրում (պարզ օրինակը վերջերս ԱԺ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրված անձն է, ով ո՛չ բարձրագույն կրթություն ունի, ո՛չ բավարար մասնագիտական փորձ ու որակներ), իսկ լավ սովորած բազմաթիվ անձինք ոչ միայն չեն գրավել իրենց տեղը, այլև նյութական կարիքի մեջ են: Սա ևս հիասթափեցնող հանգամանք կարող է լինել աշակերտի համար, ում շուրջը բազմաթիվ են նման օրինակները, երբ լավ սովորած անձինք շատ վատ են ապրում: Կամ էլ ստացվում է, որ մեր հասարակության մեջ, մեր երկրում մարդիկ վատ են ապրում, (նշենք, որ Հայաստանում վատ է ապրում ամեն երկրորդ քաղաքացին, դա էլ «մեղմացրած» տվյալներով) ոչ թե անարդար ու կոռումպացված համակարգի պատճառով է, այլ որովհետև վերջիններս ժամանակին լավ չեն սովորել: Թերևս սա էլ միտում է:

Չխոսենք արդեն պարտականությունների մասին, որոնք ոչ մի կերպ չեն արտացոլվում այս բանաձևի մեջ, օրինակ՝ բանակում ծառայելը, հայրենիքի հանդեպ պարտքի գիտակցումը:

«Լավ սովորիր, որ լավ ապրես» արտահայտությունը կրթության իմաստը ներկայացնում է միայն գործնական ու օգտապաշտական տեսանկյունից. կարծես սովորելու նպատակը միայն անձնական բարեկեցությունն է: Բայց կրթությունը շատ ավելի լայն իմաստ ունի. այն ձևավորում է մարդու արժեքները, սովորեցնում է լինել պատասխանատու քաղաքացի, մտածել ոչ միայն իր, այլև հասարակության ու պետության մասին: Եթե մենք սովորելը պայմանավորենք միայն «լավ ապրելու» նպատակով, ապա մղում ենք մարդուն օգտատիրական մտածելակերպի, որտեղ արժեքները, պարտքի զգացումը և համընդհանուրին ծառայելու ցանկությունը հետին պլան են մղվում: Իհարկե, կարելի է լավ ապրել և միաժամանակ չմոռանալ ընդհանուրի մասին, բայց տվյալ արտահայտությունն ինքնին չի առնչվում այդ երևույթի հետ՝ այն սահմանափակում է կրթության իմաստը միայն անձնական շահով:

Հատկանշական է, որ այդ ուղերձը փակցված է հենց այն դպրոցում, որտեղ ընթանում էին ԿՋՆԱԿ հիմնադրամի և Հայաստանում Էստոնիայի միջազգային համագործակցության կենտրոնի (ESTDEV), ինչպես նաև Էստոնիայի Կրթական գիտությունների ինստիտուտի և Տալլինի համալսարանի հետ վերապատրաստումները «Ապագայի դպրոց» և «Դպրոցի առաջնորդ» ծրագրերի շրջանակում:

«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ (ԿՋՆԱԿ). ինչ գեղեցիկ ու վերամբարձ անուն է, թեև մեր ԿԳՄՍ նախարարն այն ամենին, ինչը վերամբարձ է, ասես թե դեմ է, բայց, թերևս, ոչ այս պարագայում: Գեղեցիկ հնչող ու թվում է՝ բովանդակալից ու հիմնարար մի կառույց, որը մեծ առաքելություն ունի: Բայց մեր հասարակական կյանքում ամեն օր դրսևորվող երևույթները բոլորովին այլ պատկեր են ստեղծում: Ցավոք, կրթության գործը ղեկավարող անձինք այնքան զարգացան, որ որոշեցին, թե բոլորովին ավելորդ է Մաշտոցի նկարը և նրա մասին հակիրճ նյութ ունենալ Այբբենարանում, ու հանեցին դրանք, այնքան զարգացան ու նորարար դարձան, որ QR կոդերով հեղեղեցին դասագրքերը, բայց դրանից հետո հիշեցին, որ բջջային հեռախոսները պետք է արգելվեն ուսումնական գործընթացի ժամանակ, քանի որ վերջիններս բացասական ազդեցություն ունեն սովորողների վրա:

Հարց է ծագում, իսկ այս, ինչպես և մի շարք այլ դպրոցների ուսուցիչնե՞րն ինչպես են վերաբերվում իրենց դպրոցի պատին փակցված այս ուղերձին: Ուրեմն ուսուցանող, սերունդ կրթող անձինք ևս համամիտ են, որ սա է ճշմարիտը: Այ սա է ողբերգությունը: Նման ուսուցիչները նսեմացնում են կրթության իմաստը, այն դարձնում ոչ թե արժեք, այլ գործարք, շահի միջոց: Ուսուցիչը, ով չի փորձում աշակերտին սովորեցնել **մտածել, կասկածել, որոնել ճշմարտությունը** նա ուզում է, որ երեխան լավ հարմարվի համակարգին, հաջողի քննություններին, ունենա մասնագիտություն, ստանա աշխատավարձ: Այդ ուսուցիչը չի ձևավորում ազատ, ինքնուրույն մտածող մարդու, այլ՝ **հարմարվող գործավորի**, որը սովորում է ոչ թե հասկանալու, այլ՝ վաստակելու համար: Ուսուցիչը, ով երեխային ասում է՝ «**Լավ սովորիր, որ լավ ապրես**», իրականում ինքն է դարձել այլ **համակարգի գործիք, այնինչ ինքը պիտի լուսավորեր**: Նա կրթությունը տեսնում է որպես **միջոց՝ արդյունք ստանալու համար**, ոչ թե որպես գործընթաց՝ մարդու ձևավորման: Նա հավատում է, թե իր գործը կրթելն է, բայց իրականում նա **դաստիարակում է հարմարեցված, վախկոտ, հաշվարկող մարդու**: Այդպիսի ուսուցիչը սովորաբար իր աշխատանքին էլ մոտենում է **գործնական, բայց ոչ հոգևոր** տեսանկյունից, իսկ երբ կրթությունը կորցնում է իր բարոյական ու մշակութային բովանդակությունը, աղերսվում միայն փողի, հաջողության ու աշխատանքի հետ, **կորցնում է հոգևոր հիմքը**, դառնում է բովանդակազուրկ, սոսկ նյութական կարիքների սպասարկու:

Իրական ուսուցիչը պիտի ասի հակառակը՝ «**Սովորիր, որ ապրես արժանապատիվ, որ ճանաչես աշխարհն ու ինքդ քեզ, հասկանաս, ապրես գիտակցված, դառնաս ավելի լավ մարդ, պահպանես ու զարգացնես մարդկային ու մշակութային արժեքները, կյանքը փոխես դեպի լավը**»:

Ուստի պատահական չէ, որ այսօր ունենք նման որակի հասարակություն՝ եսակենտրոն, ինքամփոփ, հասարակական կյանքի հանդեպ անպատասխանատու, ենթակա ու վախկոտ, պետության կազմաքանդմանը, ամեն քայլափոխի հայկականի ու ազգայինի ոտնահարմանը անհաղորդ, կրավորական, տեսական առումով վեհ գաղափարներ խմբագրող, բայց գործնականում ամուլ:

«Լավ սովորիր, որ լավ ապրես»:

Ակամայից զուգահեռ է առաջանում ՀՀ ներկայիս վարչապետ հանդիսացող անձի՝ ֆեյսբուքյան էջի ետնամասի գրառման հետ՝ ԱՅՍՏԵՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՅՍՏԵՂ ՀԱՑ, ԱՅՍՏԵՂ ՀԱՅՐԵՆԻՔ, ԱՅՍՏԵՂ ԿԱՑ:

Առաջին հայացքից թվում է տարբեր արտահայտություններ են, բայց խորամուխ լինելու դեպքում նկատվում է այն թելը, որը վերից ուղղորդվելով սահուն փաթաթվում է բոլոր օղակների պարանոցին:

Երկու արտահայտությունները մարդկանց սովորեցնում են **կյանքը չափել նյութական չափանիշներով, ոչ թե արժեքներով**: Գիտելիքը դառնում է

գործարքի առարկա, սովորում ես միայն, որ կյանքդ ապահովված լինի, իսկ հայրենիքը վերածվում է սոսկ հաց – պետություն կապի միջոցի: Այսինքն՝ որտեղ ապահովված ես, որտեղ կարող ես հոգալ պահանջներդ, այնտեղ էլ պետությունդ է ու անգամ հայրենիքդ:

Եվ ինչպես երեխան է կորցնում **ներսում ծնված հետաքրքրությունը և ստեղծագործական մոտիվացիան** սովորելու հարցում, չի սովորում մտածել, քննադատել կամ բարոյական ընտրություն կատարել և նրա համար ինչպես սովորելը դառնում է միայն ապագա նյութական ապահովության գործիք, այնպես էլ հայրենիքը ընկալվում է ոչ թե որպես ինքնություն, լեզու, մշակույթ կամ պատմություն, այլ որպես **գործնական պայմանավորվածություն**, որը հնարավոր է փոխել մեկ ուրիշ վայրում վաստակած հացի դիմաց:

Եվ ունենում ենք այն հետևանքը, որ ձևավորվում է ապագա քաղաքացիների **սպառողական, շահամոլ և ծրագրավորված հոգեբանություն**, որոնց պայմաններում գիտելիքը և քաղաքացիական պարտքը նույնացվում են նյութական շահի հետ:

Այս վտանգավոր միտքը սերտորեն շաղկապված է մեր կրթական ու հասարակական միջավայրի հետ, որտեղ պատասխանատու, ինքնագնահատող և մտածող անձի դաստիրակությունը փոխարինվում է **պայմանական գործարքային մոտեցմամբ**:

Այնինչ կրթությունը պետք է դառնա **ինքնաճանաչման, արժեհամակարգի ու արժեքների ձևավորման միջոց**, իսկ հայրենիքը՝ **ինքնության և հոգևոր կապի խորհրդանիշ**:

Այսօր կարևոր է հասկանալ մեկ պարզ բան, երբ գիտելիքն ու հայրենիքը պայմանավորվում են միայն հացով և անձի նյութական ապահովությամբ ու բարեկեցությամբ, դաստիարակվում է **օտարված, ազգային ամեն արժեքից խորթացած, գաղափարազուրկ ու եսակենտրոն սերունդ**, որի համար հոգևոր արժեքներն ու հասարակական պատասխանատվությունը կորցնում են իրենց դերն ու նշանակությունը:

Հայոց ցեղասպանությունը վերապրողների պատմություններն ու հուշերը Կ.Պոլսի հայկական թերթերի էջերում (1918-1919 թթ.)

Մարիամ Հովսեփյան
ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու

1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարից հետո Կ. Պոլսում հայկական թերթերը վերաբացվում են:[1] Հայոց ցեղասպանությունը վերապրողներն իրենց տեսածն սկսում են պատմել այդ պարբերականների էջերում: Դրանք ականատեսների վկայություններ են և սկզբնաղբյուրային նշանակություն ունեն հայ ու օտարազգի հետազոտողների համար: Բնույթով սուբյեկտիվ այդ հուշերն ու վկայություններն օբյեկտիվ պատկերացում են տալիս Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ շրջաններում հայերի ցեղասպանության, հայրենի բնակավայրերից նրանց վտարելու երիտթուրքական իշխանությունների քաղաքականության մասին: Ընդգծենք, որ պոլսահայ մամուլի էջերում տեղ գտած վերապրողների պատմությունները շերտավորված են, քանի որ նրանցից շատերը մի քանի անգամ են ստիպված եղել հեռանալ հայրենի բնակավայրերից:

Այդ հուշերի առաջին շերտում ամփոփված են 1915 թ. տեղի ունեցած հիմնական կոտորածներից և տեղահանությունից փրկվածների պատումներն այն ամենի մասին, ինչը տեսել ու զգացել էին ջարդի կամ բռնի տեղահանության ժամանակ: Դրանց մեջ ամփոփված են վախ, սարսափ, տանջանք, վիշտ, հուսահատություն, անզորություն, հիասթափություն և հույս, որ կվերադառնան իրենց գյուղը կամ քաղաքը, կգտնեն հարազատներին, կփորձեն ապրել՝ վերագտնելով սեփական դիմագիծը:

Վկայությունների երկրորդ շերտում արդեն այն վկայություններն են, որոնք ներկայացնում են երկրորդ կամ երրորդ անգամ կոտորածի ու տեղահանության ենթարկված արևմտահայերը: Նրանք Առաջին աշխարհամարտում ռուսական բանակի առաջխաղացման ընթացքում, ինչպես նաև Մուդրոսի զինադադարից հետո Արևմտյան Հայաստան վերադարձած ցեղասպանությունը վերապրողներն էին, որոնք հույսեր էին կապում մեծ տերությունների, մասնավորապես ռուսական բանակի հաղթանակի հետ՝ մտածելով, թե դրա հետևանքով վերջ կտրվեին հայերի հանդեպ իրականացվող սպանդին ու ջարդին, ավերին ու թալանին:

Վերապրողների հուշերի մեջ առանձին խումբ են կազմում այն պատումները, որոնց մեջ անդրադարձ կա հայրենիքից բռնագաղթած հայերի ճակատագրին: Սրանցում ներկայացվում էին վկայություններ այն մասին, որ Մեծ եղեռնից մազապուրծ բազմաթիվ արևմտահայեր, որոնք ապաստան էին գտել Արևելյան Հայաստանի ու Ռուսաստանի տարբեր բնակավայրերում, սովից, կարիքից, անապահով վիճակից, զանազան հիվանդություններից էին մահանում գաղթականներում կամ բաց երկնքի տակ:[2]

Վկայությունների հաջորդ շերտը տարբեր երկրներում հայտնված գաղթականների տեղավորման, նրանց կարիքների բավարարման, նպաստավորման կամ աշխատանքի տեղավորման, նորմալ կյանքին ինտեգրվելու ջանքերի դժվարին, երկարատև գործընթացի մասին պատմություններն էին: Դրանց թվում կային և՛ երախտագիտության խոսքեր պարունակող, և՛ հայերի ուծացման մտահոգությամբ լեցուն վկայություններ, որոնց մեջ առանձնանում էին օտարազգիների ընտանիքներում ու նրանց հոգևոր-բարեսիրական հաստատություններում, որբանոցներում հայտնված հայ որբերին անվերադարձ կորցնելու մտատանջությունը պարունակող՝ ցեղասպանությունը վերապրողների կողմից արված բազմաթիվ վկայությունները:

Պետք է նշել, որ վերապրողների այս կարգի վկայությունները հիմնականում իրենց տեղն են գտել ոչ միայն պոլսահայ, այլև ընդհանրապես ժամանակի արևելահայ ու արևմտահայ մամուլի էջերում: Մուդրոսի զինադադարից հետո մասնավորապես Կ.Պոլսում հրատարակվող թերթերն ու ամսագրերը, տպագրելով դրանք, փորձել են նպաստել Թուրքիայի մայրաքաղաքում սկսված երիտթուրք պարագլուխների

գործած ռազմական հանցագործությունները բացահայտելու և պատժելու միտումն ունեցող դատավարությունների արդար ընթացքին:

Մեր այս ուսումնասիրության ծիրում ընդգրկել ենք 1918-1919 թթ. ընթացքում վերապրողների վկայություններով առլեցուն «Ճակատամարտ», «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» և «Շանթ» պարբերականների հրապարակումները, որոնք այդ տարիներին ունեին բարձր վարկանիշ ընթերցողների շրջանում:

«Ճակատամարտ» օրաթերթի աշխատակիցները Մեծ եղեռնից մազապուրծ եղած արևմտահայ ճանաչված և հայտնի գրողները, հրապարակախոսները և մտավորականներն էին: Թերթն, առաջին համարներից սկսած, ներկայացրել էր հայ ժողովրդի նկատմամբ թուրքական պետության կողմից մշակված և իրագործված ցեղասպանությունն ապացուցող փաստեր, նաև պատասխանատվության էր կանչել մեղավորներին: «Մեր դատը» խորագրի ներքո տպագրվել էին նյութեր, որոնցում պատկերացում էր տրված արևմտահայության կրած քաղաքական, տնտեսական, նյութական, ֆիզիկական ու բարոյական վնասների մասին: Թերթը «Հայաջինջ սարսափները» կամ «Վերապրողները» խորագրերի ներքո, առաջին համարներից սկսած, տպագրել էր ականատեսների վկայություններ՝ նրանց բնակավայրում կատարված ջարդերի մասին: 1919 թ. այդ պատմություններին զուգահեռ՝ ներկայացվել էին հայերի հերոսական ինքնապաշտպանության դրվագները և ֆիդայիների քաջագործությունները: Չկար «Ճակատամարտի» որևէ համար, որտեղ տպագրված չլինեին նշված անձանց կամ հայ կամավորական ջոկատների ու խմբերի լուսանկարները: Այս կերպ օրաթերթը կարծես փորձել էր ընթերցողներին և թուրքական կառավարող շրջանակներին հասկացնել, թե անկարելի է ոչնչացնել կամ կոտրել հայ ժողովրդի ազատատենչ ոգին: Մեծ է այս կարգի հոդվածների ու լուսանկարների պատմական արժեքը: Դրանք կարելի է օգտագործել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում:

Պոլսահայ վերոնշյալ թերթերի հրապարակումներից երևում էր, որ պատերազմի ավարտից հետո հայ ժողովրդին դեռ սպառնում էին թալանն ու կոտորածները: Թուրքիայում հայահալած քաղաքականությունը չէր փոխվել: Խոսքը մասնավորապես վերաբերում էր իթթիհատականների նկատմամբ հարուցված կեղծ դատավարությանը և իթթիհատական կենտրոններում անցկացվող անարդյունք խուզարկություններին, հայ որբերի ու իրենց տները վերադարձող տարագրյալների իրավունքների ոտնահարմանը: «Ճակատամարտի» կարծիքով՝ ծայրահեղ լավատեսություն էր թուրքական կառավարությունից արդարություն ակնկալելը հայկական կոտորածների պատասխանատուների դատավարությունից, թեև այդ դատավարության ընթացքում բացահայտվել էին բազմաթիվ ոճրագործություններ՝ իրենց կազմակերպիչներով և իրականացնողներով: Այդ փաստերն արտացոլված էին վերոհիշյալ թերթերի էջերում:

Մուդրոսի զինադադարի կնքումը

«Եփրատ գետը կհորդի հայոց դիակներով» նյութում, օրինակ, «Ճակատամարտը» տպագրել էր քննիչ մարմնի կողմից պատրաստված և դատարանում ընդունված ամբաստանագիրը:

Թերթն այն համարել էր պատմական կարևոր վավերաթուղթ և «հերքմնագիր մը բոլոր անոնց դէմ, որ յանդգնութիւնն ունեցան մասնակի քանի մը սպանութիւններ անուանելու հայկական աղէտը»:[3] Փաստվում էր, որ տարագրության ընթացքում զանազան վայրերում և տարբեր ժամանակներում կատարված խժդժությունները երբեք չէին ունեցել տեղական ու առանձնակի հանգամանք, այլ կազմակերպվել և իրագործվել էին «բերանացի և գաղտնի հրամաններով»: Ամբաստանագրում ասվում էր, որ Տրապիզոնի հայերի ջարդը կատարվել էր Թալեաթի դրդմամբ: Ներքին գործերի մասնավոր դիվանի պետ Իհսան բեյը հայտնում էր, թե երբ ինքը Քիլիսի գայմագամն էր, Կ.Պոլսից Հալեպ ուղարկված Աբդյուրահման Նուրի բեյը հետևյալն էր ասել իրեն. «Տարագրութիւնը հայերը բնաջնջելու նպատակով եղած է, ես շփման մէջ մտայ Թալէաթ պէյի հետ և անձամբ իրմէն առի բնաջնջման հրամանները»:[4] Խարբերդի կուսակալ Սապիթ բեյը Նազըմ բեյին էր հղել մի հեռագիր, որտեղ այս հարցումն էր արել. «Ղրկուած հայերուն գործը՝ տարագրութիւնները, լմնցուցի՞ք: Տեղեկացուցէք. վնասակար անձերը կ'ոչնչացուի՞ն, թէ՞ միայն կ'աքսորուին»: Թերթում տպագրված մեկ այլ ծածկագիր-հեռագրում Պոլիսից Մյուֆիտ բեյը գրում էր, որ Իթթիհատի տեղական կառույցի քարտուղարն իրեն հեռագրով խորհուրդ էր տվել քաղաքի ապագա երջանկությունն ապահովելու համար տարագրել այնտեղի հայերին:

«Ճակատամարտը», վերլուծելով այս փաստը, եզրակացնում էր, թե Պոլիսի նման պատերազմական գոտուց հեռու գտնվող վայրում հայերի տարագրությունն իրականացնելն ամենևին ռազմական անհրաժեշտությունից չէր բխել: Ամբաստանագրում մեջբերված էր Խարբերդի կուսակալ Սապիթ բեյից

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

ՕՐԱԹԵՐԹ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՂԱՐԵՆ ՀԱՆՑ ՄԱՐԶԻՆՆԵՐԸ.

ԱՐՄԱՏՍԻՆ ՀԱՅԱՍԱՆԸ 70.000 ՀՈՍ. ԲԱՆՈՒՈՐ

ՀԱՅԱՍԱՆ ԿԱՄԻ

ԱՐՄԱՏՍԻՆ ՀԱՅԱՍԱՆԻ ՇՈՒՐՋ ՄԸ

ԱՅՍՈՒՄԱՆ ԱՐԱՐՈՒՄԸ ԱԿՈՐԴԱՑԻ ՄԷՋ

ԱՄԵՐԻԿԱՅԻՆ ՀԱՅԱՍԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՉԸ

Թալեաթին ուղարկված հեռագիր, որտեղ արձանագրված էր, որ բոլոր ճանապարհները լցված էին «կիներու և տղաներու դիակներով»: Հայոց եղեռնի հետքերը վերացնելու նպատակով Թալեաթը Խարբերդի, Դիարբեքիրի, Ուրֆայի և Դեր Էզ Զորի կառավարիչներին էր ուղարկել ծածկագիր-հեռագրեր, որոնք նույնպես տպագրել էր պարբերականը: Դրանցում գրված էր, որ Թալեաթն այդ պաշտոնյաներին հրամայել էր այրել ճանապարհներին մնացած հայերին պատկանող առարկաները՝ դիակները թաղելով և ոչ թե նետելով գետերը, լճերն ու ձորերը:[5] 1919 թ. մարտի 15-ին «Ճակատամարտ» թերթում կարդում ենք Թուրքիայի ներքին գործերի նախարար Ջեմալ բեյի հայտարարությունն այն մասին, որ Իթթիհատը «ջարդել տուաւ 800.000 հայեր և տարագրեց 400.000 յոյներ»:[6]

«Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» օրաթերթում դեղագործ Գրիգոր Հաճյանը գրում էր, որ իր աչքերով էր տեսել Թալեաթի այն հրամանը, որով կարգադրել էր մեկ ամսականից բարձր երեխաներից մինչև ինսնսուն տարեկան ծերերին կոտորել:[7] Հաճյանը 1915 թ. ապրիլի 24-ին ձերբակալվածների, աքսորվածների շարքում էր եղել, բայց հրաշքով փրկվել էր: «Կարևոր հայտնություն մը» նյութում նա թերթի աշխատակցին ներկայացրել էր իր հետ եղած ձերբակալված անձանց տառապանքի ուղին: Նույն պարբերականի էջերում տպագրված էր հարցազրույց Կոնիայի նախկին կուսակալ Ջելալ բեյի հետ, ում ջանքերով բազմաթիվ հայեր էին փրկվել մահվանից:[8] Այդ նյութում ոչ միայն ներկայացվում էին Կոնիայի հայության բռնագաղթը, թալանը, կոտորածը, այլև վկայակոչվում էին 1915 թ. այդ քաղաքի ոստիկանապետ Սաադ էդ Դինի այս խոսքերն՝ ուղղված տարագրվող հայերին. «Այս կողմերը մէկ հայ չպիտի մնայ, ամէնքդ Միջագետք պիտի երթաք, հոն է այլեւս ձեր տեղը»:[9] Թղթակցի այն հարցին, թե անձամբ իրեն կառավարությունը հայերին բնաջնջելու հրաման տվե՞լ էր, Ջելալ բեյը պատասխանել էր այսպես. «Մեզի եկած պաշտօնական հրահանգը տեղահանութեան կը վերաբերէր, բայց տեղահանութիւնն ալ բնաջնջում մը չէր արդէն»:[10] Ի թիվս այլ բնակավայրերի՝ թերթն անդրադարձել էր նաև Պուրտուրի[11] և Արսլանբեկի[12] հայերի տեղահանության մանրամասներին:

«Ճակատամարտ», «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» և «Շանթ» պարբերականներում վավերագիր-փաստաթղթերը հիմնականում տպագրվել էին 1918-1919 թթ., երբ դեռևս հույս էր փայփայվել, որ հնարավոր էր հասնել Հայ դատի պաշտպանությանը: Այս շրջանում երեք օրաթերթի ուշադրության կենտրոնում էին եղել հետևյալ հարցերը, որոնց անդրադարձել էին առավելապես ականատես վկաների պատմածների միջոցով: Դրանք էին՝ Հայոց ցեղասպանությունն ապացուցող վավերագրերի, գաղտնի փաստաթղթերի, ականատեսների վկայությունները, Թուրքիայում 1918 թ. ստեղծված Հայկական ջարդերի ու տարագրության քննիչ մարմնի աշխատանքի ներկայացումը, Մեծ եղեռնի կազմակերպիչների ու պատասխանատուների փնտրտուքը, վերապրողների իրավունքների, շահերի պաշտպանությունը, կոտորածներից հետո իրենց բնակավայրերը վերադարձող հայերի առջև ծառացած հիմնախնդիրների «լուծման» ուղղությամբ թուրքական կառավարության կողմից կատարվածի վերլուծությունը և այլն:

«Ճակատամարտը» ոչ միայն ներկայացրել էր հայ ժողովրդի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից մշակված և իրագործված հայերի ցեղասպանությունն ապացուցող փաստեր, այլև մեղավորներին պատժի ենթարկելու հարցն էր բարձրացրել:[13] «Լուր տվեք մեզ անոնց մասին» խմբագրականում նշվում էր, թե չորս տարի էր անցել այն օրվանից, ինչ իրենք լուր չունեին հայ ազգի փառավոր զավակներից: «Ո՞ւր տարիք զանոնք, դո՛ւք, որ ձեր ցեղին տխուր արգանդէն չկրցաք մէկ հիւլէն իսկ ստեղծել այն անմահներուն, զորս երամ-երամ իրենց օճախէն և մեր սրտերէն ժողուեցիք ու ղրկեցիք հեռաւոր անապատներ: Դուք, որ մեծ ճիւաղներուն յաջորդեցիք ու բազմեցաք անոնց սեւ աթոռներուն վրայ, ձեզի՛ ենք: Հաշի՛ւ տուէք մեզ՝ մեր մեծ եղբայրներուն մասին»,[14] - կարդում ենք թերթում: «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» թերթում նույնպես նմանատիպ հարց կար՝ ո՞ւր են հայ մտավորականները:[15] Աքսորավայրից ազատված դոկտոր Հովհաննես Մանուկյանը այդ պարբերականում գրում էր, որ 1916 թ. ապրիլին բանտում ինքը լսել էր հսկիչ Խուրշիդ չաուշի պատմությունը հայ մտավորականներից շատերի սպանության մասին անձամբ նրա ձեռքով: Այդ մարդասպանն ասել էր հետևյալը. «Ես Այաշի բանտին մէջ գտնուող 75 հայ մտաւորականներու վրայ հսկիչ էի.

անոնց մէջէն լաւ կը ճանչնամ Շահրիկեան, Ներսէս Զաքարեան, տօքթ. Փաշաեան, կային նաև «Ազատամարտի» խմբագիրներէն: Օր մը կուսակալին հրամանովը անոնցմէ 35 հատը Էնգարէ ղրկուեցան, երկու օր վերջը իմացանք, որ անոնք ջարդուած էին Էնկիւրցի 1200 հայերու հետ: Նոր հրաման մը չուշացաւ մնացեալ 30 հայերուն համար: Առտու մը լուսնալուն պես անոնք ալ որոշեալ ձորակը տարինք: Արդէն մօտակայ գիւղերէն թուրք գիւղացիները կացինով, բրիչով, քարով մեզի կ'սպասէին: Ջարդը սկսաւ, վայնասուն մը և աղիողորմ ճիչեր ձորակը և լեռը կը թնթացնէին: Մէկ ժամէն ամէն բան լմնցած էր, և խորին լռութիւն մը կը տիրեր: Ես միակ բաժին մը ունեցայ. ան ալ տօքթ. Փաշաեանն էր: Նախ՝ աչքերը փորեցի, վերջը վիզը կտրեցի, և ահաւասիկ իր ոսկի շղթան և ժամացոյցը»: Ոճրագործ խօսակիցս սադայելական հրճուանքով մը կը հպարտանար»:[16]

«Ճակատամարտի» «Դեպի մահ» խորագրի ներքո ամփոփված էին ականատեսների վկայությունները հայ մտավորականներից շատերի նահատակության մասին: Բերենք մեկ-երկու օրինակ: 1918 թ. 21-րդ և 25-րդ համարներում ներկայացված էին օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորներ Գրիգոր Զոհրապի ու Վարդգես Սերենկյուլյանի ձերբակալության, աքսորի և սպանության պատմությունները: Շարքի պատասխանատուն արևմտահայ անվանի գրող Երվանդ Օտյանն էր: Նա «Զոհրապ և Վարդգես» նյութում տվել էր Զոհրապի ձերբակալության մանրամասները[17] (թուրքական գրաքննության պատճառով թերթը պարբերաբար փակվում էր և տպագրվում էր այլ անուններով, ի թիվս որոնց նաև՝ «Արիամարտ»-Մ.Հ.):

Նահատակված հայ մտավորականների մասին հուշեր ու վերլուծական նյութեր էին տպագրված 1919 թ. 95-րդ համարից բացված «Անոնք, որ գացին ու չեկան» խորագրի ներքո յուրաքանչյուր կիրակի լույս տեսնող «Ծերուկին հիշատակները (1915-1918)» հոդվածաշարում:[18] Հեղինակը Սարգիս Գլգճյանն էր, ով եղել էր Կ.Պոլսի «Ազատամարտ» օրաթերթի պատասխանատու խմբագիրներից մեկը: Հուշագրության մեջ պահպանված էր դեպքերի ժամանակագրությունը, ներկայացված էին աքսորական հայ մտավորականների առօրյան, խոհերը, վերջին ցանկությունները, նաև՝ պահվածքն իրենց բանտապահների ու միմյանց նկատմամբ: Գլգճյանը կարողացել էր փոքր ծավալի մեջ ստեղծել նրանցից շատերի կերպարները թե՛ որպես անհատ, թե՛ որպես մտավորական: Նրանք ձերբակալությունից որոշ ժամանակ անց հասկացել էին թուրքերի բուն նպատակը՝ շուտով սպանվելու էին: Այնուհանդերձ, հոգեպես մնացել էին անկոտրում: Չանկրի աքսորավայրում անգամ տներ էին վարձակալել, ճաշարան էին բացել իրենց համար, կազմակերպել էին գրական երեկոներ, հիմնել էին փոքրիկ երգչախումբ և հնարավորինս ապրել էին քաղաքակիրթ մարդուն վայել կենսակերպով՝ մնալով հավատարիմ իրենց դավանած սկզբունքներին ու գաղափարներին: Նմանօրինակ պահվածքով զարմանք էին պատճառել թուրք հսկիչներին: «Ցաւի և մտահոգութեան շատ պատճառներ ունինք, բայց հակառակ ասոր, աքսորականներու ամբողջ գաղթականութիւնը կը պահէ ուրախ տրամադրութիւն: Քաղաքին ճիշդ մօտիկէն անցնող գետակին հովանուտ եզերքին վրայ կ'անցնենք օրերը պտոյտով, նարդով և տամայով... Երբեմն կը հեռանանք քաղաքէն, դաշտային պտոյտներ կ'ընենք գետակն ի վեր, ուր կան շատ սիրուն տեսարաններ... Թափ կուտանք վիճաբանութիւններու, ընդմիջուած կատակներով ու երգերով»[19],- պատմում էր Ծերուկը: Ըստ այս հուշագրության հեղինակի՝ ձերբակալվածների մի մասը դեռևս 1915 թ. գարնանը գիտեր, որ սպասվում էին մեծ ձերբակալություններ, նույնիսկ՝ ջարդեր:[20] Թալեաթը Սերենկյուլյանին ասել էր. «Պալքանեան պատերազմի միջոցին մենք տկար էինք, և հայերը մեզի դէմ ելան: Հիմա մենք ուժով ենք և հայոց անանկ հարուած մը պիտի տանք, որ 50 տարի խելքերնին գլուխնին չպիտի գայ: Թեւերնիդ շատ երերցնելով կը քալէք, եթէ կը կարծէք, որ ձեր երեսփոխան ըլլալու հանգամանքովը ինքզինքնիդ ապահով կը զգաք, կը սխալիք»:[21]

«Շանթ» հանդեսը լույս էր տեսել 1911-1915 թթ. և 1918-1919 թթ.: Հրատարակության առաջին շրջանում այն ունեցել էր գրական-գեղարվեստական և գի-



ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Խմբագրապետ
ՄԵՐՍԻԷՆՑԱՆ ՊԱՐՍԵՂԵԱՆ

ԹԻՒ 48

12/25 Հոկտեմբեր 1913

ՀԱՅ ԳԻՐԻ ՏՕՆԸ

413-1513-1913

Քիչ անգամ ազգ մը իր գոյութեան ընթացքին առիթը կ'ունենայ տօնելու այսպան շեղ յոբկեան մը, ինչ որ է Հայ Գիրի ու Տպագրութեան կրկնակ տօնեւորումը:

Բախտաւոր են որ կ'ապրինք այն տեսակ շրջանի մը մէջ՝ երբ բազմաթիւ նակատագրական մտահոգութիւններու եւ ադէտներու մէջէն, առիթը կ'ընծայուի մեզի ազատօրէն փառաւորելու Հայ Գիրը եւ Հայ Տպագրութիւնը:

Քաղաքական մխիթարութիւններէ զրկուած, ստիպուած ենք գրեթէ միեսթարդի երջանկութիւններով օրօրուելու, եւ երազելու գրաւոր յիշատակարանները փառքը:

Մեր ցեղային յիշատակները եւ բնաւորիկ յատկութիւնները իրենց խկութիւնը անտարակոյս կը պարտին այն պատմական մեծ կորոդներուն, որոնք մեզի կատարած են ոսկեդարու մեծ վարպետներուն եւ ոսաւիկ պատմիչներուն կողմէ:

Բանաստեղծական հետաքրքրութիւններու մէջ խորասուզուիլ չենք ուզեր այս անգամ:

Մտածումը պէտք է այսօր տեղի տայ զգացումին:

ՇԱՆԹ՝ հանդէսը կ'ունենայ, իր կարգի մասնակցութեան բաժինը բերած թլալուն համար Հայ Գրականութեան, տօնելու Մեսրոպի տարեւոր հազարեակեցութիւնը եւ Հայ տպագրութեան յորսնարիւրամեայ յոբելեանները:

Ու ասիկա մեծ պատիւ մը կը սեպնենք մեզի համար:

տական ուղղվածություն, իսկ երկրորդում «նախկին բաժինները հարստացել էին նորերով՝ «Հայ պանթեոնը», «Վերապրողները», «Մեր մեծ աքսորականները», «Մեր ազգային վերջին մեծ մարտիրոսները», «Դեպի կյանք» և այլն: 1918-1919 թթ. «Շանթը» դարձել էր գրական-քաղաքական և առավելապես հայապահպանության ու ազգի վերածնության խնդիրներ արծարծող հանդես: Դա պատահական չէր և թելադրված էր Թուրքիայի հասարակական-քաղաքական իրավիճակով: 1918 թ. հրատարակության նոր շրջանի անդրանիկ խմբագրականում գրված էր, թե հանդեսի աշխատակիցների մեծ մասը նահատակվել էր, և «մեր ազգին ապրած զարհուրելի օրերէն վերջը, պարզապէս ծիծաղելի պիտի երեւար զուտ գրական-գեղարուեստական օրկանի մը գոյութիւնը, ինչպէս էր Շանթը»:[22] Պահպանելով գրական-գեղարվեստական ուղղվածությունը՝ «Շանթը» հետապնդել էր նաև Մեծ եղեռնը վերապրողների կողմից «մեր արիւնոտ պատմութիւնը գրելու, ապրելով՝ մահուանը յաղթելու և քանդուած երկիրը վերանորոգելու նպատակները»:[23] Հանդեսում տպագրվել էր Միքայել Շամտանճյանի «Իթթիհատի հայաջինջ նոպան» հուշագրությունը, որտեղ նա հոգեբանական վերլուծության էր ենթարկել հայ մտավորականների մարտիրոսագրությունը և իբրև ականատես վկա ներկայացրել էր աքսորում նրանց կրած զրկանքները, տառապանքները և ապրելու անկոտրում կամքը: Հայ մտավորականների զրկանքների և 1915-1918 թթ. նրանց կյանքի ու գործունեության մասին պատկերացում էին տալիս «Վերապրողները» և «Մեր տեսակցությունները» բաժիններում տպագրված նյութերը: «Շանթի» 1919 թ. ապրիլի 11-ի թիվ 25-26 միացյալ համարն ամբողջությամբ նվիրված էր արևմտահայ գրականության նահատակված սերուցքին: Հանդեսի թե՛ այդ, թե՛ ուրիշ համարներում զետեղված հոդվածներում և հուշերում նրանցից յուրաքանչյուրը երևում էր յուրովի, երևում էր իր խաղացած անփոխարինելի դերով ու տեղով հայ ազգային-գրական կյանքում:

Հանդեսում առանձնահատուկ մեծարանքով էր ներկայացված Ռուբեն Զարդարյանը, ում գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցումը մեծ հաճույք էր «նոյնիսկ իր գաղափարական ու դաւանական հակառակորդներուն համար»:[24] «Շանթը» գտնում էր, թե կար մի ընդհանուր արժանիք, որը միավորում էր Ռ.Զարդարյանին և մյուս նահատակ մտավորականներին. անդավաճան, անձնուրաց ազգասիրությունն ու հայրենապաշտությունը: Ականատեսի պատմածների հիման վրա «Հայ մտավորականությունը աքսորանքի ճամբուն» վերնագրով նյութում էր դա արտացոլվել: Երբ տարսոնահայերը հանդիպել էին իրենց քաղաքով անցնող աքսորյալ 80 հայ մտավորականների հետ (Գ. Զոհրապ, Վ. Սերենկյուլյան, Ռ. Զարդարյան, Է. Ակնունի և այլք), նրանք էին սկսել մխիթարել ժողովրդին. «Մենք նման տառապանքներ ու աքսորներ շատ ենք տեսել: Դուք եղէք գործի, սկզբունքի մարդ և ոչ թէ խօսքի: Մի՛ վհատիք արգելքներու առջեւ, ասպարէզը ձերն է, հետեւեցէք մեզ և մեր ճամբուն: Որքան ատեն դուք ապրիք, ձեր լոյսովը Հայաստան մը պիտի լուսաւորուի»:[25]

Պոլսահայ վերոնշյալ պարբերականներում, ականատեսների վկայություններին զուգահեռ, տպագրվել էին նյութեր, որոնք պատկերացում էին տվել արևմտահայության կրած ֆիզիկական, տնտեսական, նյութական և բարոյական վնասների մասին: «Ճակատամարտ» օրաթերթի «Մեր դատը» խորագրի ներքո զետեղված «Հայուն վնասները» վերլուծական հոդվածում այդ ամենը երևում էր խոսուն թվերի ձևով:[26] «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» թերթն էլ, անդրադառնալով 1917 թ. օսմանյան խորհրդարանում Թալեաթի այն խոսքին, թե իթթիհատական կառավարությունը Թուրքիան հասցնելու էր իր զարգացման ու բարգավաճման գագաթնակետին, փաստում էր, որ այդ ամենին թուրքական պետությունը հասնելու էր հայերին թալանելու միջոցով՝ նրանցից յուրացված հարստության հաշվին:[27] «Հայերուն ձեռքը եղած բոլոր կալուածները, տուները, արտերը, ագարակները, կահ-կարասիէն սկսելով մինչեւ պանքայի մէջ պահուած հարստութիւնները, բոլոր արհեստները, կրթական բոլոր հաստատութիւնները յանկարծ թուրքերու փոխանցուած էին: Երէկուան դատարկապորտ սրիկան այսօր կալուածատէր դարձած, երէկուան դռնապանը այսօր վաճառական դարձած է, երէկուան մերկ, անօթի գիւղացին այսօր ագարակատէր դարձած՝ ոսկիներով կը խաղար: Լէնկթիմուրներու, Ճինկիզխաներու, Սէլիմներու դարերով չկրցածը ինքը քանի մը ամսուան մէջ ըրած

էր»,[28]- այս խոսքերով էր իր վերլուծությունն ավարտել դոկտոր Ա. Նագգաշյանը: Ասվածի վկայությունն էին Արևմտյան Հայաստանի գյուղերից ու քաղաքներից, Օսմանյան կայսրության հայաբնակ բնակավայրերից փրկված հայերի՝ պոլսահայ պարբերականների էջերում տպագրված պատմությունները: Օրինակ՝ «Արիամարտ» օրաթերթում տպագրված «Ատաբազարի հայերը» թղթակցության մեջ ներկայացվում էր այդ քաղաքի հայության հետ կատարվածը:[29] Այստեղ հայերի թիվը 1915 թ. դրությամբ մոտ 20.000-ի էր հասնում, այնինչ կոտորածից ու տեղահանությունից հետո ողջ էր մնացել ավելի քան 5000 ատաբազարցի հայ:[30] Պողոս Հաճյանն ականատեսի պատմածի հիման վրա նկարագրել էր Մուշի հայության ջարդն ու թալանը:[31] Մշեցի վերապրողը վկայում էր, որ Առաջին աշխարհամարտի առաջին տարում թուրքական իշխանությունները զորակոչել էին մշեցի գրեթե բոլոր երիտասարդներին, իսկ ժողովրդի վրա դրել էին ծանր տուրքեր՝ առգրավելով ուտելիքի և սերմնացուի պաշարները: 1915 թ. ամռանը, Վարդավառի կիրակի օրը «անօրէն խուժանը , այր ու կին, մեծ ու պզտիկ, մինչեւ գլուխնին զինուած, մեր գիւղը լեցուեցան, ինչպէս եւ՝ մեր շրջակայ գիւղերը: Գիւղը ալան-թալանի տրուած՝ կ'այրի, գնտակը կարկուտի պէս կը տեղայ: Գիւղին մէջ գտնուող այրերէն ոչ մէկն այլեւս ողջ չտեսայ»:[32] Նույն ականատեսի վկայությամբ՝ Մուշ քաղաքի Զորի թաղը ռմբակոծել էին երեք օր շարունակ, և որևէ տուն կանգուն չէր մնացել դրանից հետո: Տասը օրից նորից էին հարձակվել քաղաքի վրա, հավաքել էին այնտեղ գտնվող բոլոր կանանց ու աղջիկներին: Երիտասարդ գեղեցիկներին առանձնացրել էին իրենց համար, իսկ մնացածներին (ավելի քան 2000 կին ու աղջիկ) Մուշի մոտակա Կառնեն գյուղում այրել էին: Կառնենում Պողոս Խաչատրյանի մարագում այրել էին նաև Սողգոմ և Հունան գյուղերից այդտեղ բերված հարյուրավոր հայ կանանց: Այս ջարդերը ղեկավարել էին Մուշի փոխկառավարիչ Վասիթ բեյը, Մուսա ու Դերվիշ բեյերը, Ֆալամազը, Հազգը Մուսան և այլք: Վասիթ բեյի հրամանով տանջամահ էին արվել Վարդան վարդապետ Հակոբյանը և գերապայծառ Թոփալյանը, ձերբալվել և Հավատավորիկ կոչվող ձորում սպանվել էին Մուշի 600 երևելիները, որոնց իբրև թե Բիթլիս պետք է ուղարկեին:[33] Մարիամ Գոգմանյանն ականատես էր եղել հայրենի Կիրասոնի ջարդերին և թերթում պատմել էր եղելությունը՝ հիշատակելով ալան-թալանի, սպանությունների կազմակերպիչների և ղեկավարողների անունները:[34] Կիրասոնցի տարագրյալ հայուհիներին Ածպտեր գյուղից Աղվանիս ընկած ճանապարհին գտնվող Խավախլխ կոչվող քարանձավում թալանել, բռնաբարել, շատերին սպանել էին կիրասոնցի թուրքերը:[35] Բաղեշցի ականատես վկա Վահրիճ Քենտերյանն էլ ներկայացրել էր Բաղեշի կոտորածը:[36] Այնտեղ ոճիրները կատարվել էին հիմնականում Արաբա անվանվող կամուրջի մոտակայքում: Բաղեշցի տղամարդկանց հիմնականում խումբ-խումբ կոտորելուց և տեղի հայերի ունեցվածքը յուրացնելուց հետո թուրքերը բռնաբարել, հետո աքսորել էին հայուհիներին, որոնց մի մասին միմյանց էին զիջել՝ իրենց ունեցած պարտքերի դիմաց: Հայուհիների մեջ եղել էին անձնասպան եղողներ, որոնք այդկերպ փորձել էին խուսափել թուրքերի կրքերին զոհ գնալուց:[37] Մեկ այլ նյութում ականատեսը ներկայացնում էր Զեյթունի և շրջակա հայկական շուրջ 30 գյուղերի հայաջինջ պատմությունը՝ նշելով, թե այդտեղի 100.000 հայերից ողջ էին մնացել գրեթե 800-ը, իսկ զեյթունցիները՝ երկար, զինված դիմադրությունից հետո էին կոտորվել:[38] Թուրքերն այրել էին քաղաքի վանքը, որի փլատակների տակ նահատակվել էին այնտեղ ապաստանած բազմաթիվ կանայք, ծերեր ու երեխաներ: Ձերբակալել էին Զեյթունի 60 հարուստ և անվանի տղամարդկանց, տարել էին Մարաշ և բոլորին սպանել էին այնտեղի զորանոցի ետնամասում: Զեյթունի մոտակա հայկական գյուղերից տղամարդկանց տեղահանել էին և ողջ-ողջ թաղել էին Մարաշ տանելու ճանապարհին:[39] Նույն ականատեսը, Կիլիկիացի ծածկանունով, վկայել էր Մարաշի ու շրջակա մի քանի հայաբնակ գյուղերի կոտորածի և թալանի մասին:[40] Ձերբակալել և Հալեպ էին քշել Մարաշի հայ 7 մեծահարուստների ընտանիքներին, ապա՝ բնակչության մեծ մասին տեղահանելով՝ ոչնչացրել էին ճանապարհներին:[41] Ֆըն-տըճագ գյուղի բնակիչները որոշել էին դիմադրել: Կես ժամ տևած կռվից հետո նրանք բոլորը սպանվել էին իրենց հարևան թուրք գյուղացիների, ոստիկանական և բանակային ուժերի կողմից: Կենդանի մնացած խլյակներից քչերն էին հասել Սիրիայի անապատների աքսորավայրեր՝ մահանալով սովից և տիֆից:

Եղեռնագործությունից ողջ մնացած հայերից շատերը խուսափել էին վկայություն տալ իրենց գլխով անցածի մասին: Պատճառն այն էր, որ կոտորածների կազմակերպիչ-իրականացնողները Մուդրոսի զինադադարից հետո դեռ ունեին բարձր պաշտոններ: Օրինակ՝ Մարաշի ջարդերի կազմակերպիչ Ճին Գատիրը կամ Գատեր էֆենդին 1919 թ. դրությամբ օսմանյան խորհրդարանի պատգամավոր էր, Կիլիկիայում կոտորածների կազմակերպիչներն ու ղեկավարներն էլ սպառնում էին եղեռնից փրկված հայերին:[42]

Պետք է փաստել, որ Հայաստանի Առաջին հանրապետության հիմնումը հույսեր էր արթնացրել վերապրողների շրջանում, որ մոտ ապագայում պատժվելու էին հայաջինջ քաղաքականության իրականացնողները: «Շանթ» հանդեսի աշխատակազմը համոզված էր, որ արդեն ժամանակն էր լրջորեն հաշվարկելու հայ ժողովրդի կրած մարդկային, հոգևոր ու բարոյական կորուստները: Բնորոշ էր Գևորգ Մեսրոպի «Հայ քաղաքակրթության կորուստները (1914-1918)» ուսումնասիրությունը:[43]

Ժամանակի հրամայականով էր, ասես, որ անգամ թուրքական «Սապահ» թերթն իր 1918 թ. խմբագրականներից մեկում ընդունել էր Հայոց ցեղասպանության փաստը: Այդ խմբագրականը թարգմանաբար տպագրված է «Արիամարտի» նոյեմբերի 28-ի համարի «Մամուլը» բաժնում: Այնտեղ մասնավորապես գրված է հետևյալը. «Սայիտ և Թալէաթ փաշա-

ներու կառավարութիւնները իրենց անիծեալ սիրտէն սոսկալի գաղափար մը ծնած են. պատերազմը պատրուակ ընելով, քրիստոնեաները, մանաւանդ հայերը քշել մէկ նահանգէն միւսը, մինչեւ արաբական անապատները, և այդ տարագրութեան ընթացքին գազանաբար, մարդկային ըմբռնողութենէն դուրս, միջին և ներկայ դարերու մէջ նմանը չտեսնուած ձեւերով սպաննել ոչ միայն այրերն ու երիտասարդները, այլ նաև ծծկեր երեխաները, կիները, ծերերը, վերջապէս՝ հայ ազգը իր արմատէն չորցնել և քանդել»:[44]

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել հետևյալը:

- «Ճակատամարտ», «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» և «Շանթ» պարբերականները, անդրադառնալով ցեղասպանությունը վերապրողների ճակատագրին, ներկայացրել էին մի կողմից՝ նրանց գլխով անցածը, տեսածն ու զգացածը, այդպիսով՝ պատկերացում տալով Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ գյուղերում ու քաղաքներում հայության կոտորածի, թալանի, բռնի արտագաղթի և դրա ընթացքում կատարված ջարդերի, բռնարարքների, հայերի ունեցվածքի կողոպուտի և նրանց պատուհասած ֆիզիկական, հոգևոր տառապանքի մասին, մյուս կողմից՝ անդրադարձել էին վերապրողների առօրյային, նրանց առջև ծառացած խնդիրներին և զինադադարից հետո ազգային մարմինների աշխատանքին:
- Այս ամենին զուգահեռ՝ Կ.Պոլսի վերոհիշյալ հայկական թերթերը, հիմնվելով վերապրողների վկայակոչած փաստերի վրա, բարձրացրել էին արևմտահայության կրած նյութական և հոգևոր արժեքների կորստի ու դրա փոխհատուցման հարցերը:
- Պարբերականների աշխատակիցները կարևորել էին Մեծ եղեռնից փրկվածների տունդարձի, հայկական բնակավայրերի վերաշինության խնդիրները, ինչպես նաև՝ հայկական պետականության շուրջ համախմբվելու անհրաժեշտությունը:

Հղումներ

1 Խառատյան Ա., «Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900-1922)», Երևան, ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ., 2015, էջեր 359-360:
2 «Հայոց պատմություն», Երևան, 2015, «Զանգակ» հրատ., հ. 3, գ. 2, էջեր 535-539:
3 «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1919, թիվ 141:
4 Նույն տեղում:
5 Նույն տեղում:
6 Նույն տեղում, 1919, թիվ 106:
7 «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 1918, թիվ 3354 («Կարևոր հայտնություն մը»):
8 Նույն տեղում, 1918, թիվ 3358 («Հայոց տեղահանությունը. տեսակցություն մը Կոնիայի նախկին կուսակալ Ջելալ բեյի հետ»):
9 Նույն տեղում:
10 Նույն տեղում:
11 Նույն տեղում, 1919, թիվ 3425 («Թե ինչպես անհետացավ Պուրտուրի հայությունը»):
12 Նույն տեղում, 1918, թիվ 3360 («Արսլանբեկի տեղահանությունը»):
13 «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1918, թիվ 8:
14 Նույն տեղում:
15 «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 1918, թիվ 3360 («Ո՞ւր են հայ մտավորականները»):
16 Նույն տեղում:
17 «Արիամարտ», Կ.Պոլիս, 1918, թիվ 21 («Զոհրապ և Վարդգես»):
18 Նույն տեղում, 1919, թիվ 95-210 («Ծերուկին հիշատակները (1915-1918)»):
19 Նույն տեղում, 1919, թիվ 134:
20 Նույն տեղում, 1919, թիվ 101:
21 Նույն տեղում, 1919, թիվ 95:
22 «Շանթ», Կ.Պոլիս, 1918, թիվ 1, էջ 2-3:
23 Նույն տեղում, 1919, թիվ 13, էջ 148:
24 Նույն տեղում, 1919, թիվ 8, էջ 92:
25 Նույն տեղում, 1919, թիվ 25-26, էջ 303:
26 «Ճակատամարտ», 1919, թիվ 48:
27 «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 1919, թիվ 3526 («Մեծն Ֆրեդերիկ և ֆոն Թալեաթ»):
28 Նույն տեղում:
29 «Արիամարտ», Կ.Պոլիս, 1918, թիվ 10 («Ատաբազարի հայերը»):
30 Նույն տեղում:
31 Նույն տեղում, 1918, թիվ 19 («Մուշի հայությունը տեղահան չեղավ, այլ ամբողջովին ջարդվեցավ»):
32 Նույն տեղում:
33 Նույն տեղում:
34 «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1919, թիվ 54 («Կիրասոնի կոտորածը»):
35 Նույն տեղում:
36 Նույն տեղում, 1919, թիվ 45 («Բաղեշի կոտորածը»):
37 Նույն տեղում:
38 Նույն տեղում, 1919, թիվ 40 («100000 հայութենեն հազիվ 800 ծեր և կին կմնան»):
39 Նույն տեղում:
40 Նույն տեղում:
41 Նույն տեղում:
42 Նույն տեղում:
43 Նույն տեղում, 1919, թիվ 11, էջ 128-129:
44 «Արիամարտ», Կ.Պոլիս, 1918, թիվ 8:

Եկեղեցական կառույցի կազմալուծումը. բռնաճնշումները հոգևորականության նկատմամբ

Անի Մելքոնյան
Պատմաբան

Վերջին մեկ տարվա ամենաքննարկվող թեման Նիկոլ Փաշինյանի իշխանության կողմից ահաբեկչական հարձակումներն են հայոց եկեղեցու վրա, ինչը թեև շատերի համար աներևակայելի իրողություն է, բայց հայոց եկեղեցու համար նորություն չէ: Հալածանքներով ու բռնաճնշումներով լեցուն մի այդպիսի ժամանակահատված էլ հայոց եկեղեցին ապրել է 1930-1940-ական թթ., ինչի վերաբերյալ էլ մի փոքրիկ պատմական ակնարկ ենք ցանկանում ներկայացնել: Իհարկե հույս չունենք, թե փաշինյանական վարչակազմը ի վերջո կհասկանա, որ խորհրդային միության նման հսկա բռնապետական կայսրությանը դիմակայած և նրա հետ պայքարում հաղթանակած դուրս եկած հայոց եկեղեցու դեմ ոտնձգությունը գործող վարչակազմի համար ինքնասպանություն է:

Այսպիսով, խոսենք հայոց եկեղեցու նկատմամբ խորհրդային իշխանությունների քաղաքականությունից, եզրակացությունները թողնելով ընթերցողներին:

1930-ականներին բռնաճնշումների ալիք բարձրացրած խորհրդային իշխանության հարվածներն ուղղվեցին նաև եկեղեցու դեմ, բայց հայոց եկեղեցին հայ ժողովրդի կյանքում շատ խոր արմատներ էր գցել, և խորհրդային իշխանությունը ստիպված էր երկարատև պայքար մղել հայոց եկեղեցու դեմ: Ի պատիվ հայոց եկեղեցու և հայ ժողովրդի, չնայած գործադրված հսկայական ջանքերին, կոմկուսն այդպես էլ չկարողացավ եկեղեցին ամբողջապես օտարել հայ ժողովրդից:

Խորհրդային իշխանությունը «հոգևորականությանը դիտում էր որպես հակահեղափոխական և հակախորհրդային տարր, իսկ եկեղեցին՝ նույնպիսի կազմակերպություն»:[1]

Փոխարենը հովանավորվում էր աթեիզմը, կամ՝ այսպես կոչված «գիտական աթեիզմը», հակակրոնական գաղափարներ քարոզող կառույցները գտնվում էին պետության հովանավորության ներքո, իսկ «կրոնի և եկեղեցու դեմ հրապարակային պայքարն ընթանում էր որպես գիտաաթեիստական քարոզչություն՝ գրավոր և բանավոր, Հայաստանի մարտնչող անաստվածների միության (ՄԱՄ) միջոցով»:[2]

Հայաստանում 1920-1930-ական թթ. տպագրվել է 107 անուն գիրք՝ նվիրված կրոնի և աթեիզմի թեմաներին:

1930 թ. նոյեմբերի 6-ին Երևանի քաղաքային խորհուրդը որոշում է ընդունում քանդել Սբ Պողոս-Պետրոս եկեղեցին, ըստ Երքաղխորհրդի՝ «եկեղեցու շենքը չունի ոչ մի ճարտարագիտական արժեք»:[3]

Խորհրդային կառավարության հակաեկեղեցական քաղաքականության հետևանքով «1931 թվականին արդեն, Հայաստանի շատ շրջաններում չմնաց ոչ մի եկեղեցի»:[4]



1930 թ. մայիսին մահացավ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը, և հայոց եկեղեցու համար սկսվեց բարդագույն շրջան: Կաթողիկոսի մահվանը հետևեց «նոր Կաթողիկոսի ընտրությունների կազմակերպման տևական մի ժամանակաշրջան»,[5] խորհրդային իշխանությունները հակված չէին թույլատրելու նոր կաթողիկոս ընտրելու համար գումարել բարձրագույն եկեղեցական ժողով, Անդրպետքաղվարչությունը տեղեկացնում էր որ եկեղեցական ժողովը հետաձգվում է «բարձրագույն վերին ատյանի որոշման համաձայն»:[6]

Սակայն հայոց եկեղեցու լոյալ վերաբերմունքը խորհրդային իշխանությունների նկատմամբ և դիրքը հայ ժողովրդի կյանքում ստիպեցին խորհրդային իշխանությանը գնալու որոշակի զիջումների. «թվարկվում են կաթողիկոսի բոլոր հնարավոր հինգ թեկնածուները, որոնցից ուշադրության է արժանանում արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանը, որպես ընդունելի: «Ենթադրում ենք նրան անցկացնել որպես Կաթողիկոս, նախապես մեկ անգամ ևս ուսումնասիրել նրա անձը, վերջնականապես կցելով մեզ»:[7] Նպատակը հայոց եկեղեցին ոչ բացահայտ կերպով ղեկավարելն էր խորհրդային իշխանությունների կողմից, նախատեսվում էր կաթողիկոսի թեկնածուին հստակեցնելուց հետո Էջմիածնում հրավիրել եկեղեցական ժողով:

Հոգևորականների դեմ բռնաճնշումների վառ օրինակներից մեկը 1931 թ. հունիսի 8-ին Սևանի շրջանում ձերբակալված Եղիշե վարդապետ Շահումյանն է, մեղադրանքում ասվում էր. «կապ հաստատելով Էրիվանի ընդհատակյա «Դաշնակցություն» կազմակերպության և ԿԿ անդամների հետ, փորձել է մտերմիկ հարաբերությունների մեջ մտնել Դաշնակցության արտա-

սահմանյան բյուրոյի հետ Էջմիածնի կաթողիկոսարանի միջոցով, ընդ որում տվել է կազմակերպությանն օգնելու իր համաձայնությունը»:[8] Հոկտեմբերի 7-ին ՊՔՎ կոլեգիայի դատական նիստում Եղիշե Վարդապետն ազատազրկվում է 3 տարի պայմանական և 2 տարի փորձնական ժամկետով:

Գևորգ Ե-ի մահից հետո կաթողիկոսի պարտականությունները կատարում էր կաթողիկոսական տեղակալ՝ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը, որը վատ իմաստով գտնվում էր խորհրդային իշխանությունների ուշադրության կենտրոնում: Երկարատև ձգձգումներից հետո եկեղեցական ժողովը կայացավ 1932 թ. նոյեմբերին: Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Խորեն Մուրադբեկյանը (1932-1938 թթ.):

Խորեն Ա Մուրադբեկյանի ընտրությամբ, երկարատև դադարից ու մաքառումներից հետո, հայոց եկեղեցին ունեցավ կաթողիկոս. ««դաշնակ, ազգայնամոլ», այսինքն՝ մի մարդ, որը մտահոգված էր իր բազմաչարչար ազգի ճակատագրով»:[9]

Խորհրդային իշխանության բնորոշմամբ «դաշնակ-ազգայնամոլ» Խորեն Մուրադբեկյան կաթողիկոսը «առաջադեմ, ձախ հայացքների տեր մարդ էր, ազատատենչ՝ ապստամբ բառի ուղղակի իմաստով, որը երբեք չգնաց իր խղճի և սկզբունքների դեմ»:[10]

Խորեն Ա Մուրադբեկյանին վիճակված էր գործել չափազանց ծանր ժամանակահատվածում, երբ «դաժան ձևով շարունակվում էին հալածանքներն ու բռնաճնշումները կրոնի, եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ, զանգվածորեն փակվում էին եկեղեցիներն ու վանքերը, իսկ կրոնի սպասավորները… զանգվածորեն բանտարկվում ու աքսորվում»:[11] Պետականացվեց եկեղեցու գույքը, փակվեց եկեղեցիների մեծ մասը «1937 թ. վերջի դրությամբ Հայաստանում փակվել էր 800 եկեղեցի»[12], որի վերաբերյալ Խորեն Ա Մուրադբեկյանը՝ ՀԽՍՀ ներքգործժողկոմին գրում է. «ամբողջ Հայաստանում չորս եկեղեցի է մնացել, իսկ 800-ից ավելի եկեղեցիներ փակվել են մեծ մասամբ վարչական եղանակով, որպիսի գործելակերպը վերջերս էլ դատապարտվում է կենտրոնական իշխանության կողմից»:[13] Բռնությունների ենթարկվեցին բազմաթիվ հոգևորականներ. «որոշ տվյալներով 1930-ական թվականներին Հայաստանում բռնաճնշման էին ենթարկվել 161 հոգևորականներ: Նրանցից 91-ի համար կայացվել է գնդակահարության որոշում»:[14]

Շարունակելով պայքարը հայոց եկեղեցու դեմ «1937 թվականին տեղի ունեցած ԽՍՀՄ կենտգործկոմի 7-րդ գումարման 4-րդ նստաշրջանը նույնպես մեղադրեց եկեղեցուն հակախորհրդային գործունեության մեջ «Խորհուրդների ընտրությունների դժվարություններից մեկը կհանդիսանա այն հանգամանքը, որ որոշ տեղերում պահպանված հակախորհրդային տարրերը, գլխավորապես եկեղեցականները սկսել են գլուխ բարձրացնել…Մեր խնդիրն այն է, որպեսզի չգնանք պրովակացիայի և ժամանակին խափանենք նրանց հակախորհրդային աշխատանքը»»:[15]

Ավերիչ հարվածների ենթարկված, անդադար հալածվող և թուլացած հայոց եկեղեցին՝ Խորեն Ա Կաթողիկոսի գլխավորությամբ չէր պատրաստվում դադարեցնել իր գոյությունը, ինչն էլ խորհրդային իշխանություններին ավելի էր զայրացնում և մղում առանձնակի դաժանությամբ եկեղեցու դեմ պայքարի: Կենտրոնից տրված էր հատուկ առաջադրանք՝ վերացնել հայոց եկեղեցին. «1937 թ. դեկտեմբերի 19-ին Հայաստանի ներքգործժողկոմատի նոր ղեկավարությունը Խվորոստյանին, Կոնդակովին, Պետրոսյանին և Իսրայելյանին կառավարական կարևոր խնդիրների օրինակելի կատարման համար պարգևատրեց Կարմիր աստղի շքանշանով: Հայաստանի ներքգործժողկոմատը պետք է կատարեր ևս մեկ «շատ կարևոր գործ»՝

Հայոց եկեղեցու դեմ ուղղված բռնաճնշումներից էր նաև հարկային ծանր բեռի սահմանումը:

Եկեղեցու վրա դրվել էր այնպիսի հարկային բեռ, որ նա ուղղակի չէր կարող վճարել այդքան հարկ: Այդ իրավիճակից դրդված Խորեն Ա Կաթողիկոսը «հայրապետական կոնդակներ հղեց Վ. Խվորոստյանին և Կենտգործկոմի նախագահ Մ. Պապյանին, որոնցում բացատրում էր, որ հնարավոր չէ վճարել այդքան բարձր հարկերը»,[16] իշխանությունները, սակայն, անդրդվելի էին և որոշեցին դատարանի միջոցով եկեղեցուն պարտավորեցնել վճարել. «Վաղարշապատի շրջֆինբաժինը տեղական իշխանությունների գիտությամբ Էջմիածնի վանքին հայց է ներկայացրել հարկը վճարելու մասին, և ժողդատարանը իր 1937 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ պարտավորեցրել է վանքին վճարել հարկերն ու չմուծված պարտքը»:[17]

Հայաստանի Ժողկոմխորհը դիմում է ԽՍՀՄ Ժողկոմխորհին. «Հայաստանի Ժողկոմխորհը գտնում է, որ ժողդատարանի Էջմիածնի վանքի հարկն ու պարտքը գանձելու մասին որոշումը պետք է ի կատար ածել ընդհանուր հիմունքներով, բայց քանի որ կաթողիկոսը կտրականապես հրաժարվում է հարկը վճարելուց, խնդրում ենք այս հարցի վերաբերյալ ձեր ցուցումները»:[18]

Իրականում եկեղեցին ի զորու չէր վճարել այն հսկայական հարկերը, որ պահանջում էին նրանից, և չենք կարծում, որ Հայաստանի ղեկավարները չէին հասկանում դա, պարզապես, ինչպես ասել ենք, ներքգործժողկոմատի առջև խնդիր էր դրված վերջնականապես վերացնել հայոց եկեղեցին, ինչի հնարավորությունը տվեց «հարկերից խուսափելու» կեղծ մեղադրանքը:

Եկեղեցու վերջնական վերացմանն ուղղված գործողությունների իրականացումը դրվեց ներքգործժողկոմատի գաղտնի քաղաքական բաժնի վրա:

«Այդ գործը պետք էր սկսել Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանի ոչնչացումից: Այդպիսով գլխատելով հայոց եկեղեցին»:[19]

Սկսվում են բռնություններն ու հալածանքները Կաթողիկոսի հարազատների ու մտերիմների նկատմամբ. «1937 թվականին «անհետաձգելի գործով» Թիֆլիս կանչվեց Մարգարայի մաքսատան

պետ Սերգեյ Մուրադբեկյանը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի ավագ եղբայրը: Ժամանելուն պես կալանքի վերցվեց և շուտով գնդակահարվեց: Երևանում ՆԳԺ-ն բանտարկեց կաթողիկոսի կրտսեր եղբորը՝ Լևոն Մուրադբեկյանին: Բանտարկված Լևոն Մուրադբեկյանը զոհվեց ՆԳԺ-ի պատերի ներսում»:[20]

Կարճ ժամանակում Ամենայն Հայոց կաթողիկոսը զրկվեց իր մերձավորներից:

«1938 թվականի մարտին Մոսկվայից Երևան ժամանեց հակակրոնական պայքարի գծով «մասնագետ», «Անտիռելիգիոնիկ» ամսագրի աշխատակից Ա. Լոգվինովիչը: Մարտի 27-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի նիստում քննարկվեց հակակրոնական աշխատանքի գծով նրա տեսակետը»:[21]

Հետո մոտեցավ Կաթողիկոսի հետ դատաստան տեսնելու ժամանակը. «1938 թվականի ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը անսպասելիորեն Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանը վախճանվեց»,[22] պաշտոնական վարկածը՝ «սրտի կանգ»:

Որ կաթողիկոսի մահը ամենևին էլ սրտի կանգի հետևանք չէր, փաստում են նրան ծառայած Գևորգ Կլեկչյանի վկայակոչած եղելությունները. «... Երբ անցա մեծ դահլիճ, աչքս ընկան էլեկտրական լարերի կտորտանքները, զարմացա թե այդ կտորտանքները որտեղից են հայտնվել: Լողացնելու ժամանակ մարմնական վնասվածքներ չտեսա, միայն դեմքն էր կապտած, և վզի շուրջը՝ մաշկի տակ երկարավուն շերտ-շերտ կապտավուն հետքեր կային, իսկ հետքերի տակ արյան մանր բծեր»,[23] կաթողիկոսի մարմինը զննած բժիշկ Հայկ Եղիազարյանը արձանագրել է. «Կասկած չկա, կաթողիկոսին խեղդել են»:[24]

Կաթողիկոսի մահվանը խորհրդային ղեկավար շրջանակներն ու մամուլը լռությամբ արձագանքեցին, նույնպիսի լռությամբ էլ տեղի ունեցավ կաթողիկոսի հուղարկավորությունը:

Խորեն Մուրադբեկյանի սպանությունից հետո եկեղեցու դիրքերը զգալիորեն թուլացան, թուլացավ ժողովրդական զանգվածների վրա եկեղեցու ազդեցությունը, սակայն խորհրդային իշխանությունները դրանից հետո էլ շարունակեցին եկեղեցու նկատմամբ հալածանքները: Կաթողիկոսի մահից հետո, օգոստոսի 4-ին խորհրդային Հայաստանի կառավարիչները կայացրին սխալ ու անհիմն որոշում՝ փակել Էջմիածնի վանքը, այն վերածելով թանգարանի, նոր կաթողիկոսի ընտրություններ չանցկացնել և վերացնել հայ հոգևորականության կենտրոն Էջմիածնի կաթողիկոսությունը: Որոշման տակ դրված էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի ստորագրությունը:

Այլ կերպ ասած՝ ամենուրեք և բոլորի մեջ «դաշնակցականներ» փնտրող Հայաստանի կոմունիստական իշխանությունը, հայոց եկեղեցուն «դաշնակիզմի» մեղադրանք էր առաջադրում, իբրև հիմնավորում նշվում էր. «Հանգուցյալ կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանն անձամբ եղել է դաշնակցականների կուսակցության ակտիվ անդամ և «հակահեղափոխական աշխատանքի գծով կապված է եղել Խանջյանի,

Տեր-Գաբրիելյանի և Հայաստանում աջ-տրոցկիստական կենտրոնի մյուս անդամների հետ»:[25] Մեղադրանքներից արդեն իսկ ակնհայտ է դրանց շինծու և անհեթեթ լինելը: Իբրև «դաշնակցական» Խորեն Մուրադբեկյանի ենթադրյալ համագործակցությունը՝ Դաշնակցության գաղափարական թշնամիներ՝ Աղասի Խանջյանի ու Սահակ Տեր-Գարբրիելյանի հետ՝ արդեն իսկ վկայում են, կաթողիկոսին վերագրվող մեղադրանքի կեղծ լինելը:

Կարելի է կարծել, որ Հայաստանի ամբողջ բնակչությունը դաշնակցականներ էին, որոնց շարքերը այդպես էլ չէին սպառվում՝ շուրջ երկու տասնամյակ ձերբակալելով, աքսորելով ու գնդակահարելով:

Իրականությունը, սակայն, այն է, որ խորհրդային իշխանությանը իր բռնությունները հիմնավորելու պատճառներ էին պետք, իսկ «դաշնակիզմը», «տրոցկիզմը» կամ «ժողովրդի թշնամիները» ընդամենը պատրվակ էին:

Այդ աղետալի վիճակում հուսադրող էր Գևորգ Չորեքչյան արքեպիսկոպոսի վճռականությունը. «1938 թվականի ապրիլի 11-ին, կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանի թաղումից հետո, Լենինականից Էջմիածին վերադարձավ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը: Վերադառնալուն պես նա ստանձնեց հայոց եկեղեցու ղեկավարի դերը, դրանով իսկ դառնալով կաթողիկոսի փաստացի տեղապահը»:[26]

Խորհրդային իշխանությունները հնարավոր և անհնար ամեն բան արեցին հայոց եկեղեցին վերացնելու համար, սակայն, երբ 1941 թ. հունիսի 22-ին Ֆաշիստական Գերմանիան հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա, հայոց եկեղեցին գտնվեց իր բարձունքում:

Հուլիսի 5-ին հայոց եկեղեցու Գերագույն հոգևոր խորհուրդը՝ աշխարհի հայերին թշնամու դեմ պայքարի կոչ հղեց. «Երկու շաբաթ է, որ գերմանական զորաբանակները ներխուժել են Սովետական Միության երկիրը՝ ավերելով ու թալանելով մեր հայրենիքը, մահ բերելով մեր ծնողներին, եղբայրներին, քույրերին, զավակներին: Սուրբ Էջմիածնի ծայրագույն հոգևոր իշխանությունն անկարող է անտարբեր ականատես հանդիսանալ, նա հայ եկեղեցու ու հայ ժողովրդի անունից բողոքելով բողոքում է կատարված այս

անարդարության դեմ: Բայց հոգով ուրախ է և մխիթարված, որ այս պատմական վայրկյանին իր հոգևոր զավակներն էլ մյուս ժողովուրդների հետ ոգևորությամբ և ազնվությամբ կատարում են իրենց քաղաքացիական ու պետական պարտականությունները:

Սուրբ Էջմիածինը հորդոր է կարդում նաև արտասահմանի հայության՝ ըստ ամենայնի օժանդակել հայրենիքի մեծ և արդար գործին, նպաստելով նրա հաջող լուծման:

Տեղակալ՝ Ամենայն հայոց հայրապետության Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյան, անդամներ՝ Գերագույն հոգևոր խորհրդի Արսեն արքեպիսկոպոս Ղլտչյան, բժիշկ Հայկ Եղիազարյան, իրավաբան Պետրոս Հովհաննիսյան»:[27]

Շատ չանցած, 1941 թ. հուլիսի 30-ին հայոց եկեղեցին հղում է իր երկրորդ կոչը. «Հայը, բացի Խորհրդային Հայաստանից՝ չունի այլ հայրենիք: Հայը՝ Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կովան, բացի հայ եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն հայոց հայրապետությունը Սբ Էջմիածնի Հայրապետական աթոռով:

…. Աջակցել Խորհրդային Միությանը, նշանակում է աջակցել հայրենիքին:

Խորհրդային Միության հաղթանակը հաղթանակն է նաև հայ ժողովրդի:

Ամեն հայ մարդ, որ նախանձախնդիր է իր հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի բարգավաճման՝ նա կաջակցի, անշուշտ, և կպաշտպանե Խորհրդային Միության»:[28]

Հայրենական պատերազմի սկիզբը ստիպեց խորհրդային իշխանություններին դադարեցնել բռնաճնշումները թե բնակչության, թե եկեղեցու նկատմամբ:

Տանկային շարասյան ստեղծման նպատակով Գևորգ Չորեքչյանը 1943 թ. հունվարին, այդ նպատակով բացված ֆոնդին «փոխանցեց 800 հազար ռուբլու արժողության թանկարժեք իրեր, անգլիական հազար ֆունտ ստերլինգ և հիսուն հազար ռուբլի խորհրդային դրամ»:[29]

Իրեն «ժողովուրդների հայր» հռչակած Ստալինը հիարկե չէր կարող չընդունել այն եկեղեցու օգնությունը, որը ոչնչացնելու համար գործադրել էր ամենանենգ միջոցները: Ստալինը հանգամանքների ճնշմամբ որոշեց որոշակի հանդուրժողականություն դրսևորել կրոնական կառույցների նկատմամբ և 1943 թ. հունվարի 26-ին Էջմիածին ուղարկված հեռագրով հայտնեց, որ թույլատրում է հանգանակությունները «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հիմնադրման համար:

Սա նշանակում էր նախ և առաջ, որ «երկրում իշխող կառավարությունը պաշտոնապես ճանաչում է հայ եկեղեցու գոյության իրավունքը:

Երկրորդ՝ կառավարությունը դեմ չէ, որ եկեղեցին զբաղվի բարեգործությամբ, դրանով իսկ օժանդակություն ցուցաբերելով ֆաշիզմի դեմ պայքարում:

Երրորդ՝ հարձակումները հայ եկեղեցու վրա դադարեցվում են, քանի որ «ժողովուրդների հայր» Ի. Ստալինը իր ձեռամբ պատասխանում է հայոց եկեղեցու ղեկավարին»:[30]

1944 թ. սկսվեց Սուրբ Էջմիածնի իրավունքների վերականգնումը:

1944 թվականի հունվարից սկսեց հրատարակվել «Էջմիածին» ամսագիրը՝ հայոց եկեղեցու Մայր Աթոռի օրգանը: Աստիճանաբար ժողովրդի շրջանում սկսեց վերականգնվել եկեղեցու հեղինակությունը:

Սակայն մինչև Հայրենական պատերազմի ավարտը՝ մնաց եկեղեցական կառույցի չնչին մասը միայն:

Խորհրդային իշխանությունը իսկական պատիժ էր Հայոց եկեղեցու համար:

1945 թ. հունիսի 16-ին Սբ Էջմիածնում, երկարատև դադարից հետո վերջապես մեկնարկեց ազգային-եկեղեցական ժողովը: Հունիսի 22-ին տեղի ունեցավ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը: Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Գևորգ Զ Չորեքչյանը:

Յոթ տարվա դադարից հետո հայոց եկեղեցին վերջապես կաթողիկոս ունեցավ: Նոր կաթողիկոս դարձավ դիվանագիտական բացառիկ ունակություններով օժտված՝ Գևորգ Չորեքչյանը…

Ծանոթագրություններ

1. Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., էջ 527
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում:
4. Ստեփանյանց Ս., Հայ եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք., Եր., 1994., էջ 82:
5. Նույնը., էջ 85:
6. Ղազախեցյան Վ., նշվ., աշխ., էջ 529:
7. Նույն տեղում:
8. Սողոմոնյան Ֆ., Ո՞ր մեղքի համար., էջ 214:
9. Ստեփանյանց Ս., նշվ., աշխ., էջ 93:
10. Նույնը., էջ 94:
11. Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., էջ 531:
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում:
14. Ղազախեցյան Վ., նշվ., աշխ., էջ 532-533:
15. Ստեփանյանց Ս., նշվ., աշխ., էջ 111:
16. Նույնը., էջ 113:
17. Նույնը էջ 114
18. Նույնը., էջ 116:
19. Նույն տեղում:
20. Նույն տեղում:
21. Նույնը., էջ 117
22. Նույնը., էջ 120:
23. Նույն տեղում
24. Ղազախեցյան Վ., նշվ., աշխ., էջ 536
25. Ստեփանյանց Ս., նշվ., աշխ., էջ 24:
26. Նույնը., էջ 137
27. Նույն տեղում
28. Նշվ., աշխ., էջ 139:
29. Նույնը., էջ 140:
30. Նույնը., էջ 147:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ:
2. Ստեփանյանց Ս., Հայ եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք., Եր., 1994
3. Սողոմոնյան Ֆ., Ո՞ր մեղքի համար:

Չհամաձայնելու անխախտելի իրաւունքը

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Ժողովրդավարութեան հիմնական սկզբունքներէն մէկն է, թերեւս՝ ամենէ՛ն հիմնականը, «ո՛չ» ըսելու, չհամաձայնելու, տարակարծիք ըլլալու իրաւունքը: Այդ իրաւունքի բացակայութիւնը ակնառու է եղած պատմութեան սկիզբէն ի վեր՝ մենատիրական ու սակաւապետական երկիրներու մէջ, բռնատիրական կարգերու տակ:

Այսօր, սակայն, մենք ականատես կ՚ըլլանք այդ իրաւունքի ոտնակոխման այլուր, ցարդ «ժողովրդավար» ճանցուած պետութիւններու մէջ, որոնց քաղաքացիներուն մենաշնորհն էր, կը կարծէինք, կարենալ «ոչ» ըսելը:

Այս յօդուածով ներկայ յոռի երեւոյթին պատճառներու որոնումն ու վերլուծումը չէ, որ կ՚ուզեմ ընել. հաւանաբար բազում են անոնք՝ անձնական փառատենչութիւններէն մինչեւ տնտեսական, ընկերային ու քաղաքական շահերու հետապնդումները: Այդ վերլուծումը քաղաքական մեկնաբանները կրնան աւելի հմտօրէն կատարել ու մեզի ըսել, թէ ինչո՛ւ հոս հասանք: Նպատակս վեր առնել է առնչուած ուրիշ երեւոյթ մը, որ ուշադրութիւնս գրաւեց այս օրերուն: Երեւոյթ մը, կամ աւելի ճիշտ՝ ելոյթ մը, որ կրնայ գուցէ մասամբ բացատրել նաեւ ժողովրդավարութեան այս նահանջը:

Խօսքս կը վերաբերի անցնող սեպտեմբեր 10-ին ԱՄՆ-ի քաղաքացի Չարլի Քըրքի (Charlie Kirk) սպանութեան յաջորդած հրապարակումի մը (սեպտեմբեր 19-ին)՝ նոյնպէս ամերիկացի անձնաւորութեան մը՝ Անթոնի Քափիլ Վան Ճոնզի (Anthony Kapel Van Jones) կողմէ:

Մանրամասնեմ՝ նախ ըսելով թէ ո՛վ են այս երկու անձերը:

Երկուքն ալ առնչուած են քաղաքական կեանքին, առաջինը որպէս չափազանց աջակողմեան երիտասարդ զինուորեալ-քարոզիչ, երկրորդը որպէս վերլուծաբան ու քաղաքացիական իրաւանց պաշտպան: Նաեւ երկուքն ալ լրատուական ասպարէզէն, անոնցմէ երէցը՝ Ճոնզը, ըլլալով նաեւ իրաւաբան եւ հեղինակ:

Քրքի սպանութենէն անմիջապէս առաջ անոնք բուռն բանավէճի մէջ եղած են ցեղային ու ոճրային հարցերու շուրջ՝ բաւական խստօրէն իրարու հակաճառելով եւ զիրար պարսաւելով, այն աստիճան, որ Քրքի համակիրները սկսած են մահուան սպառնալիքներ ընել Ճոնզի: «Ամեն բան գիծէ դուրս ելլելու վտանգին տակ էր: Ապա, այս ամենուն մէջտեղը, – կը

Չարլի Քըրք

Անթոնի Քափիլլ Վան Ճոնզ

գրէ Վան ճոնզ ՍիԷնԷնի (CNN) կայքէջին վրայ իր վերոյիշեալ հրապարակումին մէջ, – Չարլի Քըրք ինծի հետ կապուեցաւ: Ան զիս հրաւիրեց, որ երթամ ու իր հետ զրուցեմ իր ներկայացումին ընթացքին: «Հէյ, Վա՛ն», գրեց ան ինծի, «Լուրջ եմ: Շատ գոհ պիտի մնայի, եթէ գայիր ու ներկայացումիս մէջ յարգալից խօսակցութիւն մը ունենայինք ոճիրի ու ցեղի մասին: Ես ազնուաբար պիտի վարուիմ, ինչպէս որ, վստահ եմ, դուն ես: Հարցերուն շուրջ կրնանք տարաձայնիլ՝ համաձայնաբար»: Այստեղ կ'ուզեմ այդ ըսածը տալ իր լեզուով՝ We can disagree about the issues agreeably, ուր բառախաղ մը՝ ալ առկայ է:

Ճոնզ կ'ափսոսայ, որ Քըրքին պատասխան տալէն իսկ առաջ ան սպանուեցաւ, շատ հաւանաբար իր ծայրայեղ խօսքերուն պատճառաւ, այսինքն իրեն զլացուեցաւ խօսելու իրաւունքը, որ «ամերիկեան սրբազան արժէք մը՝ է»: Իր յօդուածին շարունակութեան Վան Ճոնզ կը դատապարտէ իր հակառակորդին սպանութիւնը. «Քաղաքական վայրագութեան տեղ չկայ մեր ընկերութեան մէջ», – կը գրէ ան, նկատելով, որ այդ վայրագութիւնը արդէն քանի ու քանի կեանքեր խլած է ու կը խլէ թէ՛ աջէն եւ թէ՛ ձախէն: «Չարլի Քըրք հակառակ էր գրաքննութեան ու «քաղաքացիական պատերազմի»», – կը յարէ ան: Մինչդեռ, դիտել կու տայ հեղինակը, պետական պաշտօնեաներ կ'օգտագործեն անոր սպանութիւնը գրաքննութիւնը արդարացնելու եւ տարակարծութիւնը լռեցնելու համար: Այդ չէր Քըրքի ուզածը, «ան կը պայքարէր յաւելեալ բարեկրթութեան ի խնդիր, ոչ՝ յաւելեալ վայրենութեան ու թոյնի»:

Վերլուծաբանը իր յօդուածին մէջ այսպէս կը շարունակէ իր մտորումները. «Կը կարծուի, թէ մենք զիրար Կ'ԱՏԵՆՔ հեռատեսիլի վրայ կամ առցանց: Բայց ընդհանրապէս չենք ատեր: Ուժգին կը բանավիճինք: Կը ջանանք ընտրութիւններուն յաղթական դուրս գալ: Այդ ընթացքին երբեմն կը նեղացնենք զիրար: Բայց վնաս չենք ուզեր հասցնել իրարու: Յաւելեալ արիւնահեղութիւն չենք ուզեր մեր երկրին մէջ: Յաւելեալ յուղարկաւորութիւններ չենք ուզեր Ամերիկայի մէջ: [...] Պարզապէս մեր գործն է, որ կ'ընենք եւ մեր կոչումը կը կատարենք լաւագոյն ձեւով, որ կրնանք: Այդ է ամբողջը»:

Նման պարագաներու չեմ կրնար վերստին չյիշել զօրավար Դրոյի ու Լեռ Կամսարի դրուագը: 1918 մայիսի ահեղ կռիւներուն նախօրեակին է. Դրօ կամաւորներ կ'արձանագրէ: Կը ներկայանայ նաեւ Լեռ Կամսար՝ երիտասարդ երգիծաբանը, որ արդէն որոշ համբաւի տիրացած է եւ որ տեւաբար կը քաշքշէ Դաշնակցութիւնը: Դրօ կը մերժէ զինք ճակատ ղրկել: «Դուն մեզի շատ ես հարկաւոր, եթէ քեզի բան մը պատահի, ո՞վ պիտի ըլլայ մեզ ծաղրողը», – կ'ըսէ անոր: Այդ բառերով կամ նման բառերով:

Այսօր կը տեսնենք, թէ ինչպէս իշխանաւորները իրենց հակառակորդները կը խայտառակեն, կը զգետնեն, կը հալածեն, կը կալանաւորեն, կը թունաւորեն ու կ'անյայտացնեն, իսկ անոնց ընդդիմադիր մամուլը կը չէզոքացնեն՝ հետապնդելով անձնական շահեր ու փառքեր: Այդ ապացոյցն է քաղաքացիական մշակոյթի բացակայութեան: Դարերո՛ւ վրայ կ'երկարի այդ բացակայութիւնը, ափսո՛ս: Եւ որքա՛ն կը հակասէ քաղաքակրթութեան յառաջացման այլ մարզերու մէջ՝ արուեստներէն, գիտութիւններէն մինչեւ մարմնամարզն ու այլ ոլորտներ: Եւ այս՝ այլապէս այնքա՛ն յառաջադէմ (կարծուած) երկիրներու մէջ:

Այո՛, սրբազան, անխախտելի իրաւունք մը՝ է «ո՛չ» ըսելու, չհամաձայնելու, տարակարծիք ըլլալու իրաւունքը: Նոյնիսկ սխալելով, նոյնիսկ անտեղի կերպով, նոյնիսկ յետոյ խօսքը ետ առնելու ի գին: Օրէնքով պաշտպանուած իրաւունք մը՝ է այդ, որ ժողովրդավարութեան յենասիւնն է:

Ընթերցողին կը ձգեմ այդ բոլորին եւ մեր անցեալ ու ներկայ իրականութեան միջեւ զուգահեռներ որոնելը ու նման իրավիճակներէ ձերբազատելու միջոցներ գտնելը: ■

Վազգեն Շուշանյան

ՄԱՐԴ ՄԸ ՈՐ ԱՐԱՐԱՏ ՉՈՒՆԻ ԻՐ ՀՈԳԻՈՅՆ ԽՈՐԸ ԱՍՏ ԿԸ ՀԱՆԳՉԻՆ ՀԻՍԱՆԴ ՈՍԿՈՐՆԵՐԸ...

(Հատուած)

Ատելութիւնը, որ պորտիդ եօթը կարելի սերունդներովդ պիտի տանիս, մինչև մահդ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դէմ, ատելութիւն մըն է ուղղուած առողջութեան դէմ, – կեանքի և զգացումներու, գաղափարներու և խոյանքներու: Ձարհուրելիօրէն կը վախնաս մահէն, որովհետեւ մաքուր չէ ակնարկդ, որովհետեւ մահը ի քեզ է արդեն: Ու կը զգաս, որ ան գարշ կը հոտի: Երբեք էութիւնդ չէ զգացած, թէ ուրիշ մահ մը կայ, քիչ մը տրտում՝ ինչպէս բոլոր հրաժեշտները, այլ քիչ մը քաղցր նաեւ: Վերջին ակնարկի մը մէջ՝ կապտել երկրին գեղեցկութիւնը ու ժպտիլ օրուան, որ կը հանգչի: Պիտի ծաղկին ու պիտի ծաղկին մեր երկրին յորդակոհակ ջրերը ու մեր ճամբաներէն ուրիշ հրաշք տղաք պիտի ելլեն՝ արշավելու համար դէպի սէրը: Սիրով ու յաղթութեամբ բաբախուն գրքեր պիտի գրուին ու մեր կեանքը աշխարհին մէջ պիտի թաւալի վերստին նոր որոտումներով, նոր ալեկոծութիւններով:

Ո՞վ եմ ես ու ո՞վ ես դուն՝ Հայոց պատմութեան ու դարերուն դիմաց: Ո՞վ եմ ես ու ո՞վ ես դուն՝ մեր դարաւոր ճիգին ու դարաւոր տառապանքին դիմաց: Հակառակ, որ փոքր է մեր ածուն, հզոր գործեր կատարուած են նաև մեր աշխարհին մէջ: Ու քու եղկելի կշիռդ՝ երբեւիցէ չի կրնար յաւակնութիւնը ունենալ մեզ չափելու եւ պակաս գտնելու: Մարդը մեծ կրնայ ըլլալ միայն՝ երբ կը քալէ ճակատէն, առաջինը՝ ընդունելով բոլոր բեռերն ու բոլոր պատասխանատուութիւնները: Առաջինը՝ ընդունելով ծառայութեան բոսոր դրոշակը: Այսպես կը բարձրանան դէպի աստղերը, կ'ըսէ լատինական առածը: Մարդը մեծ կրնայ ըլլալ միայն՝ խոնարհելով իր սլացիկ հասակը՝ տառապանքին վրայ, ճակատելով մահը՝ խրոխտ հպարտութեամբ մը, ի խնդիր ազատութեան: Մարդը մեծ կրնայ ըլլալ միայն՝ երբ բարձր կը բռնէ արուեստին ու արդարութեան դրոշակը: Դուն մարդ մը եղար, որ դրոշակ չունէր: Մահդ լոկ արկած մը պիտի ըլլայ, վասնզի կը զգամ, որ մեռած ես արդէն: Ու թաղած եմ քեզ հոգւոյս խորը ու գրած տապանաքարիդ վրայ, – Աստ կը հանգչին ոսկորները հիւանդ հայու մը, որ Արարատ չունէր իր հոգւոյն խորը:

ՄԱՐԴ ՄԸ, ՈՐ ԱՐԱՐԱՏ ՉՈՒՆԻ ԻՐ ՀՈԳԻՈՅՆ ԽՈՐԸ, ՊԷՅՐՈՒԹ 1998, ԷՋ 172-173:

Ուսիկանական վայրագությունները
Գյումրիում

ԴՐՕՇԱԿ